


ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ



№ 28 ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
հշ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ

3889

ԵՐԵՎԱՆ
ՆԱԻՐԻ
2018

ՀՏԴ 94(479.25):81՝373.21(479.25)

ԳՄԴ 63.3(52)+81.22-3

Խ 282

Աշխատանքը կատարվել է
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի
Հին դարերի բաժնում:

Խաչատրյան Վ. Ն.

Խ 282 Հայկական հնագույն տեղանունները: Վ. Ն. Խաչատրյան.- Եր.:
Նաիրի, 2018.- 180 էջ:

ՀՏԴ 94(479.25):81՝373.21(479.25)

ԳՄԴ 63.3(52)+81.22-3

ISBN 978-5-550-01825-5

© Խաչատրյան Վ. Ն., 2018

© «Նաիրի» հրատարակչություն» ՓԲԸ, 2018

ԱՌԱՋԱԲԱՆ

Սույն աշխատության մեջ փորձ է արվում բացատրել հնագույն հայկական այն տեղանունները, որոնց արմատները հին հայկական գրավոր աղբյուրներում չեն հանդիպում:

Դրանք համարյա միշտ հայերեն ածանցների կամ բառերի հետ են հանդես գալիս:

Առաջին հերթին լեզվական փաստերով աշխատել ենք տեղանվան մեջ առանձնացնել արմատը: Հետո բերվում է հնդեվրոպական նախալեզվի նույնահունչ վերականգնված բառը: Այնուհետև նշում ենք հայկական հին տեղանուններից այնպիսիները, որոնք նման իմաստ ունեն, որոնք հաստատում են, թե այդպիսի իմաստ ունեցող մայր լեզվի արմատը կարող է գործածվել որպես տեղանուն:

Նշվում են բերված տեղանունների աղբյուրները և մայր լեզվի արմատների վերականգնող հեղինակների աշխատություններն ու նաև հնչյունափոխություններին վերաբերող լեզվաբանների գործերը: Բերված տեղանուններին վերաբերող համարյա բոլոր ածանցներն ու մասնիկները այդ մասնագետների աշխատություններում կան: Ուստի մենք կարիք չենք զգացել դրանց համար նշումներ անել:

Ա

ԱԲ: Գյուղ Ախալցխայի շրջանում (տրբ. Ապ, ՀՏԲ):

Հայկական գրավոր աղբյուրներում նման արմատ չկա, որը օգտագործվեր որպես տեղանուն:

Կարծում ենք, Աբ տեղանունը հնդեվրոպական նախալեզվի *ab-«ջուր, գետ» արմատն է (Рок.):

Այն իր իմաստով հիշեցնում է Սյունիքի Ճահուկ գավառի Ջուր, Ախալցխայի Ջուր, Դերսիմի Գետակ և Սասունի Գետեր հին բնակավայրերի անունները (ՀՏԲ):

Մայր լեզվի նբ-«ջուր, գետ» արմատը հանդիպում է նաև ստորև բերվող հին տեղանուններում:

Աբադադ: Գյուղ Վանա լճի արևմտյան ափի մոտ: Տեղանվան մեջ արմատից հետո հայերենի սեռական հոլովի ցուցիչն է և ապա՝ թուրքերի ավելացրած դադ «լեռ» բառը:

Աբալ: Բնակավայրեր Արդահանի շրջանում և Վանի նահանգի Հեքյարի գավառում, որոնց անվան վերջում հայ. -ադ (հմմտ. կյանք և կենցաղ) ածանցի հին -ալ տարբերակն է:

Աբալան: Գյուղ Ղարադաղի շրջանում: Տեղանվան վերջում նշված -ալ մասնիկից հետո հայ. -ան հոգնակիակերտ ածանցն է:

Աբաճա: Շրջան Վասպուրական նահանգի Պալունիք գավառում, որի անվան մեջ նաև հայ. աճ «աճել, մեծանալ» արմատն է (ՀԱԲ) «մեծ» իմաստով և սեռական հոլովի -ա ցուցիչը: Այդ աճ բառը բարբառային -աջ տարբերակով առկա է Մակուի շրջանի Աբաջա, Ուրմիայի Աբաջալի, հին գյուղերի և Կոտուրի Աբաջիկ լեռան անուններում:

Աբանա: Բնակավայր Եղեգնաձորի շրջանում, որի անվան վերջում հայ. -ան հոգնակի իմաստ ունեցող ածանցն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Աբանդ: Սյունիքի Հաբանդ գավառի անունն է, որի հ հնչյունը աճական է: Այն վերջանում է -անդ ածանցով (հմմտ. հեալ և հիվանդ):

Աբաշի: Գյուղ Սալմաստի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -աշ ածականակերտ ածանցն է և ապա՝ սեռական հոլովի -ի ցուցիչը:

Աբանց: Բնակավայր Վանի շրջանում, որի անվան վերջում հայ. -անք ածանցն է հոգնակի սեռական հոլովաձևով:

Աբարան: Այժմյան Ապարանի շրջանի կենտրոնն է (տրբ. Ապարան): Տեղանվան մեջ հայ. -արան ածանցն է:

Աբել: Գյուղեր Ախալքալաքում և Երզրումի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -եղ ածանցի հին -ել տարբերակն է:

Աբեղաձոր: Բնակավայր Դերջանի շրջանում, որի անվան վերջում հայ. -եղ ածանցն է և -ա հոդակապով ձոր բառը:

Աբեղյանք: Գավառ Այրարատ նահանգում (այժմյան Սարիղամիշի շրջան): Տեղանվան մեջ նաև հայ. -եղ և -եանք (-յանք) ածանցներն են:

Աբեղներ: Լեռ Վասպուրական նահանգի Անձնացյաձ գավառում: Տեղանվան մեջ վերը նշված -եղ և ապա հոգնակիակերտ -(ն)եր մասնիկներն են:

Աբի: Բնակավայր Ախալցխայի շրջանում, որի անվան վերջում սեռական հոլովի -ի ցուցիչն է:

Աբկես: Հին գյուղատեղի Մեղրիի շրջանում, որի անվան մեջ նաև հայ. կես բառն է: Այն հուշում է, թե բնակավայրը գետով բաժանված է երկու մասերի:

Աբյան: Բնակավայրեր Բալուի և Շատախի շրջաններում: Տեղանունը հայ. -յան ածանցն ունի:

Աբյուն: Գյուղ Շատախում, որի անունը վերջանում է հայ. -յուն ածանցով:

Աբո: Բնակավայրեր Դիարբեքիի և Ղազախի շրջաններում: Տեղանվան վերջում հայ. -ո ածանցն է (հմմտ. արտաքին և արտաքո, դրացի և դրացո):

Աբով: Լքված բնակավայր Իջևանի շրջանի Կիրանց գյուղի մոտակայքում, որի անվան մեջ հայ. գործիական հոլովի -ով ցուցիչն է:

Աբրի: Գյուղ Բուլանքիի շրջանում: Տեղանվան մեջ հայ. ածականակերտ -րի ածանցն է (հմմտ. բերք և բերրի):

Աբուլ: Լեռ և բնակավայր Ջավախքում (տրբ. Ապուլ), որի անվան մեջ հայ. -ուլ ածանցն է (հմմտ. թաթ և Թաթուլ):

Աբուլե: Գյուղ Վանի նահանգի Հեքյարի գավառում: Տեղանվան մեջ նշված հայ. -ուլ և ապա՝ -եղ ածանցի հին -ել տարբերակն է:

Աբուլլար: Բնակավայր Բայազետի գավառում, որի անվան մեջ բացի վերը նշված -ուլ ածանցից թուրքերի կողմից ավելացված -լար մասնիկն է:

Աբուլքենդ: Գյուղ Կամոյի շրջանում: Տեղանվան վերջում թուրք. քենդ «գյուղ» բառն է:

Մայր լեզվի աբ- «ջուր, գետ» արմատը զ նախածանցով ներքոհիշյալ տեղանուններում նույնպես գործածված է:

Ջաբ: Տիգրիս գետի հյուսիս-արևելյան ճյուղավորումն է:

Ջաբախատուր: Ավերակ բերդ Սիսիանի շրջանում, որի անվան մեջ գ- նախածանցն է և ապա -ախ մասնիկը (հմմտ. թաթ և թաթախ, պուճ և պուճախ) և տուր բառը:

Ջաբանա: Գյուղ Բիթլիսի նահանգի Գենջի գավառում: Տեղանվան մեջ հայ. հոգնակիակերտ -ան ածանցն է և ապա՝ սեռական հոլովի -ա ցուցիչը:

Ջաբուդ: Բնակավայր Լաչինի շրջանում, որի անվան վերջում հայ. -ուլ ածանցն է:

Ջաբուդբադ: Գյուղ Դերսիմի շրջանում, որի անվան մեջ հայ. -ուլ ածանցն է (հմմտ. ցանց և ցնցուղ) և բաղ «կից» բառը (ՀԱԲ):

Հնդեվրոպական նախալեզվի b հնչյունը հին հայերենում դարձել է նաև պ (ՕԿ., էջ 298): Կարծում ենք աբ արմատի ապ տարբերակով են կազմված ստորև բերվող հին տեղանունները:

Ապ: Գյուղ Ախալցխայում:

Ապա: Բյուրակնի լեռների հին անունն է, որը վերջանում է -ա ածականակերտ ածանցով (հմմտ. կամք և կամա, ակամա):

Բյուրակն հորջորջման նման Ապա անունը մատնանշում է այդ լեռների ջրերով հարուստ լինելու հանգամանքը:

Ապագա: Ավերակ բերդ Վան քաղաքից քիչ արևելք: Այդ տեղանվան մեջ առկա է հին հայ ազ- «չոր» արմատը (տես ազագիլ «չորանալ», ՀԱԲ) և սեռական հոլովի -ա ցուցիչը: Այն նշանակում է «գետի մոտ չոր տեղում գտնվող բերդ»:

Ապալա: Դաշտ Վանա լճից քիչ դեպի հարավ-արևելք (տրբ. Աբադա, Ապադա), որի անվան մեջ բացի ապ արմատից մենք տեսնում ենք հայ. -աղ ածանցի հին -ալ տարբերակը (հմմտ. թակ և թակաղ):

Ապանա: Գետակ Արփա գետի ավազանում և գյուղ Սյունիքում: Տեղանվան մեջ ակնառու է նաև հայ. -ան ածանցը և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Ապանաս: Բնակավայր Խարբերդի դաշտում, որի անվան մեջ հայ. -ան և -աք հոգնակիակերտ մասնիկներն են: Վերջինս հոգնակի հայցական հոլովի -ա ցուցիչով:

Ապաա: Լեռ Բյուրակն-Մնձուրյան լեռնահամակարգում: Տեղանունը պարունակում է հայ. -աք հոգնակիակերտ մասնիկը հոգնակի հայցական հոլովի -ա ցուցիչով:

Ապշե: Գյուղ Դիարբեքիի նահանգում, որի անվան վերջում հայ. -շի ածանցն է քիչ աղավաղված ձևով (հմմտ. գոլ և գոլորշի):

Ապոս: Լեռ Բյուրակնի շրջանում, որի անվան մեջ հայ. -ոք ածանցն է հոգնակի հայցական հոլովի -ա ցուցիչով:

Ապոց: Աշոցք գավառն է (տրբ. Աբոց): Տեղանունը -ոց ածանցով է:

Ապջուդա: Գյուղ Ակնի շրջանում, որի հորջորջման մեջ նաև հայ. ճյուղ արմատն է բարբառային ջուղ ձևով և սեռական հոլովի -ա ցուցիչը: Թերևս այն նշանակում է «գետի ճյուղավորման աղբյուր բնակավայր»:

Ապտե: Բնակավայր Ալաշկերտի գավառում: Տեղանվան վերջում հայ. -տի ածանցն է քիչ աղավաղված ձևով:

Ապրի: Գյուղ Մուշի գավառում, որի անունը վերջանում է հայ. -րի ածականակերտ ածանցով (հմմտ. բերք և բերրի):

Ապուշեղ: Բնակավայր Մուշի գավառում: Տեղանվան մեջ նաև հայ. շեղ բառն է - ու- հոդակապով: Այն նշանակում է «գետի ծովածքի մոտ գտնվող»:

Ապուշէիս: Գյուղ Ակնի շրջանում, որը հայ. -ուշ և -էիս (հմմտ. կեռ և կեռնէիս, գոռ և գոռէիս) ածանցներն են:

Ապուսեր: Բերդ Բագրևանդ գավառում: Տեղանվան մեջ հայ. -ուք ածանցն է հին հոգնակի հայցական -ս ցուցիչով և -եր ածանցը:

Ապուսի: Բնակավայր Խարբերդի նահանգում, որի անվան մեջ վերը նշված -ուք ածանցն է և սեռական հոլովի -ի ցուցիչը:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք կազմված են մայր լեզվի աբ-«գետ, ջուր» արմատից և դրա հայերեն ապ- տարբերակից, մատնանշում են նշված տեղերի ջրով հարուստ լինելը կամ գետերի առկայությունը:

Մայր լեզվի Ե հնչյունը հին հայերենում դարձել է նաև փ: Մակայն աբ- արմատի ափ- տարբերակը համանիշ է հին հայ. ափն «որևէ տեղի ծայր, եզր» արմատի հետ (ՀԱԲ): Ուստի այդ երկու արմատներով կազմված տեղանունները իրարից զանազանել հնարավոր չէ: Այդ պատճառով էլ մենք ափ տարբերակով տեղանուններին չենք անդրադառնում:

ԱՐԼԱԿՈՆՆ: Գյուղ Վանի շրջանում (ՀՏԲ): Այս տեղանունը կարելի է համեմատել ստորև բերվող Արլունոն և Արլունսոր հին բնակավայրերի անունների հետ: Դրանից պարզվում է, որ Արլակոնց տեղանվան մեջ առանձնանում է հին հայերենին անհայտ աբլ- բառը և հայտնի -ակ և -ոնք ածանցները: Վերջինս նշված լեզվի հոգնակի սեռական հոլովի -ց ցուցիչով է:

Տվյալ աբլ- բաղադրիչը հիշեցնում է հնդեվրոպական մայր լեզվի *ǵbhel-«խնձոր» արմատը (Рок.): Նախալեզվի ազատ շեշտը բառի վրա մեր հին լեզվում չի պահպանվել, այլ կայունացել է նախավերջին վանկի վրա, որի հետևանքով բազմավանկ բառերի վերջին ձայնավորները ընկել են (ՀԼՊ, էջ 228, 247): Մայր լեզվի *pəter- արմատը դարձել է հայր, mātér-ը՝ մայր: Դրա համար էլ մայր լեզվի աբել- արմատը հին հայերենում պետք է դառնար աբլ-: Իսկ նախալեզվի Ե հնչյունը դարձել է ք (ՕԿ., էջ 298):

Արլակոնց տեղանունը իր իմաստով հիշեցնում է Երզնկայի գավառի Խնձոր, Մուշի Խնձոր, Դեսուխի Խնձոր և այդ արմատով այլ հին տեղանուններ (ՀՏԲ):

Մայր լեզվի աբլ- արմատը մենք տեսնում ենք նաև ներքևում բերվող տեղանուններում:

Աբլահ: Բնակավայր Ելիզավետպոլի գավառում, Գանձակ քաղաքի մոտ (տրբ. Ապլահ), որի անվան մեջ նշված աբլ- արմատի հետ հանդիպում է հին հայերեն ահ «ահագին, մեծ» բառը (ՀԱԲ):

Աբլար: Հին գյուղեր Մուշի շրջանում և Ջավախքում: Այս տեղանվան մեջ առկա է նաև հայ. -ար ածանցը (հմմտ. կտուց և կտցար):

Աբլունսոր: Բնակավայր Մպերի շրջանում, որի անվան մեջ աբլ- խնձոր բառից հետո մենք տեսնում ենք հայ. -ուն ածականակերտ ածանցը և հին սոր «խոռոչ, փոս» բառը (ՀԱԲ):

Քանի որ մայր լեզվի Ե հնչյունը հին հայերենում դարձել է նաև պ և փ, կարծում ենք, ներքև բերվող տեղանունները նույնպես իրենց մեջ ունեն աբլ- արմատը նշված տարբերակներով:

Ապլունոն: Գյուղ Դիարբեքիի նահանգում, որի անվան մեջ հայ. -ուն ածականակերտ և -ոն գոյականակերտ ածանցներն են:

Ջապլվար: Բնակավայր Արաբկիրի շրջանում (տրբ. Շապլվար): Տեղանվան մեջ բացի ապլ-արմատից առկա են հին հայ. գ- սաստկական մասնիկը և -վար ածանցը:

Ափլան: Այս հին բնակավայրի տեղը մեզ անհայտ է: Հիշատակված է Մ. Ուռհայեցու աշխատության մեջ: Տեղանունը վերջից ունի հայ. -ան հոգնակիակերտ ածանցը:

Բերված բոլոր հին տեղանունները (ՀՏԲ) իրենց կազմում ունեն հնդեվրոպական նախալեզվի աբել-«խնձոր» արմատի հայերեն աբլ-, ափլ- տարբերակները և մատնանշում են այդ բնակավայրերի խնձորենիներով հարուստ լինելը:

ԱՐՄԱ: Հին գյուղ Բուլանքի շրջանում (ՀՏԲ): Հայկական գրավոր աղբյուրներում նման բառ չի հանդիպում: Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *abhro - «ուժեղ» արմատն է (Рок.):

Այն հին հայերենում վերջին ձայնավորը անալոգիական կկորցնեք, քանի որ արդեն շեշտը նախավերջին վանկի վրա էր հաստատվել (ՀԼՊ, էջ 228): Ուստի Աբրա տեղանվան վերջի -ա ձայնավորը հայ. սեռական հոլովի ցուցիչ է:

Նշված տեղանունը իմաստի առումով հիշեցնում է Արագածոտն գավառի Ուժան (այժմ՝ Ուջան, -ան մասնիկով), Կապանի շրջանի Ուժանիս (-անի ածանցով և հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով) և Արա գյուղից 3կմ հարավ-արևելքի (լքված) Ուժբախշարար (բախշարար բառի հետ) հին գյուղերի անունները (ՀՏԲ):

Մայր լեզվի աբրո-«ուժեղ» արմատը հայկական աբր- ձևով կարելի է տեսնել նաև ներքոհիշյալ հին տեղանուններում:

Աբրակ: Գյուղ Մուշի գավառում, որի անվան մեջ առկա է նաև հայ. -ակ փոքրացուցիչ ածանցը:

Աբրականդ: Բնակավայր Մուշի շրջանում: Տվյալ տեղանվան մեջ բացի նշված արմատից, մենք տեսնում ենք նաև հայ. -ան և -անդ ածանցները (հմմտ. մարում և մարմանդ):

Աբրակունիս: Գյուղ Ջուլֆայի շրջանում (տրբ. Աբրակունիք, Ապրակունիք), որի հորջորջման մեջ առկա են հայ. -ակ և -ունիք ածանցները: Վերջինս հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով է:

Աբրադալի: Բնակավայր Մոկսի գավառում, որի անվան վերջում հայ. -ադ (հմմտ. հոտ «ոչխարի հոտ» և հոտադ) և -ալի ածանցներն են:

Աբրայան: Գյուղ Լաչինի շրջանում: Տեղանվան վերջում -ա- հոդակապով հայ. -յան ածանցն է:

Աբրանիս: Հին բնակատեղի Բաբերդի շրջանում, որի անվան վերջում հայ. -անի մասնիկն է հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով: Նախալեզվի եհ հնչյունը հին հայերենում դարձել է նաև պ (Օս., էջ 298): Այդ աբր- արմատը ապր- ձևով հանդիպում է ներքոհիշյալ տեղանուններում:

Ապրանց: Գյուղ Դերջանի գավառում, որի անվան վերջում հայ. -անք ածանցն է հին հայ. հոգնակի թվի սեռական հոլովի -ց ցուցիչով:

Ապրնես: Բնակավայր Թորթոմի գավառում (տրբ. Աբոնես): Տեղանվան վերջում նաև հայ. -նի և -եք մասնիկներն են: Վերջինս հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով է:

Ապրնուց ձոր: Գյուղ Շիրակում, որի հորջորջման մեջ հայ. -նի և -ք հոգնակիակերտ մասնիկներն են: Տեղանունը հին հայ. հոգնակի թվի սեռական հոլովաձևով է: Թվարկված բոլոր հին տեղանունները (ՀՏԲ) իրենց կազմում ունեն մայր լեզվի աբր- և դրա ապր-«ուժ» տարբերակները՝ բնութագրելով տեղի բնակիչներին:

ԱԳԼ: Գյուղ և գավառ Դիարբեքիի նահանգում, Տիգրիսի ակունքների շրջանում (տրբ. Ակլ, Ակլա, ՀՏԲ): Անգեղ տուն գավառի հին անունն է: Նման բառ հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում: Կարծում ենք, տվյալ տեղանունը կազմված է հնդեվրոպական նախալեզվի *aghl(u) - «մութ ամպ» արմատից (Рок.):

Իմաստի առումով այն հիշեցնում է Բաղեշ քաղաքի մոտի Ամպ, Վանի նահանգի Ադրակ գավառի Ամպիկ, Արդահանի շրջանի Ամպուր (-ուր ածանցով) և այլ նման արմատով կազմված տեղանուններ (ՀՏԲ), որոնք հուշում են բնակավայրի ամպոտ բնություն ունենալու մասին: Մտորն բերենք ազլ- արմատով կազմված այլ տեղանուններ:

Ազլագան: Լեռ Գոգարան լեռների արևմտյան մասում, որի անվան մեջ հայ. -ական ածականակերտ ածանցն է բարբառային հնչմամբ:

Ազլախա: Գյուղ Արդվինից մոտ 5կմ հյուսիս-արևելք, անտառապատ վայրում: Տվյալ տեղանվան մեջ, կարծում ենք, առկա են հայ. -ախ ածանցը (հմմտ. կամք և կամախ «նվեր», ՀԱԲ) և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Ազլիսքենդ: Հին բնակավայր Սրբախում, որի անվան մեջ ազլ- արմատից հետո հայ. -իք ածանցն է հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով և թուրքերի կողմից ավելացված քենդ «գյուղ» բառը:

Ազլի: Գյուղ էրգրումի նահանգի Խորասանի շրջանում: Այդ անվան մեջ առկա է նաև հայ լի «լի» բառը: Այն նշանակում է «ամպերով լի»:

Ազլովի: Լեռնանցք Բաբերդ քաղաքից 26-27կմ հարավ-արևմուտք, որի անվան վերջում հայ. -ովի ածանցն է:

Ազլվան: Գյուղ Մոկսի շջանում: Տեղանվան երկրորդ բաղադրիչը հին հայ. վան «բնակություն, բնակարան» արմատն է (ՀԱԲ): Այն նշանակում է «ամպոտ բնակավայր»:

Զազլի: Բնակավայր Արցախի Մարդակերտի շրջանում, որի անվան մեջ հայ. զ- սաստկական նախաձանցն է և -իկ մասնիկը:

Ազլ- արմատը հին հայկական ակլ- տարբերակով հանդիպում է նաև մի տեղանվան մեջ:

Ակլանդու: Այդ անունով հայտնի են եղել Երևանի նահանգում երկու գյուղեր՝ վերին և ներքին: Տեղանվան մեջ, կարծում ենք, հայ. -ան հոգ- նակիակերտ մասնիկն է և թուրքերեն -լու ածանցը:

Վերը բերված հին տեղանունները (ՀՏԲ) մատնանշում են տեղանքի ամպոտ լինելը:

ԱԳՐԱՆ: Ավերակ գյուղ Վանի նահանգի Բերկրի շրջանում (ՀՏԲ): Երբ դրա անունը համեմատում ենք ներքև բերված Ազրի, Ագրուս և նման հին տեղանունների հետ, ապա պարզ է դառնում, որ Ագրան տեղանվան մեջ առանձնանում է ագր- արմատը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում և -ան հոգնակիակերտ մասնիկը:

Կարծում ենք, դա հնդեվրոպական նախալեզվի *agro-s «արտ, դաշտ» արմատն է առանց -s ածանցի (ՀԼՊ էջ 241), որի վերջի օ ձայնավորը ընկել է հին հայերենում շեշտի նախավերջին վանկի վրա հաստատվելու հետևանքով (ՀԼՊ, էջ 228, 247):

Ագրան տեղանունը իմաստով հիշեցնում է Մուշի շրջանի Արտեց (-եք ածանցով, հին հայ. հոգնակի սեռական հոլովում դառնում է արտեց), Արդիանի Արտան, Սյունիքի Արտեն, Վայոց ձորի Արտես և այլ հին բնակավայրերի անուններ՝ կազմված հայ. արտ արմատից (ՀԱԲ):

Հնդեվրոպական նախալեզվի ագրո- արմատը «արտ» իմաստով և ագր- տարբերակով մենք տեսնում ենք ստորև բերվող հին տեղանուններում:

Ագրկի: Վանք Թորթումի շրջանում, որի անվան վերջում հայ. -կի ածանցն է (հմմտ. լուցկի, թխկի):

Ագրուս: Գյուղ Շատախի շրջանում (տրբ. Ակրուս, Աքրուս): Տեղանվան վերջում հայ. -ուք ածանցն է հին հայ. հայցական հոլովի -ս ցուցիչով:

Մայր լեզվի g հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ (ՕԿ., էջ 398): Այդ տարբերակով ագր- արմատը հանդիպում է ներքոհիշյալ տեղանուններում:

Ակրիգոմի վանք: Վանք Բասեն գավառում:

Ակրի վանք: Վանք Սևանա լճի ափին:

Ակրուս: Գյուղ Շատախի շրջանում, որի անվան վերջում հայ. -ուք հոգնակիակերտ ածանցն է հին հայ. հայցական հոլովի -ս ցուցիչով:

Ակրուսիս: Բնակավայր Օլթիի շրջանում: Տվյալ տեղանվան մեջ հայ. -ուս և -իք ածանցներն են: Վերջինս հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով է:

Հայերենում r հնչյունը հաճախ է դառնում n (ՕԿ., էջ 312): Այդ հնչյունափոխությամբ են ներքոհիշյալ տեղանունները:

Ակոռավար: Արոտավայր Սյունիքի Օղուկ գավառում, որի անվան մեջ -ա- հոգնակապով հայ. -վար ածանցն է:

Ակոբի: Գյուղ Վան քաղաքից քիչ հարավ: Տեղանվան վերջում հայ. -բի ածանցն է (հմմտ. արամբի, կանամբի):

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ) իրենց հիմքում ունեն մայր լեզվի ագր «արտ, դաշտ» արմատը:

ԱՂԵՐ: Բնակավայրեր Վանի և Խարբերդի նահանգներում (ՀՏԲ): Երբ այդ տեղանունը համեմատում ենք ստորև բերվող Աղիշեն, Աղիչ և Աղյան հին բնակավայրերի հորջորջումների հետ, պարզվում է, որ

դրանում առանձնանում է աղ- արմատը, որը հայ գրավոր աղբյուրներում չի հանդիպում:

Կարծում ենք տվյալ աղ- բաղադրիչը հնդեվրոպական մայր լեզվի *ad- «կարգ ու կանոն հաստատել» արմատն է (Рок.): Աղեր տեղանունը, որի վերջում առանձնանում է հայ. -եր հոգնակիակերտ մասնիկը, իր իմաստով հիշեցնում է Դերջանի գավառի Կարգին, Քղիի Կարգալի, Սոկսի Կարգեվան և Սպերի Կարգոն հին բնակավայրերի անունները, ողոնց հիմքում ընկած է կարգ բառը (ՀՏԲ):

Այդ աղ- արմատը մենք տեսնում ենք նաև ստորև բերվող տեղանուններում:

Աղա: Այդպիսի անուն կրել են Դերսիմի, Մանակերտի, Ուրմիայի և Գեղարքունիքի մեկական գյուղ (ՀՏԲ): Տեղանվան վերջում հայ. -ա ածանցն է (հմմտ. կամք և ակամա):

Աղաբաղ: Բնակավայր Վանա լճի արևմտյան ափին: Տեղանունը բացի նշված աղ- արմատից իր մեջ ունի հին հայ. բաղ«կից» (ՀԱԲ) բառը -ա- հոդակապով: Այն նշանակում է «կից տներով և կարգ ու կանոնով կառուցված բնակավայր»:

Աղագուլ: Գյուղ Ճորոխի ստորին ավազանում: Այդ տեղանվան Աղագուլիա - իա ածանցով տարբերակը հուշում է, թե դրանում հայ. գուլ «գուլ, տաք» բառն է (ՀԱԲ):

Աղաթափա: Բնակավայր Բայազետի շրջանում (այժմ՝ Արտանիշ): Տեղանունը, կարծում ենք, կազմված է նախալեզվի աղ- արմատից և -ա- հոդակապով հին հայ. թափ «հատակ, խորք» բառից (ՀՏԲ) ու նշանակում է «խոր տեղում կարգ ու կանոնով կառուցված բնակավայր»:

Աղաթլը: Գյուղ Սուրմալուի շրջանում (տրբ. Աղաթլու), ձորի անունով կոչվել է նաև մոտի լեռնագագաթը: Կարծում ենք, այդ տեղանունը կազմված է աղ- արմատի կրկնությամբ: Իսկ վերջի թ հնչյունը տարնմանության օրենքի հետևանքով է դարձել այդպիսին:

Աղալար: Բնակավայր Շամախի շրջանում, որի անվան վերջում թուրքերենի -լար հոգնակիակերտ մասնիկն է: Դրա Աղալեր տարբերա-

կով, որը վերջին ա ձայնավորի քմայնացման հետևանք է թուրքերենում: Այդպես կոչվել է նաև Դերսիմի մի բնակավայր:

Աղալը: Գյուղ Սուշի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ալի ա- ծանցն է քիչ աղավաղված:

Աղալի: Բնակավայր Տարոն գավառում: Տեղանվան վերջում հայ. -ալի ածանցն է (հմմտ. կամք և կամախ «նվեր» (ՀԱԲ):

Աղախալի: Գյուղ Ալաշկերտի շրջանում, որի անվան վերջում հայ. նշված - ախ և ապա -ալի ածանցներն են:

Աղամակերտ: Քաղաք Վասպուրական նահանգի Մեծ Աղբակ գավառում: Թերևս այն կազմված է մայր լեզվի աղ- արմատից, հին հայ. ամ- «լի» բառից ու -կերտ բառաձանցից: Այն նշանակում է «կարգ ու կանոնով լի բնակավայր»:

Աղամաձոր: Գետակ Հրազդանի ավազանում, որի անվան մեջ նաև հին հայ. ամ-«լի» և ձոր բառերն են:

Աղամանց քար: Լեռ Վան քաղաքի շրջակայքում: Վերջի -անք ածանցը հուշում է, թե այն կոչվել է մոտի գյուղի անունով:

Աղամղաղ: Լեռներ Հայկական պար լեռնահամակարգում: Կարծում ենք, այդ տեղանունը նշանակում է «կարգ ու կանոնով լի լեռ»: Վերջից թուրք. դաղ «լեռ» բառն է:

Աղամղաշ: Լեռ Բորչալուի շրջանում, որի անունը նախորդի իմաստն ունի թուրք. դաշ «քար» բառի հավելումով:

Աղամխան: Գյուղ և գետակ Մարտունու շրջանում (տրբ. Աթամխան, այժմ՝ Վարդաձոր): Տեղանվան վերջում հայ. խան «իջևան» բառն է: Այն նշանակում է «կարգին և լի իջևան ունեցող բնակավայր»:

Աղանց: Բնակավայր Վանա լճի արևելյան ափին, որի անվան վերջում հայ. -անք ածանցն է հոգնակի սեռական հոլովի -ց ցուցիչով:

Աղաշօվս: Հին բնակատեղի Արցախում: Տեղանվան մեջ ակնառու են և հայ. -աշ ածականակերտ մասնիկը և օվա «հովիտ» բառը:

Աղաքլու: Գյուղակ Սուրմալուի շրջանում: Տեղանվան մեջ նաև հայ. -աք ածանցն է, որից հետո՝ թուրքերի ավելացրած -լու մասնիկը:

Աղաքյան: Բնակավայր Բայազետի գավառում, որի անվան վերջում հայ. -աք և -յան ածանցներն են:

Աղաֆ: Գյուղ Խարբերդի նահանգում: Տեղանվան վերջի -աֆ բաղադրիչը հետագայի աղավաղումն է հայ. գործիական հոլովի -ավ ցուցիչի:

Աղել: Բնակավայր Բիթլիսի նահանգի Սղերդի գավառում, որի անվան վերջի -ել բաղադրիչը հայ. -եղ ածանցի հնագույն տարբերակն է: Ի դեպ, հին հայերենում լ հնչյունը դ է սկսել դառնալ մեր թվարկության սկզբներից, այն էլ ոչ բոլոր բառերի մեջ:

Աղեր: Գյուղ Վանի նահանգի Թիմարի գավառում (տրբ. Ատեր): Տեղանվան վերջում հայ. -եր հոգնակիակերտ մասնիկն է:

Աղերունս: Գյուղ Սղերդի շրջանում, որի անվան վերջում նաև հայ. -ունք ածանցն է հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Աղիլ: Բնակավայր Սղերդի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -իլ ածանցն է (հմմտ. կաթել և կաթիլ):

Աղինա: Քաղաք Տրապիզոնից մոտ 100կմ արևելք, Համշենում: Տեղանվան վերջում հայ. -ին ածանցն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Աղիշ: Բնակավայր Դիարբեքիի նահանգի Արդանամաղեն գավառում (տրբ. Ատիշ): Տեղանվան վերջում ակնառու է հայ. -իշ ածականակերտ ածանցը:

Աղիշեն: Բնակավայր Արցախում: Տեղանվան մեջ -ի- հոդակապով հայ. շեն բառն է:

Աղիջանս: Գյուղ Սուկսի շրջանում, որի հորջորջման վերջում ի հոդակապով հայ. -ջան (=ճան, հմմտ. դավ և դավաճան) ածանցն է և հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչը:

Աղիս: Բնակավայր Դիարբեքիի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -իք հոգնակիակերտ մասնիկն է հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Աղիսուլ: Գյուղ Ճորոխի հովտում, որի անունով կոչվել է նաև մոտի գետակը: Տեղանվան մեջ մենք տեսնում ենք նաև հին հայ. խուլ «խուլ, լուռ» արմատը: Տեղանունը թերևս ունի «խաղաղ տեղում կարգին շինություններով բնակավայր»:

Աղյան: Բնակավայր Վանի նահանգի Խլաթի գավառակում, որի անվան վերջում հայ. -յան ածանցն է:

Աղնականց: Գյուղ Վանի շրջանում: Տեղանվան մեջ նաև հայ. -նակ (հմմտ. աղջնակ) և -անք ածանցներն են:

Աղո: Բնակավայր Սասունի Խաբլժոզ գավառում, որի անվան վերջում հայ. -ո ածականակերտ մասնիկն է (հմմտ. հաճելի և հաճո): Հնդեվրոպական նախալեզվի d հնչյունը հին հայերենում դարձել է նաև թ և տ (Օս., էջ 298):

Ստորև բերվող տեղանուններում առկա են մայր լեզվի աղ- արմատի նշված տարբերակները:

Աթ: Գյուղ Բիթլիսի նահանգի Սղերդի գավառում:

Աթալ: Բնակավայր Դիարբեքիի շրջանում, որի անվան վերջում հայ. -աղ ածանցի հին -ալ տարբերակն է (հմմտ. կյանք և կենցաղ):

Աթախ: Բերդ և համանուն գավառ Աղձնիքում (տրբ. Աթակ): Տեղանվան վերջում հայ. -ախ ածանցն է (հմմտ. կամք և կամախ «նվեր»):

Աթակուր: Հին գյուղ Մեղրու շրջանում, որի անվան մեջ հայ. -ակ և -ուք ածանցներն են:

Աթաղուտ: Բնակավայր Արցախի նահանգի Հաղրուծի շրջանում: Տեղանվան մեջ առկա են հայ. -աղ և -ուտ ածանցները:

Աթան: Ժամանակակից գյուղ Թումանյանի շրջանում, որի անվան վերջում հայ. -ան ածանցն է (հմմտ. արգելք և արգելան):

Աթանան: Հին բնակավայր Հայոց ձոր գավառում: Տեղանվան մեջ հայ. -ան գործողություն ցույց տվող և -ան հոգնակիակերտ ածանցներն են: Այն նշանակում է «կարգի բերողների բնակավայր»:

Աթել: Գյուղ Վանա լճի ավազանի Խոշաք գետի հովտում, որի անվան մեջ հայ. -է ածանցն է իր նախնական -եյ ձևով (հմմտ. ոսկէ, արծաթէ):

Աթերեշ: Բնակավայր Դիարբեքիի նահանգում: Տեղանունը իր մեջ ունի հայ. -եր և -եշ մասնիկները:

Աթմա: Գյուղ Ակնի շրջանում, որի անվան երկրորդ բաղադրիչը հին հայ. մայեակ (-եակ ածանցով) «շտեմարան» բառի արմատն է (ՀԱԲ):

Աթմալի: Բնակավայր Մալաթիայի շրջանում: Տեղանվան մեջ վերը նշված հին հայ. մայեակ «շտեմարան» բառի արմատն է և լի «լի» բառը: Այն նշանակում է «կարգին և հարուստ բնակավայր»:

Աթման: Գյուղ Դիարբեքիի նահանգում, որի հորջորջման մեջ հայ. -մն ածանցն է (հմմտ. կողմն և կողման, ջերմն և ջերման) սեռական հոլովաձևով:

Ատախաս: Բնակավայր Դիարբեքիի նահանգում, որի անվան մեջ բացի աղ -արմատի ատ- հայկական տարբերակից առկա են հայ. գոյականակերտ -ախ (հմմտ. կամք և կամախ «նվեր») և -աք ածանցները: Վերջինս հին հայ. հոգնակի սեռական հոլովի -ս ցուցիչով է:

Ատախուլի: Գյուղ Շիրակ գավառում: Տեղանվան վեհում բացի վերը նշված -ախ ածանցից մենք տեսնում ենք հայ. -ուլ մասնիկը (հմմտ. տրվել և տանուլ տալ) ու սեռական հոլովի -ի ցուցիչը:

Ատական: Բնակավայր Վանի նահանգի Գյավուշի շրջանում, որի անվան մեջ հայ. -ական ածանցն է:

Ատաման: Բնակավայր Վան քաղաքից քիչ հարավ: Տեղանվան վերջում հայ. -ամ «լի» բառն է և -ան հոգնակիակերտ մասնիկը:

Ատանուն: Գյուղ Վանա լճի հարավային կողմում, որի հորջորջման մեջ ակնառու են հայ. -ան հոգնակիակերտ և -ուն ածականակերտ մասնիկները:

Ատաֆ: Գյուղ Մոկսի շրջանում: Տեղանվան վերջում հայ. գործիական հոլովի -ավ ցուցիչն է քիչ աղավաղված ձևով:

Ատերեշ: Գյուղ Դիարբեքիի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -եր և -եշ ածանցներն են (հմմտ. քեն և խենեշ):

Ատրճանց: Բնակավայր Մոկսի շրջանում, որի հորջորջման վերջում հայ. -իճ (քիչ փոփոխված) և -անք ածանցներն են:

Ատիլ: Գյուղեր Բզնունիքի և Ադերդի շրջաններում, որոնց անվան վերջում հայ. -իլ ածանցն է:

Ատիշ: Բնակավայր Արդանամադենի գավառում: Տեղանվան վերջում հայ. -իշ մասնիկն է:

Մայր լեզվի աղ- արմատը գ- նախածանցով և իր հայկական տարբերակներով մենք տեսնում ենք ներքև բերվող տեղանուններում:

Ջադարա: Գյուղ Կարսի շրջանում, որի անվան վերջում հայ. -ար ածանցն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Ջադեն: Բնակավայր Ախալցխայի գավառում: Տեղանվան վերջում հայ. -են ածանցն է:

Ջաթմա: Բնակավայր Արտաշատի շրջանում, որի անվան վերջում **հին** հայ. մայեակ (-եակ ածանցով) «շտեմարան» բառի մա- արմատն է (**ՀԱԲ**):

Այս բոլոր հին բնակավայրերի անունները (**ՀՏԲ**), որոնց մեջ առկա են **նախալեզվի** աղ- արմատը և իր հայկական տարբերակները, մատնացույց են անում նշված բնակավայրերի կարգ ու կանոնով կառուցված լինելը:

ԱԶԴԻ: Գյուղ Դիարբեքիի նահանգի Սիլվանի գավառում (**ՀՏԲ**): Հին **հայերենի** ազդ «լուր, տեղեկություն» արմատը (**ՀԱԲ**), որն իրանականից **փոխառություն** է, իր իմաստով տեղանուն կազմել չէր կարող: Ուստի, կարծում ենք, Ազդի տեղանվան մեջ հնդեվրոպական նախալեզվի *azd- «չոր» արմատն է (Рок.) հայ. սեռական հոլովի -ի ցուցիչով:

Այդպիսի իմաստ ունեն Խարբերդի գավառի Չոր, Խոյի շրջանի Ջորս, Բայազետի Չորուտ, Կադզվանի Չորուք և շատ այլ գյուղերի անուններ (**ՀՏԲ**):

Մայր լեզվի ազդ- արմատն այդ իմաստով հանդիպում է նաև ներքո-հիշյալ տեղանուններում:

Ազդաբադ: Բնակավայր Նախիջևանի գավառում: Դրա անվան **Աստապատ** տարբերակը հուշում է, թե տեղանունն ունի «չորությամբ պատված» իմաստը:

Ազդաշ: Գյուղ և համանուն գավառ Վանի նահանգում, որի անվան **վերջում** հայ. -աշ ածանցն է (հմմտ. թթու և թթվաշ):

Ազդիբեկ: Բնակավայր Շիրակում: Տեղանվան մեջ նաև -ի- հոդակա-պով հին հայ. բեկ «բեկված» (**ՀԱԲ**) բառն է:

Ազդվանք: Գյուղ Ախալցխայի շրջանում, ուր անվան մեջ մենք տեսնում ենք նաև հին հայ. վան «բնակություն» բառը և հին հոգնակի թվի սեռական հոլովի -ց վերջավորությունը:

Բերված բոլոր հին տեղանունները (ՀՏԲ) մատնանշում են այդ բնակավայրերի տարածքի չոր լինելու հանգամանքը:

ԱԼԲԱԼԻ: Բնակավայր Ջավախքում (ՀՏԲ): Երբ այս տեղանունը համատարած ենք ստորև բերվող Ալբուս, Ալպերս, Ալպիր հին բնակավայրերի անունների հետ, դրանում առանձնանում է հայ գրավոր աղբյուրների անձանոթ ալբ- բառը և ածականակերտ -ալի ածանցը:

Կարծում ենք, վերջինս հնդեվրոպական մայր լեզվի *albho- «սպիտակ, փայլուն» արմատն է (Рок.): Հնագույն հայերենում մայր լեզվից ժառանգած ազատ շեշտով բազմավանկ բառերում այն հաստատվել է նախավերջին վանկերի վրա, որի հետևանքով վերջին ձայնավորը թուլացել և ընկել է (ՀԱԲ, էջ 228):

Իր իմաստով Ալբալի տեղանունը («սպիտակ») հիշեցնում է Մարտունու շրջանի Սպիտակ, Ալեքսանդրապոլի Սպիտակ, Արցախի Սպիտակաշեն և այդ հիմքով կազմված շատ այլ հին բնակավայրերի անուններ (ՀՏԲ):

Նախալեզվի նշված ալբ- արմատը հանդիպում է նաև ստորև բերվող տեղանուններում:

Ալբավա: Գյուղ հին Երևանի գավառում (տրբ. Ալպավա, Ալփավա), որի անվան վերջում հայ. գործիական հոլովի -ավ վերջավորությունը և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Ալբարիջ: Բնակավայր Մուշի շրջանում: Այս տեղանվան մեջ առկա է նաև հին հայ. առիճ «գյուղ» բառը:

Ալբերդ: Գյուղակ Վանա լճից հարավ-արևմուտք: Թերևս տվյալ տեղանվան -երդ բաղադրիչը -կերտ ածանցն է (հմմտ. Աղերդ):

Ալբիա: Գյուղ Մեծ Զաք գետի վերին ավազանում, որի անվան վերջում -իք հոգնակիակերտ մասնիկն է հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Ալբուս: Բնակավայր Երզնկայի շրջանում (տրբ. Ալպուս): Տեղանվան վերջում հայ. -ուք ածանցն է հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս վերջավորությամբ:

Հնդեվրոպական նախալեզվի ե հնչյունը հին հայերենում դարձել է ոչ միայն բ այլ նաև պ և փ (Օս., էջ 298):

Այդ տարբերակներով ալբ- արմատը գործածված է ներքև բերվող տեղանուններում:

Ալպատակ: Լեռնաշղթա Արցախում: Տեղանվան վերջում -ա- հոդակապով հին հայ. տակ «տակ» բառն է (ՀԱԲ):

Ալպես: Գյուղ Ալբակ գավառում, որի հորջորջման վերջում -եր ածանցն է հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս վերջավորությամբ:

Ալպերս: Բնակավայր Բիթլիսի գավառում, որի անվան մեջ նաև հայ. -եր հոգնակիակերտ մասնիկն է և հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչը:

Ալպիր: Գյուղ Կոտայք գավառում: Տեղանվան վերջում հին հայ. -իր ածանցն է (հմմտ. երկինք և երկիր):

Ալփավան: Բնակավայր Երևանի գավառում (այժմ՝ Նշավան), որի անվան մեջ նաև ավան բառն է:

Ալփավուտ: Գյուղեր Խարբերդի, Լաչինի, Ղազախի գավառներում: Տեղանվան վերջում հայ. -ավ գործիական հոլովի ցուցիչն է և ապա -ուտ ածանցը:

Ալփուևար: Բնակավայր Դիարբեքիի շրջանում, որի հորջորջման մեջ հայ. -ուն և -ար ածանցներն են:

Վերը հիշատակված այս տեղանունները (ՀՏԲ) կազմված են մայր լեզվի ալբ- «սպիտակ» արմատից և դրա հայկական ալպ- և ալփ- տարբերակներից:

ԱԼԳԵՐ: Գետ Կուրի ավազանում, որը սկիզբ է առնում Թրիալթի լեռներից: Այն վրացական Ալգետն է (ՀՏԲ): Տվյալ տեղանունը կարելի է համեմատել ստորև բերվող Ալքի և Ալքյան գյուղերի անունների հետ: Դրանցից պարզվում է, որ Ալգեր տեղանվան մեջ առկա է ալգ- բա-

դադրիչը և հայ. -եր հոգնակիակերտ մասնիկը: Այդպիսի բառ հայկական գրավոր աղբյուրներին անծանոթ է: Կարծում ենք, ալգ-ը հնդեվրոպական նախալեզվի *algh- «սառ, ցուրտ» արմատն է (Pok.):

Ալգեր գետի անունը թերևս նշանակում է «սառը ջրեր ունեցող»:

Այն իր իմաստով հիշեցնում է Խրամ գետի աջ օժանդակ Ցուրտագետի, Գուգարքի Բողնոփոր գավառի Ցուրտավ քաղաքի, Դերսիմի Սառեկ (եկ բառի հետ, հմմտ. միջնեկ), Խնուսի շրջանի Սառլի (լի արմատի հետ) և այլ հին գյուղերի անուններ (ՀՏԲ):

Ալգ- արմատը հանդիպում է նաև ներքոհիշյալ տեղանվան մեջ:

Ալգա-Աթգա: Գյուղ Օրդուբադի շրջանում, որի անվան մեջ, կարծում ենք, ալգա- բառն է կրկնված և աղավաղված:

Հին հայերենի լ հնչյունը մի շարք բառերի մեջ մեր էրայի սկզբներից դարձել է դ (Օս., էջ 311):

Այդ հնչյունափոխությունը տարածվել է ներքև բերվող ալգ- արմատով որոշ տեղանունների վրա:

Աղգա: Գյուղ Վանի շրջանում, որի անունը վերջանում է հայ. սեռական հոլովի -ա ցուցիչով:

Աղգամի: Բնակավայր Բիթլիսի նահանգի Բշերիկի շրջանում: Այդ տեղանվան մեջ մենք տեսնում ենք նաև հին հայ. ամ-«լի» բառը (ՀՏԲ) և սեռական հոլովի -ի ցուցիչը:

Աղգաշ: Գյուղ Վանի շրջանում, որի անվան վերջում հայ. -աշ ածանցն է:

Աղգոգ: Բնակավայր Կաղզվանի շրջանում, որը կոչվել է նաև Ախկոս: Վերջինս հուշում է, որ Աղգոգ տեղանունը -ոս (<ոք) ածանցն ունի իր մեջ: Այդպես դարձրել են թուրքերը՝ աղավաղելով այն:

Հնդեվրոպական նախալեզվի gh հնչյունը հին հայերենում դարձել է ոչ միայն q, այլ նաև k և p (Օս., էջ 298):

Վերջին երկու տարբերակներով ալգ- արմատը մենք տեսնում ենք ստորև բերվող տեղանուններում:

Ակեքար: Ամրոց Մոկաց աշխարհում:

Ակեֆ: Գյուղ Մոկա գետի հովտում, որի անվան -եֆ բաղադրիչը օտարների կողմից աղավաղված հայ. գործիական հոլովի -եվ ցուցիչն է:

Ակլի: Ամրոց Վերին Կորդրիք գավառում: Տեղանվան վերջին ձայնավորը հայ. սեռական հոլովի -ի ցուցիչն է:

Ակլիտ: Գյուղ Շատախում, որի հորջորջման վերջում հայ. -իտ ածանցն է (հմմտ. հով և հովիտ):

Ալքիբան: Բնակավայր Էրզրումի նահանգում: Տեղանվան մեջ մենք տեսնում ենք հայ. -իր (հմմտ. երկիր և երկինք) և -ան (հոգնակիակերտ) ածանցները:

Ալքյան: Գյուղ Սալմաստի գավառում, որի անունը վերջանում է հայ. -յան ածանցով:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), կազմված մայր լեզվի ալգ- արմատից և դրա հայերեն տարբերակներից, մատնացույց են անում նշված բնակավայրերի և գետերի ցուրտ բնություն ունենալը:

ԱԼԴԻՆ: Բնակավայր Դիարբեքիի գավառում (ՀՏԲ): Այդ տեղանունը համեմատելով ստորև բերվող Ալդարա և Ալդեն հին գյուղերի անունների հետ պարզվում է, որ դրա հիմքում ընկած է ալդ- բառը, որը հին հայկական ձեռագրերին խորթ է: Ուստի ենթադրում ենք, որ դա հնդեվրոպական մայր լեզվի *aldh- «տաշտ» արմատն է (Pok.):

Նման իմաստ ունեն Սյունիքի Տաշտան, Արդանամադենի գավառի Տաշտ, Գողթնի Տաշտ, Բիթլիսի նահանգի Սպարկերտի գավառակի Տաշտ գյուղերի անունները (ՀՏԲ), որոնք մատնանշում են տեղանքի տաշտաձև լինելու հանգամանքը:

Այդ ալդ- արմատը մենք տեսնում ենք ներքոհիշյալ հայկական տեղանունների մեջ:

Ալդարա: Գյուղ Մեղրու շրջանում (տրբ. Ալտարա), որի անվան վերջում հայ. -ար ածանցն է (հմմտ. մուր և մթար, մեծ և մեծար) սեռական հոլովի -ա ցուցիչով:

Ալդեն: Գյուղակ Բալու քաղաքի մոտ: Տեղանվան վերջում ակնառու է հայ. -են ածանցը (հմմտ. ծիվ և ծվեն, մեկ և մեկեն):

Ալդի: Բնակավայր էրզրումի գավառում, որի անվան վերջում սեռական հոլովի -ի ցուցիչն է:

Ալդինլու: Գյուղ Արցախի նահանգի Ջրաբերդի գավառում, որի հորջորջման մեջ հայ. -ին ածանցն է (հմմտ. խորթ և խրթին, կարգ և կարգին) և թուրքերի կողմից ավելացված իրենց լեզվի -լու մասնիկը:

Ալդիրի: Բնակավայր Կաղզվանի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -իր ածանցն է և սեռական հոլովի -ի ցուցիչը:

Ալդիքոյ: Գյուղ էրզրումի գավառում, որի հորջորջման վերջում թուրքերի կողմից ավելացված իրենց լեզվի քոյ «գյուղ» բառն է:

Հնդեվրոպական նախալեզվի dh հնչյունը հին հայերենում դարձել է նաև թ և տ (Օս., էջ 298): Այդ տարբերակներով ալդ- արմատը հանդիպում է ստորև բերվող տեղանուններում:

Ալթան: Գյուղ Քղիի շրջանում, որի անվան վերջում հայ. -ան հոգնակիակերտ ածանցն է:

Ալթինի: Բնակավայր էրզրումի գավառում (տրբ. Ալթուն): Այդ տեղանվան մեջ առկա է հայ. -ին ածանցը (հմմտ. կարգ և կարգին) և սեռական հոլովի -ի վերջավորությունը:

Ալթինլու: Գյուղ Կապանի շրջանում, որի անվան վերջում վերը նշված -ին ածանցն է և թուրքերի կողմից ավելացված -լու մասնիկը:

Ալթուն: Բնակավայրեր և լեռներ Քղիի, Արդահանի, Երզնկայի, էրզրումի, Գեղարքունիքի շրջաններում և Արցախում: Տեղանվան վերջում հայ. -ուն ածանցն է (հմմտ. գործ և գործուն, իմաստ և իմաստուն, շարժ և շարժուն):

Ալտարահ: Վանք Վանի նահանգի Բաշկալայի գավառում, որի հորջորջման վերջում հայ. -ար ածանցն և հին հայ. ահ «շատ մեծ» բառը (ՀԱԲ):

Հին հայերենում սկսած մոտ մեր էրայի սկզբներից լ հնչյունը շատ բառերի մեջ դարձել է դ (Օս., էջ 299):

Մայր լեզվի ալդ «տաշտ» արմատը աղդ- և աղթ- հին հայերենի տարբերակներով մենք տեսնում ենք ստորև բերվող տեղանուններում:

Աղդա: Գետ Արաքսի ավազանում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ա ցուցիչն է: Այն կարելի է ընկալել որպես «տաշտաձև փոսերով գետակ»:

Աղդադ: Գյուղ Դերսիմի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ատ ածանցն է բարբառային -ադ հորջորջմամբ:

Աղդամ: Գյուղեր Արցախում, Ղազախի և Կաղզվանի շրջաններում: Տեղանվան վերջում հին հայ. ամ-«լի» արմատն է:

Աղդան: Բնակավայր Իջևանի շրջանում: Այն կոչվել է տեղի գետի անունով, որը տաշտաձև փոսեր ունի:

Աղդավ: Գյուղ Սյունիքի Ճահուկ գավառում, որի անվան վերջում հայ. -ավ մասնիկն է:

Աղդատ: Բնակավայր Մուշի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ատ ածանցն է:

Աղդարա: Գյուղեր Նախիջևանի, Ղազախի, Շարուրի գավառներում: Տեղանվան վերջում հայ. -ար ածանցն է (հմմտ. կտուց և կտցար թռչուն) և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Աղդեվա: Բերդ Ալաշկերտի շրջանում, որի անվան մեջ հայ. գործիական հոլովի -եվ և հին հայցականի -ս ցուցիչներն են:

Աղդեվսի: Լեռ Կարսի սարահարթում:

Աղդիս: Գյուղեր Սուրմալուի և Մակուի շրջաններում: Տեղանվան վերջում -իք ածանցն է հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Մայր լեզվի dh հնչյունը հին հայերենին անցած բառերում դարձել է նաև թ (Օս., էջ 298): Ստորև բերենք աղդ- արմատի այդ տարբերակով տեղանուններ:

Աղթ: Գյուղ Մոկսում:

Աղթաբույնի: Բնակավայր Վայոց ձոր գավառում, որի անվան մեջ առկա է նաև -ա- հոդակապով հին հայ. բույն «բույն» բառը և սեռական հոլովի -ի ցուցիչը:

Աղթանց փոս: Վայր Գուգարք նահանգի Հաղբատ գյուղի մոտ: Այդ տեղանունը հայ. -անք ածանցով է:

Աղթիք: Գավառ Տայք նահանգում, որի անվան վերջում -իք ածանցն է:

Աղթուշ: Լեռ Ղարադաղի լեռնահամակարգում, որի հորջորջման վերջում հայ. -ուշ ածանցն է:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), որոնց կազմի մեջ առկա են մայր լեզվի ալղ- «տաշտ» արմատը և դրա հայերեն տարբերակները, մատնանշում են տեղանքի տաշտաձև լինելը:

ԱՅՎԵՐ: Գյուղ Ակնի շրջանում (ՀՏԲ): Ներքևում բերվող Այվոս, Այվալի և Այվազ գյուղերի անունների հետ համեմատելիս՝ Այվեր տեղանվան մեջ առանձնանում են այվ- բաղադրիչը և հայ. հոգնակիակերտ -եր մասնիկը: Հայկական գրավոր աղբյուրներում այդպիսի բառ չի հանդիպում:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *aiu-, aiu- «կենսունակ, կյանքով լի» արմատի վերջին տարբերակն է (հմմտ. լու և լվիճ, ձու և ձվան):

Այվեր տեղանունը «կենսունակ» իմաստով հիշեցնում է կյանք բառի կեն թեքված ձևից (հմմտ. կենսունակ) կազմված հայկական Ջանգեզուրի Կենիք, Խոյի Կենալի (-ալի մասնիկով), Խաղտիքի Կենա (սեռական հոլովի -ա ցուցիչով) գյուղերի և Տավուշ գետի ջրաբաժան Կենաց լեռների անունները (ՀՏԲ): Դրանք մատնանշում են նշված տեղերի բնության կենսալի լինելու հանգամանքը:

Նշված այվ- արմատով են կազմված նաև ներքև սերվող տեղանունները:

Այվազ: Գյուղ Խարբերդի շրջանում: Տեղանվան երկրորդ բաղադրիչը հին հայ. ազազիլ «չորանալ» (ՀԱԲ) կրկնավոր բայի ազ- «չոր» արմատն է, որը հուշում է, թե տվյալ բնակավայրը ոչ միայն կենսալի բնություն է ունեցել, այլ նաև չոր տեղում է գտնվել:

Այվազալի: Լքված բնակավայրեր Արայի լեռան ստորոտում և Խարբերդի շրջանում, որոնց անվան վերջում նաև հայ. -ալի ածանցն է:

Այվազ սարքեր: Գյուղ Արցախում:

Այվաթցիք: Բնակավայր Խարբերդի շրջանում: Այդ տեղանվան մեջ այվ- արմատից հետո հայ. -ատ ածանցն է (հմմտ. մեջ և միջատ, կուտ և կոնատ) և -ցի ու-ք մասնիկները:

Այվալի: Գյուղ Դերսիմի շրջանում, որի անվան վերջում հայ. -ալի մասնիկն է:

Այվարլու: Բնակավայր Խարբերդի նահանգում: Տեղանվան մեջ նաև հայ. -ար ածանցն է (հմմտ. մեծ և մեծար, մութ և մթար) և թուրք. -լու մասնիկը:

Այվե: Գյուղ Տրապիզոնի նահանգում (տրք. Այվեն), որի հորջորջման վերջում հայ. -է ածանցն է (հմմտ. ոսկի և ոսկէ):

Այվերս: Գավառ Պարսկահայքում: Տեղանվան մեջ հայ. -եր հոգնակիակերտ մասնիկներ և հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչը:

Այվոս: Բնակավայր Խարբերդի շրջանում: Տեղանունը հայ. -ոք ածանցով է:

Այս բոլոր հին տեղանունները (ՀՏԲ) հուշում են տեղանքի կենսալի բնություն ունենալու մասին:

ԱՎԱՎԱՆ: Բնակավայր Վանի նահանգի Բաշկալեի շրջանում (ՀՏԲ): Այս տեղանունը կարելի է համեմատել ներքոհիշյալ Ավեղ, (-եղ ածանցով), Ավելի (-ելի մասնիկով), Ավող տեղանունների հետ: Դրանից պարզ է դառնում, որ Ավավան տեղանվան մեջ առանձնանում են ավ- բաղադրիչը և հայ. ավան «մեծ գյուղ» բառը:

Հին հայ. աւ «խենթություն, գծություն» (ՀԱԲ) արմատը չէր կարող գործածվել որպես տեղանուն:

Ուստի, կարծում ենք այն հնդեվրոպական նախալեզվի *au-«գիշերել, քնել» արմատն է (Pok.): Ու ձայնավորի վ դառնալը բառամիջում հին հայերենում շատ է տարածված:

Ավավան տեղանունը «գիշերելու տեղ ունեցող ավան» իմաստով հիշեցնում է Սասունի Խութ-Բոնաշեն գավառի Քնտ, Սղերդի Քներիա, Բոնիսի գավառի Քունակ, Բասենի Քունի և այլ հին գյուղերի անունները (ՀՏԲ):

Ստորև բերենք մայր լեզվի աու- արմատի հայերեն ավ- տարբերա- կով այլ տեղանուններ:

Ավաթաղ: Բնակավայր Վանի նահանգի Կարճկանի գավառում, որի հորջորջման մեջ նաև -ա հոդակապով թաղ բառն է:

Ավաջեր: Գյուղ Երևանի գավառում, որի անվան մեջ նաև -ա-հոդա- կապով հայ. ջերմ «տաք» բառն է առանց -մ ածանցի (հմմտ. ջերմ և ջե- ռուցել): Տեղանունը նշանակում է «գիշերելու համար տաք տեղ ունեցող գյուղ»:

Ավասար: Բնակավայր Վանի նահանգի Բերկրիի գավառում, որի ան- վան մեջ նաև -ա հոդակապով հին հայ. սոր «որջ, փոս» բառն է (ՀՏԲ):

Ավավ: Գյուղ Աղերդի շրջանում: Տեղանունը ավ- արմատի կրկնու- թյամբ է:

Ավավց: Գյուղ Վանի շրջանում: Տեղանունը ավ- արմատի կրկնու- թյամբ և հոգնակի թվի սեռական հոլովի -ց ցուցիչով է:

Ավդյուր: Բնակավայրեր Արցախում և Աղբակ գավառում, որոնց ան- վան երկրորդ բաղադրիչը հին հայ. դիւր «հարթ, հարթ տեղ» բառն է (ՀԱԲ):

Ավեղ: Գյուղ Աղձնիք նահանգի Սալնո ձոր գավառում: Տեղանվան վերջում հայ. -եղ ածանցն է (հմմտ. գոր և գորեղ):

Ավեն: Բնակավայր Բիթլիսի նահանգում: Տեղանվան վերջում հայ. -են ածանցն է:

Ավեշ: Գյուղ Վայոց ձոր գավառում, որի անվան վերջում հայ.-եշ ածականակերտ ածանցն է (հմմտ. քեն և խենեշ):

Ավեշար: Բնակավայր Բայազետի գավառում: Տեղանվան մեջ նաև հայ. շար «շարք, խումբ» բառն է -ե- հոդակապով:

Ավին: Գյուղ Բիթլիսի նահանգի Խիզանի գավառում, որի անվան վերջում հայ. -ին մասնիկն է (հմմտ. կարգ և կարգին):

Ավիսկ: Բնակավայր Սասունում: Տեղանվան վերջում հայ. իսկ բառն է «բուն» իմաստով (ՀԱԲ):

Ավկի: Գյուղ Սալմաստի գավառում, որի անվան վերջում հայ. -կի մասնիկն է (հմմտ. լուցկի):

Ավյան: Բնակավայր Ուրմիա լճից քիչ դեպի արևմուտք: Տեղանվան վերջում հայ. -յան ածանցն է:

Ավշար: Արդի գյուղ Արարատի շրջանում, որի անվան մեջ նաև հայ. շար «շարք, խումբ» բառն է (ՀԱԲ):

Ավշեն: Բնակավայր Դիարբեքիի նահանգում, Շամախի ու Արագա- ծի շրջաններում, որոնց անվան մեջ նաև շեն «շինվածք, շինություն» բառն է:

Ավոդ: Գյուղ Բաբերդի գավառակում: Տեղանվան վերջում հայ. -ոդ ածանցն է: Այդ նույն ավ- արմատը «գիշերելու տեղ» իմաստով և հին հայ. գ- սաստկական նախաածանցով հանդիպում է նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Ջավե: Գավառ Արցախ նահանգում, հետագայում Ղազախի տարած- քում: Տեղանվան վերջում հայ. -ե ածանցն է (հմմտ. թուղթ և թղթե):

Ջավի: Բնակավայր Բաբերդի շրջանում, որի հորջորջման վերջում հայ. լի «լի» բառն է:

Վերը բերված բոլոր տեղանունները (ՀՏԲ), կազմված մայր լեզվի աու- արմատի հայկական ավ- տարբերակից, մատնանշում են այդ տե- դերում իջևանատան գոյությունը:

ԱՎԳԵՆ: Գյուղ Դիարբեքիի շրջանում (ՀՏԲ): Երբ այս տեղանունը համեմատում ենք ստորև բերվող Ավգյան և Ավկեր հին բնակավայրերի անունների հետ, պարզվում է, որ դրանում առանձնանում է հայերեն **գրավոր** աղբյուրներին անծանոթ ավգ- բաղադրիչը և հայ. -եր հոգնա- կիակերտ ածանցը:

Հին հայ. աւգեր «անծանոթ մի ծաղիկ» բառը (ՀԱԲ) մեր կարծիքով չէր **կարող** տեղանք բնորոշել և գործածվել որպես տեղանուն:

Կարծում ենք, այն հնդեվրոպական մայր լեզվի *aug- «փայլել» ար- վատն է (Рок.), որի ու հնչյունը հին հայերենում դարձել է վ (հմմտ. բու և **վեճ**, ձու և ձվան):

Ավգեր տեղանունը իր «փայլուն» իմաստով հիշեցնում է Վայոց ձոր գավառի Փայլտուն գյուղի, Ակնի Փայլեվանքի և Բարգուշատի լեռների Փելասար գագաթի անունները (ՀՏԲ):

Ավգ- արմատը «փայլուն» իմաստով մենք տեսնում ենք նաև ներքո-հիշյալ տեղանուններում:

Ավգենի: Գյուղ Շատախի շրջանում, որի անվան վերջում հայ. -ենի ածանցն է (հմմտ. վարդենի, թզենի):

Ավգերմ: Բնակավայր Սուշի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ե-րիմ ածանցն է (հմմտ. միտք և մտերիմ) ի ձայնավորի աղումով:

Ավգյան: Լեռ Ուրմիա լճի հարավ-արևմտյան կողմում, որի հորջորջման մեջ հայ. -յան ածանցն է:

Ավկեր: Գյուղեր Դիարբեքիքի և Բիթլիսի նահանգի Խիանք գավառներում, որոնց անվան վերջում հայ. -եր հոգնակիակերտ մասնիկն է:

Տեղանունը հին հայաերենի գ հնչյունի կ տարբերակով է (ՕԿ., էջ 298):

Թվարկված հին տեղանունները (ՀՏԲ) հուշում են գյուղի կամ լեռան փայլուն տեսք ունենալու մասին:

Բ

ԲԱՂԵՆԸ: Գյուղ Թումանյանի շրջանում (ՀՏԲ): Երբ այս տեղանունը բաղդաստում ենք ներքև բերվող Բաղի, Բաղիր, Բաղուն հին բնակավայրերի անունների հետ, պարզ է դառնում, որ դրանում առկա է բաղ-բաղադրիչը և հայ. -ենք ածանցը:

Հին հայերենի բաղ «ընտանի թռչուն» բառը չէր կարող դառնալ տեղանուն: Ուստի, կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի bhāḍ-«լավ» արմատն է (Рок.):

Բաղենք տեղանունը «լավ» իմաստով մեզ հիշեցնում է Վանի գավառի Լավար (-ար ածանցով, հմմտ. մութ և մթար, մեծ և մեծար), Մարանդի գավառի Լավերջան (երջանիկ բառի հետ) և Թորթումի գավառի Լավձոր հին գյուղերի անունները (ՀՏԲ):

Այդ բաղ- «լավ» արմատը մենք տեսնում ենք նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Բաղա: Գյուղ Բիթլիսի շրջանում, որի անունը հայ. սեռական հոլովի -ա ցուցիչով է:

Բաղաբար: Հին բնակատեղի Կապանի շրջանում: Տեղանվան մեջ նաև հայ. -աբար ածանցն է:

Բաղալ: Բնակավայր Հոկտեմբերյանի շրջանում (այժմ՝ Եղեգնուտ), որի հորջորջման մեջ առկա է հայ. -ալ ածանցը՝ -աղ մասնիկի հին տարբերակը (հմմտ. խաղ և խաղաղ, կյանք և կենցաղ):

Բաղալան: Գյուղ Խոյի շրջանում, որի անվան մեջ նշված -ալ և հոգնակիակերտ -ան ածանցներն են:

Բաղալի: Լքված գյուղ Թալիսի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -ալի ածականակերտ ածանցն է:

Բաղաշխան: Բնակավայր Նախիջևանի շրջանում, որի հորջորջման մեջ հայ. -աշ ածանցն է և հին խան «իջևան» բառը:

Բաղավլի: Գյուղ Մակուի շրջանում, որի անվան վերջում հայ. գործիական հոլովի -ավ ցուցիչն է և լի «լի» բառը:

Բաղարա: Ժամանակակից գյուղ Արցախի Ասկերանի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ար ածանցն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Բաղարան: Գյուղ Դերսիմի շրջանում: Տեղանունը հայ. -արան մասնիկով է:

Բաղե: Բնակավայր Բիթլիս քաղաքից քիչ դեպի հարավ-արևելք, որի հորջորջման մեջ հայ. -է ածանցն է:

Բաղել: Գյուղ Արդահանի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -ել ածանցն է՝ -եղ մասնիկի հին տարբերակը:

Բաղեկ: Բնակավայր Սդերդի շրջանում, որի անվան մեջ առկա է հայ. -կ բառը (հմմտ. առաջնեկ, փոխնեկ, միջնեկ):

Բաղի: Գյուղախումբ Խարբերդի նահանգում: Տեղանունը հայ. սեռական հոլովի -ի ցուցիչով է:

Բաղիլի: Բնակավայր Ալաշկերտի շրջանում, որի անվան մեջ հայ. -իլ ածանցն է (հմմտ. տեսիլ, հմայիլ) և սեռական հոլովի -ի ցուցիչը:

Բաղիկան: Գյուղեր Սուշի շրջանում և Դիարբեքիի նահանգում: Այս տեղանվան մեջ հայ. -իկ և -ան ածանցներն են:

Բաղիկյան: Բնակավայրեր Կամոյի և Շատախի շրջաններում, որոնց անվան մեջ հայ. -իկ և -յան մասնիկներն են:

Բաղլիս: Գյուղ Աղձնիքում, որի անվան վերջում նաև հայ. լի «լի» բառն է հոգնակի հայցական հոլովի հին -ս ցուցիչով:

Բադ: Բնակավայր Տաշիրում (այժմ՝ Նորաշեն): Տեղանվան վերջում սեռական հոլովի -ո ցուցիչն է:

Բադուն: Գյուղ Բայազետի գավառում, որի անվան վերջում հայ. -ուն ածանցն է:

Հնդեվրոպական նախալեզվի d հնչյունը հին հայերենում դարձել է թ և տ (ՕԿ., էջ 298):

Ներքև բերվող տեղանունները կազմված են բաղ- արմատի այդ տարբերակներով:

Բաթա: Գյուղ Սդերդի գավառում, որի անունը վերջանում է հայ. սեռական հոլովի -ա ցուցիչով:

Բաթաբաթ: Հին բնակատեղի Երևանի նահանգում: Տեղանունը բաթ- արմատի կրկնությամբ է:

Բաթան: Գյուղակ Ջուլամերկի շրջանում, որի հորջորջման վերջում հայ. -ան հոգնակիակերտ մասնիկն է:

Բաթանի: Բնակավայր Դիարբեքիի գավառում, որի անվան վերջում հայ. -անի ածանցն է:

Բաթար: Գյուղ Քաշաթաղի շրջանում (տրբ. Բատար), որի անունը վերջանում է հայ. - ար ածանցով:

Բաթգյուլ: Լեռ Քղիի շրջանում, որի երկրորդ բաղադրիչը հայ. գոլ «տաք» բառն է որը թուրքերի կողմից աղավաղվել է: Այն նշանակում է «լավ տաք լեռ»:

Բաթընթալ: Գյուղակ Խուրի շրջանում:

Բաթիվան: Բնակավայր Բիթլիսի շրջանում, որի անվան մեջ նաև -ի- հոդակապով հին հայ. վան «բնակավայր» բառն է:

Բաթկան: Գյուղ Աղբակ գավառում: Տեղանվան մեջ նաև հայ. -կան ածանցն է (հմմտ. լծել և լծկան):

Բաթման: Գետ Սասունում, որի հորջորջման վերջում հայ. -մն ածանցն է սեռական հոլովաձևով (հմմտ. ջերմ և ջերման, կողմն և կողմնան):

Բատաբար: Լճակ Արաքս և Որոտան գետերի ջրբաժանի շրջանում, որի անվան վերջում հայ. -աբար ածանցն է:

Բատակալ: Գյուղ Երևանի նահանգի Գյոկչայի գավառում: Տեղանվան վերջում -ա- հոդակապով -կալ բաղադրիչն է (հմմտ. ոխակալ, ձերբակալ):

Բատականց: Բնակավայր Վանա լճի հարավային ափին: Տեղանվան մեջ հայ. -ական և հոգնակի թվի սեռական հոլովի -ց ցուցիչն է:

Բատամիսա: Գյուղ Էրզրումի գավառում: Տեղանվան մեջ նաև հայ. ամ-«լի» բառն է և -իք ածանցը հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով ու սեռական հոլովի -ա վերջավորությամբ (դրանք ավելացել են իրարից բաժան ժամանակներում):

Բատան: Բնակավայրեր Վերին Բասենում և Պարսկահայքում, որոնց անունը վերջանում է հայ. հոգնակիակերտ -ան մասնիկով:

Բատանի: Գյուղ Պարսկահայքի Սուլդուզի գավառակում: Տեղանվան վերջում հայ. -անի ածականակերտ մասնիկն է:

Բատիկյան: Բնակավայր Մարտունու շրջանում, որի անվան վերջում հայ. -իկ և -յան մասնիկներն են:

Հնդեվրոպական մայր լեզվի dh հնչյունը հին հայերենում դարձել է նաև պ և փ (ՕԿ., էջ 298):

Բաղ «լավ» - արմատի պ և փ տարբերակները մենք տեսնում ենք ներքև բերվող տեղանուններում:

Պադար: Գյուղ Զանգեզուրում: Տեղանվան վերջում հայ. -ար ածանցն է:

Պադլիս: Բիթլիս քաղաքի հին անունն է, որի մեջ պաղ «լավ» արմատից բացի հայ. լի «լի» բառն է և հոգնակի հայցական հոլովի հին -ս ցուցիչ:

Պաթկան: Գյուղ Աղբակ գավառում: Տեղանվան մեջ հայ. -կան ածանցն է (հմմտ. լծել և լծկան):

Փաղիկ: Բնակավայր Մուշի գավառում:

Փաթախ: Լեռնանցք Հայկական Տավրոս լեռներում, որի անվան վերջում հայ. -ախ ածանցն է (հմմտ. շաղել և շաղախ, հաճախ):

Փաթեր: Գյուղ Բիթլիսի նահանգի Խիզանի գավառում:

Վերը բերված բոլոր հին տեղանունները (ՀՏԲ), որոնք իրենց կազմում ունեն մայր լեզվի բաղ-վածք՝ արմատը և դրա հայկական տարբերակները, հուշում են տեղանքի լավ բնություն ունենալու կամ գյուղի դիրքի մասին:

ԲԱՆԴԻՎԱՆ: Գյուղ Ամասիայի շրջանում (ՀՏԲ): Երբ այդ տեղանունը բաղդատում ենք ներքոհիշյալ Բանդալա, Բանդո և Բանդուր հին բնակավայրերի անունների հետ, պարզվում է, որ դրա մեջ բանդ- բառն է: Հին հայերենի պարսկերենից փոխառված բանդ «երաժշտական գործիքի լար» բառը իր իմաստով չէր կարող գործածվել որպես տեղանուն (ՀՏԲ): Ուստի այն կարելի է բխեցնել հնդեվրոպական նախալեզվի band- «կաթիլ» արմատից (Pok.):

Դա հիշեցնում է Կաղզվանի Կաթիլք լեռան, Խաղտիքի շրջանի Կաթլա և Հրազդանի Կաթ-կաթ հին գյուղերի անունները (ՀՏԲ), որոնք հուշում են, թե նշված տեղերը անձրևոտ են:

Տվյալ բանդ- արմատը «կաթիլ» իմաստով հանդիպում է նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Բանդալա: Գյուղ Երզնկայի գավառում, որի անվան վերջում հայ. -ալ ածանցն է, -աղ մասնիկի հին տարբերակը և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Բանդեխլու: Բնակավայր Ելիզավետպոլի գավառում: Տեղանվան վերջում հայ. -եխ ածանցն է (հմմտ. գոռ և գոռեխ, կեռ և կեռնեխ) և թուրք. -լու մասնիկը:

Բանդիմահ: Գյուղաքաղաք և գետ (տրբ. Պանտիմահի) Վասպուրական նահանգում, որի հորջորջման մեջ նաև -ի- հոդակապով հին հայ. մայեակ «շտեմարան» (ՀՏԲ) բառի մայ- արմատն է:

Բանդիր: Գյուղ Բայազետի գավառում, որի հորջորջման մեջ հայ հին. -իր ածանցն է (հմմտ. երկ-ինք և երկ-իր):

Բանդո: Գյուղ Երզնկայի գավառում: Տեղանվան վերջում հայ. սեռական հոլովի -ո վերջավորությունն է:

Բանդուբան: Բնակավայր Ալեքսանդրապոլի գավառում (տրբ. Պանտուպան): Կարծում ենք, այս տեղանվան մեջ -ու- հոդակապով կրկնված է բանդ- արմատը: Դրանցից երկրորդի վերջում դ հնչյունը ընկել է:

Բանդուր: Գյուղ Բայազետի գավառում, որի անվան վերջում հայ. -ուր ածանցն է (հմմտ. պուճախ և պուճուր):

Հնդեվրոպական մայր լեզվի b հնչյունը հին հայերենում դարձել է նաև պ ու փ, իսկ d-ն՝ նաև տ (Օս., էջ 298): Նշված հնչյունների տարբերակներով բանդ- արմատը հանդիպում է ներքոհիշյալ տեղանուններում:

Պանդ: Լեռ և լեռնաճյուղ Գանձակի լեռներում (տրբ. Պանտ):

Պանդոս: Գետ Արածանիի ավազանում, որը Մանազկերտի գետն է: Տեղանունը վերջանում է հայ. -ոք ածանցով, որում հին հայ. հոգնակի հայցականի -ս ցուցիչն է:

Պանդեղիկ: Գյուղ Ղարադաղի գավառում: Տեղանվան մեջ նաև հայ. -ել մասնիկն է՝ -եղ ածանցի հին ձևը և -իկ վերջավորությունը:

Պանտարգի: Բնակավայր Արաբկիրի գավառում, որի հորջորջման մեջ նաև հին հայ. արգ «յարգ, արժանիք» բառն է (ՀՏԲ): Այդ տեղանունը նշանակում է «հարգելի չափով անձրևոտ»:

Փանդիկ: Գյուղ Մուշի գավառում:

Բերված այս տեղանունները (ՀՏԲ), որոնց կազմում մայր լեզվի բանդ «կաթիլ» արմատն է և իր հայկական տարբերակները, մատնանշում են այդ տեղերի անձրևոտ լինելը:

ԲԱՍԿԱՆ: Գյուղ Մուշի շրջանում (ՀՏԲ, տրբ. Բասքան): Այդ տեղանունը կարելի է համեմատել ներքոհիշյալ Բասկել և Բասկուտ հին գյուղերի անունների հետ: Պարզվում է, որ դրանում առանձնանում է բասկ-բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում: Կարծում ենք, վերջինս հնդեվրոպական նախալեզվի *bhasko- «կապ, շար» արմատն է (Pok.), որի վերջին ձայնավորը հին հայերենում ընկել է շեշտի նախավերջին վանկի վրա հաստատվելու հետևանքով (ՀԼՊ, էջ 228):

Չորրորդ Հայք նահանգի Կապան (-ան մասնիկով), Սյունիքի Կապան, Արդահանի Կապան, Օլթրիի Կապան հին գյուղերը (ՀՏԲ) այդպես կոչվել են իրենց կապող դիրք ունենալու հետևանքով:

Տվյալ բասկ-«կապ» արմատը մենք տեսնում ենք նաև ստորև բերվող տեղանուններում:

Բասկել: Գյուղ Մալաթիայի շրջանում, որի անվան վերջում հայ. -ել ածանցն է, -ել մասնիկի հին ձևը:

Բասկուն: Բնակավայր Էրզրումի նահանգի Վարդոյի շրջանում: Տեղանունը վերջանում է հայ. ածականակերտ -ուն մասնիկով:

Բասկուտ: Լեռ Օլթրիից մոտ 25կմ հյուսիս-արևելք, որի անվան վերջում հայ. -ուտ ածանցն է:

Մայր լեզվի k հնչյունը հին հայերենում դարձել է նաև p (ՀԼՊ, էջ 253): Այդ փոփոխությամբ են հետևյալ տարբերակները:

Բասքամ: Գյուղ Մուշի շրջանում, որի անվան վերջում հին հայ. ամ-«-լի» բառն է:

Բանքան: բնակավայր Ալաշկերտի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -ան ածանցն է:

Հնդեվրոպական մայր լեզվի bh հնչյունը հին հայ. դարձել է նաև պ (ՕԿ., էջ 298), k-ն՝ նաև խ (ՀԼՊ, էջ 253):

Պասխան: Գյուղ Արդվիհի շրջանում, որի հորջորջման մեջ նաև հայ. -ան մասնիկն է:

Վերը բերված հին տեղանունները (ՀՏԲ) իրենց հիմքում ունեն մայր լեզվի բասկ- «կապ» արմատը և վերջինիս հայկական տարբերակները, հուշում են այդ բնակավայրերի կապող դիրք ունենալու մասին:

ԲԱՐՍ: Գյուղակ Վանի նահանգի Խիզանի շրջանում (տրբ. Փարս, ՀՏԲ):

Հին հայերենի բարս արմատը, ինչպես Հ. Աճառյանը նշում է, անծանոթ և առանձին անգործածական է, որից կազմված է բարսագիտությունը «հեշտասիրության» իմաստով: Իսկ Բարսեալ բառը մեկ անգամ է հանդիպում, որը ըստ հունարեն բնագրի նշանակում է «կեղծեալ» (ՀԱԲ): Դրանցից ոչ մեկն էլ իր իմաստով չէր կարող գործածվել որպես տեղանուն:

Ուստի, կարծում ենք, Բարս տեղանվան մեջ առկա հնդեվրոպական նախալեզվի *bhares - «գարի» արմատը (Pok.), որի վերջին ձայնավորը ընկել է շեշտի նախավերջին վանկի վրա հաստատվելու հետևանքով (ՀԼՊ, էջ 228):

Այդ իմաստն ունեն Դիարբեքիի նահանգի Գարիկ, նույնի Մարդինի շրջանի Գարին, Խարբերդի գավառի Գարինկերտ և Մոկսի գավառակի Գարիս հին գյուղերի անունները (ՀՏԲ), որոնք հուշում են նշված տեղերում գարու լավ բերքի առկայության մասին: Բարս- արմատը «գարի» իմաստով հանդիպում է նաև ստորև բերվող տեղանուններում:

Բարսամ: Գյուղ Շամխորի շրջանում (այժմ՝ Բարսում): Տեղանվան մեջ նաև հին հայերենի ամ-«լի» արմատն է (հմմտ. ամալ «լցնել» ՀԱԲ):

Բարսի: Բնակավայր Վանի նահանգի Աղբակ գավառում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ի ցուցիչն է:

Բարսեմե: Գյուղ Դիարբեքիի գավառում: Տեղանվան վերջում հայ. -եմ և -ե ածանցներն են:

Բարսունելի: Բնակավայր Ելիզավետպոլի գավառում, որի անվան մեջ հայ. -ուն և -ելի մասնիկներն են:

Մայր լեզվի bh հնչյունը հին հայերենում դարձել է նաև պ (ՕԿ., էջ 298): Բարս- արմատը պարս- տարբերակով հանդիպում է նաև ներքև բերվող տեղանուններում:

Պարս: Գյուղ Վանի նահանգի Հեքյարի գավառում (տրբ. Փարս):

Պարսաբի: Բնակավայր Կոտայքի շրջանում, որի անվան վերջում -ա- հոդակապով -բի ածանցն է (հմմտ. արամբի):

Պարսական: Գավառ Արցախ նահանգում (տրբ. Պարսկանք, Պարզկանք):

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ) ցույց են տալիս, որ այդ բնակավայրերի հողերը գարու հարուստ բերք են տալիս:

ԲԵՂԱՉՈՐ: Գյուղ և տեղի առկա Արդվինի շրջանում (ՀՏԲ): Երբ այս տեղանունը համեմատում ենք ներքոհիշյալ Բեղիր և Բեղուկ հին գյուղերի անունների հետ, պարզվում է, որ դրանում առանձնանում է բեղ- բառը, որը խորթ է հայկական գրավոր աղբյուրներին:

Կարծում ենք, վերջինս հնդեվրոպական նախալեզվի *bhedh-«ծռել, կորացնել» արմատն է (Pok.):

Այդ նույն իմաստով մենք ունենք Բասեն գավառի Ծուռս, Բիթլիսի Կոր, Այնթափի շրջանի Կորան, Շատախի Կորան և այլ գյուղերի անուններ (ՀՏԲ), որոնք մատնանշում են դրանց տարածքի կոր կամ ծուռ դիրք ունենալու մասին:

Նախալեզվի բեղ- արմատը նշված իմաստներով առկա է նաև ներքև բերվող տեղանուններում:

Բեղան: Գյուղ Դիարբեքիրի գավառում, որի անվան վերջում հայ. -ան հոգնակիակերտ ածանցն է:

Բեղավ: Բնակավայր Վանի նահանգի Հերիկի գյուղախմբում: Տեղանվան մեջ հայ. գործիական հոլովի -ավ ցուցիչն է:

Բեղար: Գյուղեր Վանի նահանգի Ջուլամերկի և Ալաշկերտի շրջաններում, որոնց անվան վերջում հայ. -ար ածանցն է (հմմտ. մուր և մթար, մեծ և մեծար):

Բեղելի: Բնակավայր Վանի նահանգի Հեքյարի գավառում: Տեղանվան մեջ հայ. -ելի մասնիկն է:

Բեղենի: Լեռներ Փոքր Կովկասում, նախկին Բորչալուի տարածքում, որի հորջորջման վերջում հայ. -ենի ածանցն է:

Բեղերսկ: Գյուղ Արդահանի շրջանում, որի անվան վերջում հայ. -եր մասնիկն է, հին հայ. հոգնակի հայցական հոլովի ս- ցուցիչը և -կ աճականը:

Բեղիր: Բնակավայր Ալաշկերտի շրջանում: Տեղանվան մեջ նաև հայ. հին -իր ածանցն է:

Բեղլիս: Բիթլիս քաղաքի անունն է (տրբ. Բեթլիս), որի անվան մեջ բեղ - «ծուռ» արմատից հետո հայ լի «լի» բառն է և ապա՝ հին հայ. հոգնակի հայցական հոլովի ս- ցուցիչը:

Բեղուկ: Գյուղ Դիարբեքիրի նահանգի Բշերիկի գավառում, որի անվան վերջում հայ. -ուկ ածանցն է:

Հնդեվրոպական նախալեզվի bh հնչյունը հին հայերենում դարձել է նաև պ ու փ, իսկ dh-ն՝ նաև թ ու տ (Օւ., էջ 298):

Մայր լեզվի բեղ- «կոր» արմատը ներքև բերվող տեղանուններում հանդիպում է նշված հնչյունական տարբերակներով:

Բեթամին: Գյուղ Բիթլիսի նահանգի Խիզանի շրջանում (տրբ. Պեթամին), որի անվան վերջում հին հայ. ամ- «լի» բառն է և -ին ածականակերտ ածանցը:

Բեթամա: Բնակավայր Դիարբեքիրի նահանգում: Տեղանվան մեջ նշված ամ-«լի» բառն է հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Բեթար: Գյուղ Մուշի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ար ածանցն է (հմմտ. փայլ և փայլար, պայտ և պայտար, տիպ և տիպար):

Բեթել: Բնակավայր Բիթլիսի նահանգում, որի հորջորջման վերջում հայ. -ել ածանցն է, -ել մասնիկի հին տարբերակը:

Բեթկար: Գյուղ Վանի նահանգի Բեթելաբարի գավառում: Տեղանվան մեջ նաև հին հայ. կար «կցում» արմատն է (ՀԱԲ): Տեղանունը նշանակում է «կոր և իրար կից տեղեր»: Այդ անունով կոչվել են նաև Վանի նահանգի Հերիկի գյուղախմբի և Ջուլամեկի շրջանի մեկական բնակավայր:

Պեղկան: Բնակավայր Ակնի գավառակում, որի անվան վերջում հայ. -կան ածանցն է (հմմտ. խռով և խռովկան, լծել և լծկան):

Պետար: Գյուղ Մոկսի գավառակում: Տեղանվան վերջում հայ. -ար ածանցն է:

Պետեզրեկ: Բնակավայր Տայքի Արսյացփոր գավառում, որի անվան մեջ նաև հայ. ազարակ բառն է քիչ աղավաղված ձևով:

Պետերես: Գյուղ Արցախի Մարտունու շրջանում, որի անվան վերջում հայ. -եր և -եք ածանցներն են:

Պետիր: Բնակավայր Բայազետի գավառում: Տեղանվան մեջ հայ. -իր ածանցն է:

Պետշենի: Գյուղ Զավախքում, որի անվան մեջ նաև հայ. շեն բառն է:

Պետտ: Բնակավայր Վանի գավառում: Տեղանունը հայ. սեռական հոլովի -ո ցուցիչն ունի:

Փեդար: Գյուղ Մուշի շրջանում, որի անունը վերջանում է հայ. -ար ածանցով:

Փեթեվան: Բնակավայր Սյունիքի նահանգում (տրբ. Փեթիվան): Տեղանվան մեջ -ե- հոդակապով նաև հին հայ. վան «բնակություն» բառն է:

Փետատեղ: Գյուղակ Սոկսի շրջանում, որի անվան մեջ նաև -ա- հոդակապով հայ. տեղ բառն է:

Փետար: Բնակավայր Մուշի գավառում, որի անունը վերջանում է հայ. -ար ածանցով:

Փետեզրեկ: Գյուղ Կիսկիմի գավառակում: Տեղանվան մեջ նաև հայ. ազարակ բառն է:

Փետղան: Բնակավայր Խարբերդի գավառում, որի հորջորջման մեջ նաև հին հայ. խան «իջևան» բառն է քիչ աղավաղված ձևով:

Փետ Վերին և Ներքին: Գյուղեր Վանի գավառում:

Բերված բոլոր տեղանունները (ՀՏԲ), որոնք կազմված են մայր լեզվի բեղ-«կոր» արմատից և դրա հայկական տարբերակներից, հուշում են տեղանքի կոր լինելու մասին:

ԲԵԼ: Գյուղ Տարոնում (տրբ. Պել, ՀՏԲ):

Հին հայերենը բել արմատ չի ունեցել: Իսկ Ասորեստանի Բել տիրակալը, ինչպես հայ պատմիչները գրում են, փորձում էր նվաճել Հայաստանը: Նա Հայկ նահապետի և հայերի թշնամին էր: Ուստի հայերը նրա անունով բնակավայրեր և լեռներ չէին կարող կոչել:

Կարծում ենք, Բել տեղանունը կազմված է հնդեվրոպական նախալեզվի *bel- «կտրել, հանել, փորել» արմատից (Pok.):

Այդ նույն իմաստն ունեն Վայքի շրջանի Փոր, Էջմիածնի գավառի Փորս (հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով), Վանի նահանգի Կարճկանի գավառի Փորե (-է ածանցով), Բասենի գավառակի Փորսող, Կապանի Փորաշենիկ (ՀՏԲ) գյուղերի անունները, որնք հուշում են, թե այդ բնակավայրերում տները գետնափոր են եղել:

Բել արմատը նշված իմաստով մենք տեսնում ենք նաև ստորև բերվող տեղանուններում:

Բելագի: Գյուղ Սդերդի շրջանում, որի անվան վերջում հայ. -ագ ածանցն է (հմտ. վայր և վայրագ) սեռական հոլովի -ի ցուցիչով:

Բելաթո: Բնակավայր Վանի նահանգի Զալի գյուղախմբում: Տեղանվան մեջ առկա են հայ. -առ ածանցը և սեռական հոլովի -ո ցուցիչը:

Բելակ: Գյուղ Շարուր գավառում:

Բելան: Բնակավայր Երզնկայից մոտ 62կմ հյուսիս-արևմուտք, որի անվան վերջում հայ. -ան հոգնակիակերտ մասնիկն է:

Բելանի: Գյուղ Երզնկայից մոտ 30կմ հարավ-արևելք: Տեղանվան վերջում հայ. -անի ածանցն է:

Բելառ: Բնակավայր Սասունում, որի անվան -ալ ածանցը սեռական հոլովի -ու ցուցիչն ընդունելուց զարձել է -առ:

Բելե: Գյուղ Վանի նահանգի Զուլամերկի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -է ածանցն է:

Բելելի: Բնակավայր Ալեքսանդրապոլի գավառում: Տեղանվան մեջ հայ. -ելի ածականակերտ ածանցն է:

Բելել: Գյուղ Գողթն գավառում, որի անվան վերջում հայ. գործիական հոլովի -ել մասնիկն է:

Բելեքի: Լեռ Հայկական պար լեռնաշղթայում: Տեղանվան վերջում հայ. -եք ածանցն է և սեռական հոլովի -ի ցուցիչը: Այն այդպես կոչվել է անդունդներով հարուստ լինելու պատճառով:

Բելի: Գյուղ Զուլամերկի շրջանում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ի ցուցիչն է:

Բելիզան: Բնակավայր Բայազետի գավառում: Տեղանվան մեջ հայ. -իկ և -ան ածանցներն են:

Բելիկի: Գյուղ Սղերդի շրջանում, որի անվան վերջում -իկ ածանցն է և սեռական հոլովի -ի ցուցիչը:

Բելիսովա: Բնակավայր Շատախի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -իք ածանցն է հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով և ովա «հովիտ» բառը:

Բելլո: Գյուղ Ռշտունիք գավառում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ու ցուցիչով լի «լի» արմատն է:

Բելխան: Քաղաք Խարբերդի Անձիտ գավառում: Տեղանվան մեջ նաև հին հայ. խան «իջևան» բառն է (ՀԱԲ):

Բելկան: Գյուղ Վանա լճի հարավ-արևմտյան ափին, որի հորջորջման մեջ հայ. -կան ածանցն է (հմմտ. հեծնել և հեծկան, լացել և լացկան):

Բելկանիա: Բնակավայր Վանա լճի հարավային ափին: Տեղանվան մեջ առկա են նշված -կան և հետո -իա ածանցները:

Բելկանա: Գյուղ Բիթլիսի նահանգի Խիզանի շրջանում: Տեղանվան վերջում նշված -կան ածանց է հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Բելկանց: Բնակավայր Սյունիքի Ծղուկ գավառում, որի անվան վերջում հայ. -կան ածանց է հին հայ. հոգնակի սեռական հոլովի -ց ցուցիչով:

Բելյագ: Գյուղեր Սուշի և Սղերդի շրջաններում: Կարծում ենք, տեղանվան վերջում -յ- ձայնակապով հին հայ. ազ -«չոր» բառն է (ՀԱԲ):

Բելյակ: Բնակավայրեր Բիթլիսի և Շարուրի գավառներում: Տեղանվան մեջ հայ. -եակ ածանցն է:

Բելյան: Գյուղ Վանի նահանգի Բեթելշաբաբ գավառակում, որի հորջորջման վերջում հայ. -յան մասնիկն է:

Բելյասոր: Բնակավայր Բայազետի գավառում, որի անվան մեջ հայ. -յա մասնիկն է և հին սոր «ծակ, խոռոչ, փոս» արմատը (ՀԱԲ):

Բելջան: Լեռներ Վանա լճից քիչ արևմուտք: Տեղանվան վերջում հայ. -ջան կամ -ճան ածանցն է (հմմտ. դավ և դավաճան):

Բելո: Գյուղ Աղձնիքի և Վասպուրականի սահմանին (տրբ. Պելու, Պելո), որի անվան վերջում հայ. -ու ածանցն է (հմմտ. ազդու, հաղթու):

Բելուզան: Բնակավայր Բիթլիսի գավառում: Տեղանվան վերջում, կարծում ենք, հայ. -ուկ (բարբառային ձևով) և -ան ածանցներն են:

Բելուկամ: Գյուղ Արցախում: Տեղանվան մեջ հայ. -ուկ ածանցն է և հին հայ. ամ-«լի» բառը:

Բելուկան: Գավառ Արցախում, որի անվան մեջ -ուկ և -ան ածանցներն են:

Բելուդան: Գյուղակ Խուրի շրջանում: Տեղանվան մեջ նաև հին հայ. խան «իջևան» բառն է քիչ աղավաղված ձևով:

Բելուր: Գյուղ Արճեշի գավառում: Տեղանվան վերջում հայ. -ուր ածանցն է:

Բելք: Բնակավայր Դերջանի շրջանում:

Հնդեվրոպական նախալեզվի bh հնչյունը հին հայերենում դարձել է նաև պ (ՕԿ., էջ 298): Բել -արմատը պել -տարբերակով մենք տեսնում ենք նաև ներքև բերվող տեղանուններում:

Պելան: Գյուղ Սասունում, որի անվան վերջում հայ. -ան ածանցն է:

Պելավ: Բնակավայր Սասունի Փոնք գավառում: Տեղանվան վերջում հայ. գործիական հոլովի -ավ ցուցիչն է:

Պելեզու: Գյուղ Քղիի շրջանում, որի անվան մեջ հայ. եկ բառն է բարբառային հնչմամբ (հմմտ. միջին և միջնեկ) և -ոք մասնիկը հին հոգնակի թվի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Պելեմլի: Բնակավայր Ապարանի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -եմ ածանցն է (հմմտ. խոհ և խոհեմ) և լի «լի» բառը:

Պելենց: Գյուղ Մոկսի գավառակում, որի անվան վերջում հայ. -ենք մասնիկն է:

Պելին: Բնակավայր Մալաթիայի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ին ածականակերտ ածանցն է:

Պելսար: Լեռ Սյունիք նահանգի հյուսիս-արևելյան կողմում:

Պելուլ: Գյուղ Վանի նահանգի Կարճկանի գավառում, որի անվան վերջում հայ. -ուլ ածանցն է (հմմտ. թաթ և Թաթուլ):

Նշված բոլոր տեղանունները (ՀՏԲ), որոնք կազմված են մայր լեզվի բել- արմատից և դրա հայերեն տարբերակներից, մատնանշում են, որ այդ բնակավայրերի տները գետնափոր են, իսկ լեռները փոսեր՝ անդունդներ ունեն:

ԲԵՆՆԻԿ: Ավան Թումանյանի շրջանում (ՀՏԲ):

Այդ տեղանունը բաղդատելով ստորև բերվող Բենդիվան, Բնդեվան և Բենդուրի հին գյուղերի անունների հետ՝ պարզվում է, որ դա իր մեջ ունի բենդ- բաղադրիչը և հայ. -իկ ածանցը: Հայկական ձեռագիր աղբյուրներում բենդ բառ չի հանդիպում:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *bhendh-«կապել» արմատն է (Pok.):

Այդպիսի իմաստ ունեն Սյունիքի Կապան (-ան ածանցով), Խարբերդի Կապան, Բիթլիսի Կապակ (-ակ մասնիկով) հին հայկական գյուղերի անունները (ՀՏԲ):

Ստորև բերվող տեղանունների հիմքում ընկած է նշված բենդ- արմատը «կապ» իմաստով:

Բենդավա: Գյուղ Վանի նահանգի Բերկրի գավառակում, որի անվան մեջ հայ. գործիական հոլովի -ավ և ապա սեռականի -ս ցուցիչներն են:

Բենդավար: Բնակավայր Խոյի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ավ և ապա -ար ածանցներն են:

Բենդեվան: Գյուղ Կարսի շրջանում (տրբ. Բենդիվան), որի հորջորջման մեջ -ե- հոդակապով հին հայ. վան «բնակություն» բառն է:

Բենդվան: Բնակավայր Ալեքսանդրապոլի գավառում (տրբ. Պենտեվան, Պենտիվան):

Բենդիվան: Գյուղ Կարսի շրջանում:

Բենդլեր: Բնակավայր Մալաթիայի շրջանում, որի անվան վրա ավելացված է թուրք. -լար հոգնակիակերտ մասնիկը:

Բենդուրի: Գյուղ Ալաշկերտի դաշտում: Տեղանվան վերջում հայ. -ուր ածանցն է սեռական հոլովի -ի ցուցիչի հետ:

Այս հին տեղանունները (ՀՏԲ) պարունակում են մայր լեզվի բենդ-արմատը «կապ» իմաստով և հուշում են այդ բնակավայրերի կապող դիրք ունենալու մասին:

ԲԵՍՍՎԱՆ: Գյուղ Սոկսի գավառակում: (ՀՏԲ): Այդ տեղանունը հիշեցնում է ներքև բերվող Բեսնե, Բեսիրա և Բեսոսեն հին գյուղերի անունները: Դրանից պարզվում է, որ նշված տեղանվան մեջ առանձնանում է հայկական գրավոր աղբյուրներին անծանոթ բես- և հայ. ավան բառերը:

Կարծում ենք, տվյալ բես-ը հնդեվրոպական նախալեզվի *bhes-«մաքրել, սրբել» արմատն է (Pok.):

Այդ նույն իմաստն ունեն Հրազդանի շրջանի Մաքրավան, Նոր Բալազետի Մաքրավանք և Ալեքսանդրապոլի Մաքրատուն բնակավայրերի անունները (ՀՏԲ):

Նախալեզվի բես- արմատը «մաքուր» իմաստով հանդիպում է նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Բեսավենք: Բնակավայր Ռշտունիքում: Տեղանվան վերջում հայ. -ավ և -ենք ածանցներն են:

Բեսնե: Գյուղ Սդերդի շրջանում, որի անվան վերջում հայ. -նի հոգնակի իմաստ ընծայող ածանցն է քիչ աղավաղված ձևով:

Բեսնյա: Բնակավայր Մալաթիայի գավառում: Տեղանվան վերջում հայ. -ն և -յա մասնիկներն են:

Բեսոսեն: Գյուղ Վանի նահանգի Խարդին գյուղախմբում: Տեղանվան վերջում հայ. -ոք ածանցն է հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով և -են մասնիկով:

Բեսիրա: Բնակավայր Սդերդի շրջանում, որի հորջորջման վերջում հայ. -իր ածանցն է սեռական հոլովի -ա ցուցիչով:

Մայր լեզվի bh հնչյունը հին հայերենում դարձել է նաև պ ու փ (Օգ., էջ 298):

Ներքոհիշյալ տեղանունները բեւ- արմատի այդ տարբերակներով են:

Պեսյուր: Գյուղ Երզնկայի գավառում, որի անվան վերջում հայ. -յուր ածանցն է (հմմտ. բերք և բերյուր «բերրի»):

Պեսնի: Գյուղաքաղաք Սալաթիայի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -նի ածանցն է:

Պեսայենք: Բնակավայր Բիթլիս նահանգի Խիզանի գավառակում, ոչի անվան վերջում հայ. -ո և -ենք մասնիկներն են:

Փեսանդաշտ: Դաշտ Շատախի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ան ածանցն է և դաշտ բառը:

Փեսավանք: Գյուղ Սոկսի գավառում, որի անվան մեջ -ա- հոդակա- պով հին հայ. վան «բնակություն» բառն է և -ք ածանցը:

Փեսուն ջուր: Գետակ, որի անվամբ կոչվել է նաև գյուղը, Ճորոխի ավազանում:

Այս տեղանունները (ՀՏԲ) մատնանշում են բնակավայրերի կամ գե- տերի մաքուր լինելը:

ԲԵՐԳԱՍ: Գյուղ Վանի նահանգի Արճեշի գավառակում (ՀՏԲ): Տվյալ տեղանունը կարելի է համեմատել ներքոհիշյալ Բերգրի, Բերգլու հին գյուղերի և Բերգիջի լեռան անունների հետ: Դրանից պարզ է դառնում, որ Բերգամ տեղանվան մեջ առանձնանում է բերգ բառը, որը հայերեն գրավոր աղբյուրներում չի հանդիպում:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *bhereǵh-«բարձրաց- նել» արմատն է (Рок.) հին հայ. ամ- «լի» բառի հետ:

Հնդեվրոպական մայր լեզվի հին հայերենին փոխանցված բազմա- վանկ բառերի վերջին ձայնավորը ընկել է, քանի որ շեշտը կայունացել է նախավերջին վանկի վրա (ՀԼՊ, էջ 228):

Այդ տեղանունը իր իմաստով հիշեցնում է Վայոդ ձոր գավառի Բարձրշեն, Գորիսի շրջանի Բարձրավան, Օղուկի Բարձրաշեն, Կոտայ- քի Բարձրաղիբ հին բնակավայրերի անունները (ՀՏԲ):

Տվյալ բերգ- «բարձր» բառն ունեն իրենց կազմում ստորև բերվող տե- դանունները:

Բերգավենդ: Լեռ թուրք-պարսկական սահմանի վրա, Ուրմիա լճից արևմուտք, որի անվան վերջում հայ. -ավ և -ենդ մասնիկներն են (հմմտ. -անդ և -ոնդ ածանցների հետ):

Բերգիջի: Գյուղ Բաբերդի գավառակում: Կարծում ենք, տեղանվան վերջում հայ. -իճ ածանցն է քիչ աղավաղված ձևով և սեռական հոլովի -ի ցուցիչը:

Բերգլու: Լեռնագագաթ Թալինի Իրինդ գյուղից մի փոքր հարավ, որի անվան վերջում թուրք. -լու մասնիկն է:

Բերգրի: Քաղաքը, գավառը և տեղի գետը այդպես են կոչվել Վանի նահանգում (տրբ. Բերկրի): Տեղանվան վերջում հայ. -րի ածականա- կերտ ածանցն է (հմմտ. բերք և բերրի):

Հնդեվրոպական նախալեզվի gh հնչյունը հին հայերենին անցած բա- ռերի մեջ դարձել է նաև կ (Օս., էջ 298):

Այդ արմատի հայ. բերկ- տարբերակը մենք տեսնում ենք ստորև բեր- վող տեղանուններում:

Բերկ: Բնակավայր Արդահանի շրջանում:

Բերկա: Գյուղ Բաբերդի շրջանում, որի անվան վերջում հայ. սեռա- կան հոլովի -ա ցուցիչն է:

Բերկե: Բնակավայր Բայազետի գավառում: Տեղանվան վերջում հայ. -է ածանցն է:

Բերկի: Գյուղ Սղերդի շրջանում:

Բերկրի: Բնակավայր Դերջանի գավառում, որի անվան վերջում հայ. -րի ածականակերտ ածանցն է: Այդ անունն են կրել Դերսիմի և Խիզանի շրջաններում մեկական գյուղ, և մի լեռ Դերսիմում:

Մայր լեզվի bh հնչյունը հին հայերենին անցած բառերի մեջ դարձել է նաև պ և փ (Օս., էջ 298): Այդ տարբերակներով բերգ- արմատը հանդի- պում է ներքոհիշյալ տեղանուններում:

Պերգի: Գյուղ Մեղրու շրջանում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ի ցուցիչն է:

Պերկարիվ: Բնակավայր Վանի գավառում: Տեղանվան վերջում հայ. -ար և -իվ մասնիկներն են:

Փերկիս: Գյուղ Կարսի շրջանում, որի անվան վերջում հայ. -իս ածանցն է (հմմտ. մատ և մատիտ, հով և հովիտ):

Վերը հիշատակված տեղանունները (ՀՏԲ), որոնց մեջ բերգ- «բարձր» արմատն է կամ դրա հայկական տարբերակները, ցույց են տալիս լեռների բարձր լինելը և բնակավայրերի բարձր տեղում գտնվելը:

ԲԼԵՃԱՆ: Լեռնագագաթ Վանա լճից քիչ դեպի արևմուտք (տրբ. Բլիճան, Պլեճան, ՀՏԲ): Երբ այս տեղանունը բաղդատում ենք ներքոհիշյալ Բլեդար, Բլեթանց և Բլեկանց հին գյուղերի անունների հետ, ակնառու է դառնում, որ դրանում առկա է բլե- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում և հայ. -ճան ածանցը (հմմտ. դավ և դավճան):

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *bhlēi (տրբ. bli) «փայլել» արմատն է (Рок.): Մայր լեզվի ei-ն հայերենում դառնում է է, որը տեղանուններում գործածվել է և ձևով (հմմտ. գէտ «գիտուն» նախալեզվի veid- արմատից, մեզ «մշուշ», նախալեզվի meigh- «մշուշ» արմատից, սեզ «հպարտ», նախալեզվի keigh-«առույգ» արմատից, ՀԱԲ): Բլեճան լեռան անունը նշանակում է «փայլող» (տես Ավգեր): Այդ արմատը մենք տեսնում ենք նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Բլեդար: Գյուղ Դիարբեքիի նահանգի Բշերիկի գավառում (տրբ. Բլեդար), որի անվան մեջ նաև հայ. դար «բարձրավանդակ, գաղիվեր բարձրություն» բառն է (ՀԱԲ):

Բլեթանց: Բնակավայր Ելիզավետպոլի նահանգի Կարյագինի գավառում: (տրբ. Պլեթանց): Տեղանվան մեջ նաև հին հայ. թան «թաց» (ՀԱԲ) արմատն է հոգնակի սեռական հոլովի -ց ցուցիչով:

Բլեկանց: Բնակավայր Սիսիանի շրջանում, որի անվան վերջում հայ. -կան ածանցն է (հմտտ. լացել և լացկան, լծել և լծկան) և հին հայ. հոգնակի թվի սեռական հոլովի -ց ցուցիչը:

Բլիգան: Գյուղակ Բայազետի գավառում: Տեղանվան մեջ նշված -կան ածանցն է, քիչ աղավաղված ձևով:

Վերը բերված հին հայկական տեղանունները (ՀՏԲ), որոնց հիմքում ընկած է մայր լեզվի բլե- արմատը կամ դրա բլի- տարբերակը, մատնանշում են բնակավայրերի կամ լեռների փայլուն տեսք ունենալը:

ԲՈԹ: Գյուղակ Վանի նահանգի Խոշաբի գավառակում (ՀՏԲ):

Հին հայերենի բոթ «մահվան լուր» արմատը (ՀԱԲ) չէր կարող գործածվել որպես տեղանուն: Կարծում ենք, Բոթ անվան մեջ հնդեվրոպական նախալեզվի bhōth «տաքացնել» արմատն է «տաք» իմաստով (ՀԱԲ, տես բով.):

Տեղանքի այդ հատկանիշն են արտահայտում Վանի շրջանի Տաք գավառակի, Շատախի Տաք ավանի, Սիսիանի Տաքսար լեռնագագաթի և Արցախի նահանգի Ծար գավառի Տաքջուր գյուղի անունները (ՀՏԲ):

Բոթ- արմատն ունեն իրենց հիմքում նաև ներքոհիշյալ տեղանունները:

Բոթի: Գյուղակ Բայազետի գավառում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ի ցուցիչն է:

Բոթիբոթեր: Վայր Սյունիք նահանգի Բաղք-Քաշունիք գավառում: Տեղանվան մեջ այդ արմատն է կրկնված:

Նախալեզվի th հնչյունը հին հայերենում դարձել է նաև դ (ՀԼՊ, էջ 253): Այդ տարբերակով բոթ- արմատը գործածված է ստորև բերվող տեղանուններում:

Բողալլի: Գյուղ Տրապիզոնի նահանգում, որի անվան վերջում հայ. -ալի ածանցն է օտար աղավաղումով:

Բողամլու: Բնակավայր Նախիջևանի գավառում: Տեղանվան վերջում հին հայ. ամ-«լի» բառն է և ապա թուրք. -լու մասնիկը:

Բողարա: Գյուղ և լեռ Շուշիի շրջանում, որոնց անվան վերջում հայ. -ար ածանցն է (հմմտ. մութ և մթար) և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Բողի: Բնակավայր Բայազետի գավառում: Տեղանվան վերջում սեռական հոլովի -ի ցուցիչն է:

Բողունիք: Գավառ Վասպուրական նահանգում, որի հորջորջման վերջում հայ. -ունի և -ք ածանցներն են:

Բողու: Գյուղ Մուշի շրջանում: Տեղանվան վերջում հայ. սեռական հոլովի -ու ցուցիչն է:

Սայր լեզվի ե հնչյունը հին հայերենում դարձել է նաև պ (Օպ., էջ 298): Բոթ- արմատը պոթ և պոդ տարբերակներով հանդիպում է ստորև բերվող տեղանուններում:

Պոդի: Գյուղ Բայազետի գավառում:

Պոդիման: Գետ Մանազկերտից քիչ հյուսիս, որի անվան վերջում հայ. -իմ (իմմտ. ուշ և ուշիմ) և -ան ածանցներն են:

Պոդինտսիկ: Բնակավայր Խլաթի գավառում: Տեղանունը հայ. -ին, -ոք, և -իկ մասնիկներով է:

Պոթա: Գյուղ Նախիջևանի գավառում:

Պոթլի: Բնակավայր Բիթլիսի գավառում, որի անվան վերջում հայ. -կի մասնիկն է (իմմտ. լուցանել «վառել» և լուցիկ):

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք կազմված են մայր լեզվի բոթ- «տաք» արմատից և դրա հայկական տարբերակներից, հուշում են տեղանքի տաք բնություն ունենալու մասին:

ԲՈՒ: Ամրոց Տայքի Բուխա գավառում (ՀՏԲ):

Բոլ բառ հին հայերենը չի ունեցել: Կարծում ենք, տվյալ տեղանունը ներկայացնում է հնդեվրոպական նախալեզվի *bol- «գունդ» արմատը (Pok.):

Բոլ տեղանունը «գունդ» իմաստով հիշեցնում է Դիարբեքիի նահանգի Գունդ, Ախալցխայի շրջանի Գունդ, Սդերդի Գունդա, Մասունի Գունդենտ և այլ հին բնակավայրերի անունները (ՀՏԲ):

Բոլ-«գունդ» արմատը մենք տեսնում ենք նաև ներքև բերվող տեղանուններում:

Բոլան: Բնակավայր Ղարադաղի շրջանում, որի անվան վերջում հայ. -ան ածանցն է:

Բոլեյ: Գյուղ Խարբերդի նահանգում: Տեղանվան վերջում հայ. -է ածանցն է:

Բոլենց: Բնակավայր Մոկսի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ենք ածանցն է:

Բոլոն: Ամրոցներ Տայքի Բոխա (տրբ. Բուխա) և Բասենի գավառներում (տրբ. Պոլոն), որոնց անվան վերջում հայ. -ոն ածանցն է:

Բոլոսարի: Լեռ Ալեքսանդրապոլի մոտ: Տեղանվան մեջ նաև հայ. -սար բառն է:

Բոլովա: Գյուղ Նախիջևանի գավառում, որի հորջորջման մեջ և նաև հայ. օվա՝ հոլիտ բառն է:

Բոլս: Բնակավայր Շատախի շրջանում: Տեղանունը հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով է:

Բոլու: Լեռ Զանգեզուրի հարավում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ու ցուցիչն է:

Նախալեզվի օ հնչյունը հին հայերենում դարձել է նաև պ և փ (Օպ., էջ 298): Բոլ-«գունդ» արմատը նշված տարբերակներով հանդիպում է ներքև բերվող տեղանուններում:

Պոլա: Գյուղ Արդահանի շրջանում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ա ցուցիչն է:

Պոլե: Բնակավայր Բիթլիսի նահանգի Սդերդի գավառում: Տեղանվան վերջում հայ. -է ածանցն է:

Պոլեկ: Գյուղ Տրապիզոնի շրջանում, որի անվան վերջում հայ. եկ բառն է (իմմտ. փոխնեկ, միջնեկ, դուրեկան):

Պոլի: Բնակավայր Արդահանի շրջանում: Տեղանվան վերջում հայ. սեռական հոլովի -ի մասնիկն է:

Պոլիս: Գյուղեր Շատախի և Բալահովտի շրջաններում: Տեղանվան մեջ հայ. -իք ածանցն է:

Փոլ: Գյուղեր Տրապիզոնի և Ղազախի շրջաններում:

Մեր երայի սկզբներից հին հայերենի շատ բառերի մեջ լ հնչյունը սկսել է դառնալ դ: Բոլ-արմատը որոշ տեղանուններում այդ ձևով է գործածված:

Պողա: Գյուղ Ջավախքում:

Պողազալե: Գյուղակ էրգրումի գավառում, որի անվան վերջում թուրք. կալե «քաղաք» բառն է գալե ձևով:

Պողանց: Բնակավայր Վանի գավառում: Տեղանունը վերջանում է հայ. -անք ածանցով:

Պողի: Գյուղ Բայազետի գավառում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ի ցուցիչն է:

Բերված այս տեղանունները (ՉՏԲ) տալիս են բնակավայրերի և լեռների գնդաձև լինելու բնութագիրը:

Գ

ԳԱԲԼԱՆ: Գյուղ Սպերի շրջանում (ՉՏԲ): Երբ այս տեղանունը համեմատում ենք ներքև բերվող Գաբլոր և Գափլունց հին գյուղերի անունների հետ, պարզվում է, որ դրանում առկա է գաբլ- բաղադրիչը: Այդպիսի բառ չկա հայկական գրավոր աղբյուրներում:

Կարծում ենք, դա հնդեվրոպական նախալեզվի *ghab(o)lo- «ճյուղեր տալ, ճյուղավորվել» արմատն է (Pok.):

Գաբլադ տեղանվան վերջին բաղադրիչը թերևս հայ. -ատ ածանցն է բարբառային հնչմամբ (հմմտ. գույն և գունատ): Այն կարելի է ընկալել որպես «ճյուղագուրկ» կամ ծառեր չունեցող բնակավայր:

Մայր լեզվի վերը նշված գաբլո- արմատի վերջին ձայնավորը հին հայերենում ընկել է, քանի որ այդ ժամանակ արդեն շեշտը կայունացել է նախավերջին վանկի վրա, որի հետևանքով այն խիստ թուլացել է (ՀԼՊ, էջ 228): Ճյուղ արմատը մենք տեսնում ենք Նախիջևանի Ճուղա կամ Զուղա բնակավայրի անվան մեջ (ՉՏԲ), որը մատնացույց է անում տեղում ծառերի շատ լինելը: Իսկ Խոտրջուրի շրջանի Ճղիկներ լեռան անունը հուշում է, որ այն ճյուղավոր է:

Մայր լեզվի գաբլո- «ճյուղ» արմատը ակնառու է նաև ստորև բերվող տեղանուններում:

Գաբլճոզ: Գավառակ Սասունում, որի անվան մեջ նաև հայ. ընկույզ բառի Վանի բարբառի գոգ տարբերակն է (ՉԱԲ), որը դարձել է ճոզ:

Գաբլոր: Լեռնագագաթ Սասունի Տավրիկի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -որ ածանցն է (հմմտ. արտ-որ-եայք, վան-որ-եայք):

Նախալեզվի ցի հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ, իսկ ԲԽ-ն՝ նաև պ ու փ (ՕԿ., էջ 298): Գաբլ- արմատն այդ տարբերակներով մենք տեսնում ենք ներքոհիշյալ տեղանուններում:

Գափլան: Գյուղ Խնուսի շրջանում, որի անվան վերջում հայ. հոգնակիակերտ -ան ածանցն է:

Գափլունց: Բնակավայր Խոտրջուրի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ունք ածանցն է հին հոգնակի սեռական հոլովի -ց ցուցիչով:

Կապլան: Գյուղեր Դիարբեքիրի և Տրապիզոնի (տրբ. Կափլան) նահանգներում:

Կապլանկայա: Լեռնագագաթ Հայկական պար լեռնաշղթայում, որի անվան մեջ նաև վերը նշված -ան ածանցն է ու հին հայ. կայ- «վիճակ» բառը (ՉԱԲ):

Կապլոր: Լեռնագագաթ Հայկական Տավրոսում (տես Գաբլոր):

Կափլը: Բնակավայր Խոյի գավառում (հմմտ. Կապլի):

Բերված այս տեղանունները (ՉՏԲ), որոնց հիմքում ընկած են մայր լեզվի գաբլո- «ճյուղ» արմատի հայկական տարբերակները, հուշում են տեղանքի ծառ ու ճյուղով հարուստ լինելու, իսկ լեռների՝ ճյուղավոր ձև ունենալու մասին:

ԳԱԳ: Բերդ Նոյեմբերյանի շրջանի Կոթի գյուղից մոտ 7կմ հեռավորությամբ (ՉՏԲ):

Հայկական գրավոր աղբյուրներում նման բառ չկա:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *gag- «քիչ կլորություն, գնդաձևություն» արմատն է (Pok.):

Այդ իմաստն ունեն Նոյեմբերյանի շրջանի Կլորիկ և Մարտունիի Կլորասար լեռնագագաթների ու Դիարբեքիրի նահանգի Գունդ, Ախալցխայի Գունդ և Վանի Գունդիկ գյուղերի անունները (ՉՏԲ):

Նախալեզվի գագ- «կյոր, գնդաձև» արմատից են կազմված ստորև բերվող հին տեղանունները:

Գագան: Գյուղ Շատախի շրջանում, որի անվան վերջում հայ. -ան ածանցն է:

Գագակերտ: Բնակավայր Ռշտունիք գավառում:

Գագավանք: Գյուղ Սյունիքի նահանգի Կովսական գավառում:

Գագեն: Բնակավայր Խոյի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -են ածանցն է:

Գագթանց: Գյուղ Մոկսի գավառակում, որի անվան վերջում հին հայ. թան «թաց» բառն է (ՀԱԲ) և ապա հոգնակի սեռական հոլովի -ց ցուցիչը:

Գագվա: Բնակավայր և համանուն գետ Ախալցխայի գավառում: Տեղանվան վերջում հայ. -ու ածանցն է (հմմտ. թաց և թացու, հաղթու, հասու), որը սեռական հոլովաձևում դառնում է -վա:

Գագուրա: Գյուղ Սալմաստի գավառում, որի հորջորջման վերջում հայ. -ուր ածանցն է (հմմտ. թափուր, թաքթաքուր «թաքուն») և հին հայ. հայցականի -ս ցուցիչը:

Այս հին տեղանունները (ՀՏԲ), որոնց հիմքում մայր լեզվի գագ- «քիչ կյոր, գունդ» արմատն է, մատնանշում են նշված բնակավայրերի և բերդերի ու լեռների կյոր կամ գնդաձև լինելը:

ԳԱՅՍԵՆ: Գյուղ Սասունի Խիանք գավառում (ՀՏԲ): Այդ տեղանունը համեմատելիս ստորև բերվող Գայսնոկ և Կայսաբան հին գյուղերի անունների հետ պարզվում է, որ իր կազմում ունի գայս- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում և -եր հոգնակիակերտ մասնիկը:

Կարծում ենք, գայս- բաղադրիչը հնդեվրոպական մայր լեզվի *ghais- «հիշարժան լինել» արմատն է, որը հուշում է տեղի բնության հիշարժան լինելու մասին:

Թերևս տեղանքի բնության այդ հատկանիշն են նշում Վանի նահանգի Հեքյարի գավառի Հիշանի, Սպերի շրջանում Հիշեն և Եղեգնաձորի Հիշին հին գյուղերի անունները (ՀՏԲ):

Տվյալ գայս- արմատն ունեն իրենց կազմում նաև ստորև բերվող տեղանունները:

Գայսերան: Գյուղ Վանի գավառակում: Տեղանվան վերջում հայ. -եր և -ան մասնիկներն են:

Գայսերին: Բնակավայր Շատախի շրջանում, որի անվան վերջում հայ. -եր և -ին ածանցներն են:

Գայսնուկ: Գյուղ Բիթլիս քաղաքի մոտ: Տեղանվան վերջում հայ. -ն (հմմտ. ձուկ և ձուկն, մուկ և մուկն) և -ուկ մասնիկներն են:

Նախալեզվի gh հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ (ՕԿ., էջ 298):

Գայս- արմատը կայս- տարբերակով է հանդիպում նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Կայսաբան: Գյուղ Վանի նահանգի Արձակի գավառակում, որի անվան վերջում հայ. -աբան ածանցն է:

Կայսերան: Բնակավայր Մոկսի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -եր և -ան մասնիկներն են:

Կայսերիկ: Բերդ Օռփք նահանգում:

Նշված տեղանունները (ՀՏԲ) հուշում են տեղի բնության հիշարժան լինելու մասին:

ԳԱՎԵՏ: Գյուղ Ախալցխայի գավառում (ՀՏԲ): Այդ տեղանունը համեմատելիս ստորև բերվող Գավա, Գավախան և Գավդոս հին գյուղերի անունների հետ պարզվում է, որ դրա մեջ առանձնանում է գավ- բառը, որը կապ չունի հին հայերենի պարսկերենից փոխառյալ գաւ «գինու կամ ջրի փարչ» արմատի հետ (ՀԱԲ), որն իր իմաստով չէր կարող գործածվել որպես տեղանուն և -եր ածանցը:

Կարծում ենք, տվյալ գավ- բաղադրիչը հնդեվրոպական նախալեզվի *gau- «ուրախանալ, հրճվել» արմատն է (Փոկ.):

Հայերենում ու-ի վ դառնալը բառամիջում հաճախ է հանդիպում: Նույնալիս իմաստ ունեն Ապահունիք գավառի Հրճմունք և Ալեքսանդ-

րապուլի Զվարճաձոր (այժմ՝ Փանիկ) հին բնակավայրերի անունները (ՀՏԲ):

Նախալեզվի գառու- արմատը գավ- ձևով տեսնում ենք ներքոհիշյալ տեղանուններում:

Գավա: Գյուղեր Տրապիզոնի և Բայազետի գավառներում, որոնց անվան վերջում հայ. սեռական հոլովի -ա ցուցիչն է:

Գավախան: Բնակավայր Շուշիի գավառում: Տեղանվան մեջ -ա- հոդակապով հին հայ. խան «իջևանատուն» բառն է:

Գավդոս: Գյուղ Օլթիի շրջանում, որի անվան վերջում նաև նախալեզվի -do և -s ածանցներն են (ՀԼՊ, էջ 241):

Գավաջան: Բնակավայր Սդերդի գավառում: Տեղանվան վերջում -ա- հոդակապով հայ. -ճան ածանցն է -ջան տարբերակով (հմմտ. դավ և դավաճան):

Գավել: Բնակավայր Սդերդի գավառում: Տեղանվան վերջում հայ. -եղ ածանցի հին -ել ձևն է:

Գավելան: Գյուղ Շատախի շրջանում, որի հորջորջման վերջում վերը նշված -ել և հոգնակիակերտ -ան ածանցներն են:

Գավեր: Գյուղ Ախալցխայի շրջանում, որի անվան վերջում հայ. -եր մասնիկն է:

Գավերկան: Բնակավայր Վանի նահանգի Բերկրիի գավառակում: Տեղանվան մեջ նաև հայ. երկար բառն է բարբառային երկան ձևով:

Մայր լեզվի g հնչյունը հին հայ. դարձել է նաև կ ու ք (Օս., էջ 298):

Կավ- տարբերակը համանիշ է հայ. կավ «կավ» բառի հետ, որի պատճառով դրանցով կազմված տեղանունները իրարից տարբերել դժվար է:

Իսկ քավ-ը, կարծում ենք, համանիշ քավ «մեղքի թողություն, ներում» (ՀԱԲ) բառի հետ կապ չունի, քանի որ վերջինս տեղանուն դառնալ չէր կարող:

Քավ: Լեռ Ուրմիա լճի ափին:

Քավազն: Բերդ Գուգարք նահանգի Կողբոփոր գավառում, որի անվան մեջ նաև հին հայ. ազն բառն է «տեսակ» իմաստով (ՀԱԲ):

Քավատ: Գավատ Արցախ նահանգում, տեղանվան վերջում հայ. -ատ ածանցն է:

Քավս: Գավատ Արցախ նահանգում, որի անունը վերը բազմիցս հանդիպող հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչն է:

Քավսի: Գյուղ Ուրմիայի շրջանում: Տեղանվան վերջում նշված -ս ցուցիչից հետո հայ. սեռական հոլովի -ի վերջավորությունն է:

Մայր լեզվի գառու- «հրճվել» արմատն իր հայկական տարբերակներով վերը բերված տեղանուններում (ՀՏԲ), մատնանշում է տեղի բնության հրճվանք պարզևող հատկանիշը:

Գեբհ: Լեռ Մուշի շրջանում (տրբ. Կեպին, Քեփի, ՀՏԲ): Տվյալ տեղանվան մեջ, երբ այն համեմատում ենք ստորև բերվող Գեբլիս գյուղի անվան հետ, առանձնանում է գեբ- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում և սեռական հոլովի -ի ցուցիչը:

Կարծում ենք, այն հնդեվրոպական մայր լեզվի *ghebh-«զուլիս» արմատն է (Pok.):

Այդպիսի իմաստ ունեն Ելիզավետպոլի նահանգի Գլխավոր, Էրզրումի գավառի Գլխանոց, Մուշի Գլխուբերդ և այլ հին բնակավայրերի անունները (ՀՏԲ):

Բերենք գեբ- արմատով հայկական այլ տեղանուններ:

Գեբիկ: Գյուղ Խարբերդի նահանգում:

Գեբին: Լեռ Մուշի շրջանում, որի անվան վերջում հայ. ածականակերտ -ին մասնիկն է:

Գեբլիս: Բնակավայր Սասունում: Տեղանվան մեջ նաև հայ. լի «լի» բառն է և հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչը:

Մայր լեզվի gh հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ ու ք, իսկ bh-ն՝ նաև պ ու փ (Օս., էջ 298):

Ներքոհիշյալ տեղանուններում գեբ- արմատը այդ տարբերակներով է գործածված:

Կեբախոր: Գյուղ Բաբերդի շրջանում, որի անվան մեջ նաև հայ. խոր «խոր, խորունկ տեղ» բառն է:

Կերեկ: Բնակավայր Երզնկայի գավառում: Տեղանվան վերջում հայ. եկ բառն է (հմմտ. հովեկ, իրագեկ, երթեկ):

Կեպեր: Գյուղ Բարբերդի շրջանում:

Կեպնե: Բնակավայր Դիարբեքիի նահանգի Լճեի գավառակում: Տեղանվան վերջում հայ. -նի ածանցն է:

Կեփ: Գյուղ Սղերդի գավառում:

Կեփա: Լեռնագագաթ Մոավի լեռնաշղթայում:

Կեփի: Լեռնագագաթ Հայկական Տավրոս լեռնաշղթայում:

Կեփիկ: Գյուղ Արաբկիրի շրջանում:

Կեփին: Լեռնագագաթ Հայկական Տավրոսում: Տեղանվան վերջում հայ. -ին ածականակերտ ածանցն է:

Բերված տեղանունները (ՀՏԲ) հուշում են, թե այդ գյուղերը գտնվել են որևէ բլուրի կամ ձորի գլխին:

ԳԵԳԻՔ: Գավառ Մեծ Հայքի Զորքորդ Հայք նահանգում (ՀՏԲ): Այդ տեղանունը կարելի է համեմատել ստորև բերվող Գեկ և Գեկան հին գյուղերի անունների հետ: Պարզվում է, որ դրա մեջ առանձնանում է գեգ - բառը, որը հայկական գրավոր աղբյուրներին անծանոթ է և հայ. -իք ածանցը:

Կարծում ենք, գեգ- բաղադրիչը հնդեվրոպական մայր լեզվի *ghegh- «ծռել» արմատն է (Pok.):

Գեգիք տեղանունն իր իմաստով հիշեցնում է Ախալցխայի Ծոռ (-է ածանցով), Բասենի գավառի Ծուռս և Մուշի Ծոգետ հին բնակավայրերի անունները, որոնք հուշում են դրանց տարածքի ծուռ լինելու մասին (ՀՏԲ): Նախալեզվի gh հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ ու ք (Օս., էջ 298): Այդպիսի տարբերակներով գեգ- արմատը հանդիպում է նաև ստորև բերվող տեղանուններում:

Գեկ: Լեռնագագաթ Փոքր Կովկասի հյուսիս-արևելյան հատվածում:

Գեկան: Գյուղակ Շատախի շրջանում, որի անվան վերջում հայ. հոգ- նակիակերտ -ան ածանցնով:

Կեկալ: Լեռ Սևանա լճի հյուսիս-արևելյան ավազանում: Տեղանվան վերջում հայ. -աղ ածանցի հին -ալ տարբերակն է:

Կեկելի: Գյուղ Մուշի շրջանում և լեռ Բզունյաց լեռներում (տրբ. Քե-քելի), որոնց անվան վերջում հայ. -ելի մասնիկն է:

Կեկեչ: Բնակավայր Օլթիի շրջանում: Տեղանվան հայ. -եճ ածանցն է քիչ աղավաղված ձևով (հմմտ. բու և բվեճ):

Կեկեվե: Լեռ Ճորոխի ստորին ավազանի աջ կողմում, որի անվան վերջում հայ. -եվ և -է մասնիկներն են:

Կեքլու: Լեռ Բասեն գավառում: Տեղանվան վերջում թուրք. -լու մասնիկն է:

Կեքլի: Գյուղ Կաղզվանի շրջանում, որի անվան մեջ նաև հայ. լի «լի» բառն է:

Քեկեզի: Լեռ Արաբկիրի շրջանում: Տեղանվան մեջ հին հայ. եզ- «մեկ, միակ» (ՀՄԲ) բառն է սեռական հոլովի -ի ցուցիչով:

Քեքեչ: Գյուղ Կարսի շրջանում, որի անվան վերջում հայ. -եճ վերը նշված ածանցն է:

Քեքերլու: Բնակավայր Մուշի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -եր հոգնակիակերտ մասնիկն է և լի «լի» բառը սեռական հոլովի -ու ցուցիչով:

Քեքլիկ: Գյուղ Սարիղամիշի շրջանում, որի հորջորջման մեջ հայ. -լիկ մասնիկն է (հմմտ. պստլիկ):

Վերը բերված այս տեղանունները (ՀՏԲ), որոնց մեջ մայր լեզվի գեգ- «ծուռ» արմատն է իր հայկական տարբերակներով, մատնացույց են անում բնակավայրերի տեղանքի և լեռների ծուռ ձև ունենալը:

ԳԵԴԱԿ: Գյուղ Կաղզվանի շրջանում (ՀՏԲ): Տվյալ տեղանունը ստորև բերվող Գեդիկ, Գեդեր և Գեդաքլար հին գյուղերի անունների հետ համեմատելիս պարզվում է, որ դրանում առանձնանում է գեդ- բառը, որը հայկական ձեռագրերում չկա և -ակ ածանցը:

Կարծում ենք այն հնդեվրոպական նախալեզվի *ghedh «միավորել» արմատն է (Pok.):

Էրզրումի գավառի Միատուն, Հասնկալայի շրջանի Միատուն, Կարսի Միատուն, Անիի Միատուն հին գյուղերի անունները (ՀՏԲ) թերևս հուշում են, թե դրանք ոչ թե մեկ տուն են ունեցել, այլ դրանց շինությունները իրար կապած՝ միավորված են:

Այդ գեղ- արմատը մենք տեսնում ենք նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Գեղաքլար: Գյուղ Կուբաթլիի շրջանում, որի անվան մեջ հայ. հոգնակիակերտ -աք ածանցն է և թուրք. -լար մասնիկը:

Գեղելավա: Բնակավայր Վանի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -ել ածանցի -ել հին տարբերակն է և ավան բառը և հնչյունի անկումով:

Գեղեկ: Գյուղ Օլթի քաղաքից քիչ հարավ, որի անվան վերջում հայ. եկ բառն է:

Գեղեր: Բնակավայր Վանի նահանգում:

Գեղերիկ: Գյուղ Դիարբեքիի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -եր և -իկ ածանցներն են:

Գեղիգետ: Բնակավայր Խարբերդի նահանգում, որի անվան մեջ -ի- հոդակապով գեղ բառը կրկնված է:

Գեղիկ: Գյուղեր Բայազետի և Կամախի շրջաններում (տրբ. Կետիկ):

Գեղիշա: Բնակավայր Գորիսի շրջանում, որի անվան մեջ հայ. -իշ ածականակերտ ածանցն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Գեղուկ: Բնակավայրեր Սղերդի և Կարսի շրջաններում:

Մայր լեզվի ցի հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ ու ք, իսկ dh-ն՝ նաև տ ու թ (Օս., էջ 298):

Գետ- տարբերակը համանիշ է նաև հայ. գետ «գետ» բառի հետ: Ուստի դրանցով կազմված տեղանունները իրարից տարբերակել դժվար է: Իսկ գեղ- արմատի նշված մյուս հնչյուններով տարբերակները հանդիպում են ներքև բերվող տեղանուններում:

Կեղա: Ավան Արդվինի շրջանում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ա ցուցիչն է:

Կեղիետ: Գետ և գյուղ Արդվինի շրջանում: Տեղանվան վերջում -ի- հոդակապով -ետ ածանցն է (հմմտ. կոկ և կոկետ):

Կեթիկ: Գավառ Ադձնիք նահանգում:

Կեթիվան: Գյուղ Էրզրումի գավառում (տրբ. Քեթեվան): Տեղանվան մեջ -ի- հոդակապով նաև հայ. վան «բնակություն» բառն է:

Կեթուր: Բնակավայր Դերջանի շրջանում, որի անվան վերջում հայ. -ուր ածանցն է:

Կետակ: Գյուղ Կաղզվանի շրջանում:

Կետեկ: Բնակավայր Էրզրումի գավառում (տրբ. Կետիկ): Տեղանունը հայ. եկ բառի հետ է:

Կետեղք: Ավան Տարոն գավառում, որի անվան վերջում հայ. -եղ և -ք ածանցներն են:

Կետեվան: Գյուղ Էրզրումի գավառում (հմմտ. Կետիվան):

Կետեր: Բնակավայր Ալաշկերտի գավառակում:

Կետի: Գյուղ Ախուրյանի շրջանում:

Քեթամ: Բնակավայր Նախիջևանի գավառում (տրբ. Քեթան), որի անվան մեջ նաև հին հայ. ամ - «լի» բառն է (տրբ. Քեդան):

Քեթեր: Գյուղ Բայազետի գավառում:

Քեթուր: Բնակավայր Էրզրումի գավառում, որի անվան վերջում հայ. -ուր ածանցն է:

Վերը բերված մայր լեզվի գեղ և դրա հայկական տարբերակներով կազմված տեղանունները (ՀՏԲ) մատնանշում են, որ այդ բնակավայրերի տները իրար հետ կապակցված են:

ԳԵԼՂՈՒՇ: Վերին և Ներքին Գելդուշ գյուղերը գտնվել են Բայազետի գավառում (ՀՏԲ): Այդ տեղանվան մեջ, ստորև բերվող Գելդեկա գյուղի անվան հետ համեմատելիս, առանձնանում է գելդ բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում և հայ. -ուշ ածանցն է:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *gheldh- «ցանկա- նալ» արմատն է (Pok.):

Գելդուշ տեղանունը այդ իմաստով հիշեցնում է Միսիանի շրջանի Ուզ կամ Ուզի, Վայոց ձորի Ուզիձոր, Վանի նահանգի Կարճկանի գա-

վառակի Ուզուզ հին գյուղերի անունները (ՀՏԲ), որոնք մատնացույց են անում այդ բնակավայրերի ցանկալի բնություն ունենալը:

Գելդ- արմատը մենք տեսնում ենք նաև հետևյալ տեղանունների մեջ:

Գելդեկա: Գյուղ Սղերդի շրջանում, որի անվան վերջում հայ. եկ բառն է (հմմտ. միջնեկ) և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Նախալեզվի ցհ հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ ու ք, իսկ dh-ն՝ նաև տ ու թ (Օս., էջ 298):

Գելդ արմատը նշված տարբերակներով հանդիպում է հետևյալ հին տեղանուններում:

Կելդե: Բնակավայր Ախալցխայի գավառում, որի անվան վերջում հայ. -է ածանցն է:

Կելտլի: Գյուղ Ալեքսանդրապոլի գավառում: Տեղանվան վերջում հայ. լի «լի» բառն է:

Քելթուզ: Բնակավայր Շարուրի գավառում, որի անվան մեջ նաև հայ. ուզել «ցանկանալ» բայի ուզ- արմատն է:

Վերը բերված հին տեղանունները (ՀՏԲ), կազմված մայր լեզվի գելդ- արմատից և դրա հին հայկական տարբերակներից, մատնանշում են տեղանքի ցանկալի բնության առկայությունը:

ԳԵՄ: Գյուղեր Վանի նահանգի Թիմարի և Հայոց ձոր գավառակներում (տրբ. Գեմս, ՀՏԲ):

Հին հայերենին գեմ բառը անծանոթ է: Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *gem- «բռնել, որսալ» արմատն է (Pok.):

Գեմ տեղանունը այդ իմաստով հիշեցնում է Սասուն գավառի Բոնաշեն, Սոկսի շրջանի Բոնաշեն, Սիսիանի Բոնակուտ (տրբ. Բոնակոթ), Խուրթի Բոնաշեն հին գյուղերի անունները (ՀՏԲ), որոնք թերևս հուշում են այդ տեղերում որսի կենդանիներ բռնելու՝ որսորդության մասին:

Տվյալ գեմ- արմատով են կազմված նաև հետևյալ տեղանունները:

Գեմանա: Գյուղ Վանի նահանգում, որի անվան վերջում հայ. -ան գործողություն ցույց տվող ածանցը (հմմտ. իշխել և իշխան, դրուժել և դրուժան) և սեռական հոլովի -ա ցուցիչն է:

Գեմարիա: Բնակավայր Նոր Բայազետի գավառում: Տեղանվան վերջում հայ. -ար (հմմտ. տիպ և տիպար, պայտ և պայտար) և -իք ածանցներն են:

Գեմգեմ: Գյուղ Սուշի շրջանում, որի անվան մեջ գեմ- արմատը կրկնված է:

Գեմշին: Գյուղաքաղաք Ճորոխի հովտում: Տեղանվան վերջում հայ. շեն բառն է:

Մայր լեզվի ց հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ ու ք (Օս., էջ 298): Այդպիսի հնչյունական տարբերակներով գեմ- արմատը հանդիպում է նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Կեմ: Բնակավայրեր Վանի նահանգի Խոշաբի և Արճեշի գավառակներում:

Կեմալ: Գյուղեր Երևանի նահանգի Կրիստովատի և Բիթլիսի Ճապաղ-րի գավառակներում, որոնց անվան վերջում հայ. -աղ ածանցի հին -ալ տարբերակն է (հմմտ. կյանք և կենցաղ):

Կեմանց: Բնակավայր Կապանի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -անք ածանցն է հոգնակի սեռական հոլովաձևով:

Կեմատա: Գյուղ Սղերդի շրջանում, որի անվան վերջում հայ. -ատ մասնիկն է (հմմտ. փլել և փլատ) և հայ. սեռական հոլովի -ա ցուցիչը:

Կեմեն: Բնակավայր Շատախի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -են ածանցն է (հմմտ. փոխարինել և փոխարեն, ծվարել և ծվեն):

Կեմերլի: Գյուղ Կաղզվանի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -եր ածանցն է և ապա լի «լի» բառը:

Կեմիկ: Բնակավայր Սուշի գավառում (տրբ. Քեմիկ):

Կեմիր: Գյուղ Դիարբեքիրի գավառում, որի անվան վերջում հայ. -իր ածանցն է:

Կեմս: Բնակավայր Վանի գավառում: Տեղանունը հին հայ. հոգնակի հայ. սեռական հոլովի -ս ցուցիչով է:

Քեմալ: Գյուղեր Կոտայքի շրջանում և Գեղի գավառում, որոնց անվան վերջում հայ. -աղ ածանցի նախկին -ալ տարբերակն է:

Քեմալան: Բնակավայր Երզնկայի գավառում: Տեղանվան վերջում վերը նշված -աղ և հոգնակիակերտ -ան մասնիկներն են:

Քեմար: Գյուղ Ղարադաղում, որի անվան մեջ հայ. -ար ածանցն է:

Քեմերեսուրի: Լեռնագագաթ Դերսիմում: Տեղանվան մեջ բացի հայ. -եր մասնիկից -ե- հոդակապով «սուր» բառն է:

Քեմերլի բամբ: Լեռ Փամբակի լեռնաշղթայի կենտրոնական մասում, որի անվան մեջ հայ. -եր հոգնակիակերտ մասնիկից հետո լի «լի» բառն է և Փամբակի լեռնաշղթայի հին Բամբ անունը:

Վերոհիշյալ տեղանունները (ՀՏԲ) վկայում են, որ այդ գյուղերում կամ լեռներում մարդիկ զբաղվել են թակարդներով որս անելով:

ԳԵՏՉԱԳ: Գյուղ Վանի նահանգի Արճեշի շրջանում (ՀՏԲ): Երբ այս տեղանունը համեմատում ենք ներքև բերվող Գեյթ ու Գեյլեր հին գյուղերի անունների հետ, դրանում առանձնանում է գեյ- բաղադրիչը, որը հայերեն գրավոր աղբյուրներում չի հանդիպում և ձագ բառը «փոքր» իմաստով (ՀԱԲ):

Կարծում ենք, այն հնդեվրոպական մայր լեզվի *gei - «պտտվել, ոլորել» արմատն է (Pok.): Այդ դեպքում Գեյձագ տեղանունը կարելի է ընկալել «գետի փոքր ոլորանի մոտ գտնվող բնակավայր»:

Հիշենք Հաշտյանք գավառի Ոլոր բերդի, Օլթիի շրջանի Ոլոր, Արցախի Ոլորուտ հին գյուղերի անունները (ՀՏԲ):

Այդ գեյ- արմատով են կազմված նաև ստորև բերվող տեղանունները:

Գեյլեր: Գյուղ Ճորոխի ավազանի Բալախորի դաշտում, որի անվան վերջում թուրքերն ավելացրել են իրենց լեզվի հոգնակիակերտ -լեր (տրբ. -լար) մասնիկը:

Գեյթ: Բնակավայր Դիարբեքիրի նահանգի Սիվանի շրջանում: Տեղանվան վերջում հնագույն -թ ածանցն է (ՀԼՊ, էջ 240):

Նախալեզվի g հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ ու ք (Օս., էջ 298): Գեյ- արմատ այդ տարբերակներով մենք տեսնում ենք ներքոհիշյալ հին տեղանուններում:

Կեյիք: Գյուղ Բաբերդի գավառակում, որի անունը վերջանում է հայ. -իք հոգնակիակերտ ածանցով:

Կեյխագ: Բնակավայր Արդահանի շրջանում (տրբ. Քեյխագ): Տեղանվան մեջ նաև հին հայ. խագ «քար» բառն է (ՀԱԲ):

Կեյմատի: Գյուղ Ղարադաղում (տրբ. Քեյմատի): Այդ տեղանվան մեջ նաև հին հայ. մատ «մոտ» բառն է (հմմտ. մատույց, ՀՄԲ):

Կեյնա: Բնակավայր Թումանյանի շրջանում, որի անվան նեջ նաև հայ. -ն մասնիկն է (հմմտ. սառ և սառն, դառ և դառն) և հայ. սեռական հոլովի -ա ցուցիչը:

Կեյնիկ: Բնակավայր Նախիջևանի գավառում, որի անվան վերջում հայ. -նի և -իկ ածանցներն են:

Կեյշե: Գյուղ Սղերդի գավառում (տրբ. Քեյշե): Տեղանվան վերջում հայ -շի ածանցն է (հմմտ. բոլոր և բոլորշի) քիչ աղավաղված ձևով:

Կեյստրան: Գյուղ Վանի նահանգի Թիմարի գավառակում: Տեղանվան մեջ նաև հայ. սոր «ծակ, խոռոչ, փոս» բառն է (ՀԱԲ) և -ան հոգնակիակերտ ածանցը:

Կեյվան: Բնակավայր Օլթիի շրջանում, որի անվան մեջ նաև հին հայ. վան «բնակություն» բառն է (ՀԱԲ):

Կեյտի: Լեռնագագաթ Սևանի լեռնաշղթայի հարավային հատվածում: Տեղանվան վերջում հայ. -տի հոգնակիակերտ մասնիկն է:

Կեյրիկ: Գյուղ Վանի նահանգի Աղբակ գավառում, որի անվան վերջում հայ. -րի (հմմտ. բերք և բերրի) և -իկ ածանցներն են:

Կեյուր: Բնակավայր Բիթլիսի գավառում: Տեղանվան մեջ նաև հայ. -ուր ածանցն է:

Քեյանց: Գյուղ Սպերի շրջանում, որի անվան մեջ հայ. -անք ածանցն է:

Քեյլի: Բնակավայր Խարբերդի գավառում: Տեղանվան մեջ նաև հայ. լի «լի» բառն է:

Քեյվան: Գավառակ Ղարաղաղում, որի անվան մեջ նաև հին հայ. վան «բնակություն» բառն է:

Այս հին տեղանունները (ՀՏԲ), կազմված մայր լեզվի գեյ- «պտույտ, ոլոր» արմատից և դրա հայկական տարբերակներից, հուշում են, որ նշված բնակավայրերը ինչ-որ ոլորանի մոտ են գտնվել, իսկ լեռնագագաթները ոլորվող ձև ունեն:

ԳԵՆԱՔ: Գյուղ Օլթիի շրջանում (ՀՏԲ): Այս տեղանունը պետք է համեմատել ստորև բերված Գենդարլի, Գենիք և Գեներին հին գյուղերի անունների հետ: Դրանից պարզ է դառնում, որ Գենաք տեղանվան մեջ առանձնանում է գեն- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներին անծանոթ է և -աք հոգնակի իմաստ ընծայող ածանցը:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *ghen- արմատն է, որն ունի նաև «փոքր» իմաստը (Pok.):

Այս իմաստով Գենաք տեղանունը հիշեցնում է Սյունիք նահանգի Օղուկ գավառի Փոքրոյծ (հին հայ. -ույծ/-ոյծ «սառ» բառի հետ, ՀԱԲ), Բասենի Փոքրիկ, Ախուրյան շրջանի Փոքրաշեն, Նաիրիի Փոքրավան հին գյուղերի անունները (ՀՏԲ):

Մայր լեզվի գեն- արմատը հանդիպում է նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Գենալը: Գյուղ Զանգելանի շրջանում, որի անվան վերջում հայ. -ալի ածանցն է քիչ աղավաղված ձևով:

Գենալու: Գյուղ Շարուր գավառում, որի անվան վերջում հայ. -ալի ածանցն է սեռական հոլովի -ու ցուցիչով:

Գենդարա: Բնակավայր Շարուրում: Տեղանվան մեջ նաև հայ. դար «գառիվայր, բարձրություն» բառն է սեռական հոլովի -ա ցուցիչով:

Գենդարլի: Բնակավայր Գուգարքի շրջանում (ուշ՝ Հայդարլի): Տեղանվան մեջ վերը նշված դար «գառիվայր, բարձրություն» և լի «լի» բառերն են:

Գենենաթաղք: Գյուղ Սյունիքի Հուբանդ գավառում, որի անվան մեջ հայ. -են ածանցն է և -ա- հոդակապով թաղ բառը:

Գենիձոր: Բնակավայր Զանգեզուրում: Տեղանվան մեջ հայ. ձոր բառն է -ի- հոդակապով:

Գենիստր: Գյուղ Բայազետի գավառում, որի անվան մեջ -ի- հոդակապով հին հայ. սոթ «ծակ, խոռոչ, փոս» բառն է (ՀԱԲ):

Գենիք: Բնակավայր Զանգեզուրում: Տեղանվան վերջում -իք ածանցն է:

Գենլիք: Գյուղ Զանգեզուրում, որի անվան մեջ նաև հայ. լի «լի» բառն է և -ք մասնիկը:

Մայր լեզվի gh հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ ու ք (Օս., էջ 298): Ենթադրվող կեն- տարբերակը տեղանուններում դժվար է առանձնացնել հայ. կյանք բառի կեն- ձևից: Իսկ քեն- տարբերակով մենք ունենք երկու տեղանուն:

Քենալի: Բնակավայր Խոյի շրջանում, որի անվան վերջում հայ. -ալի ածանցն է:

Քենձոր: Գյուղ Երզնկայի գավառում:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք հազմված են մայր լեզվի գեն- «փոքր» արմատից և դրա հայկական տարբերակներից, մատնացույց են անում այդ գյուղերի փոքր լինելը:

ԳԵՍ: Գյուղ Էրզրումի գավառում (ՀՏԲ): Հին հայերենի գես «երկայն մագ» բառը (ՀԱԲ) չէր կարող իմաստի առումով դառնալ տեղանուն: Կարծում ենք, տվյալ տեղանունը հնդեվրոպական նախալեզվի ǵeis- «բացվել, ծաղկել» արմատն է (Pok.), քանի որ մայր լեզվի ǵ հնչյունը հին հայերենում դարձել է q (Օս., էջ 299): Իսկ դրա ei երկբառը հին հայ. նույն ձևով էլ է մնացել (ՀԼՊ, էջ 225): Սակայն վերջինս հին հայ. դարձել է նաև է (հմմտ. գետ «գիտակ» նախալեզվի veid-արմատից, մեզ մշուշ՝ նախալեզվի meigh -«մշուշ» արմատից, սեզ «հպարտ» k'eigh- «առույգ» արմատից, (տես ՀԱԲ)): Վերջինս չի տարբերակված ե-ից:

Տեղանքի այդպիսի բնութագիր են տալիս Դերսիմի Ծաղիկ, Տարոնի Ծաղիկ և Գեղարքունիքի Ծաղիկ հին գյուղերի անունները (ՀՏԲ):

Գեւ- արմատը նշված «ծաղիկ» իմաստով մենք տեսնում ենք նաև ստորև բերվող տեղանուններում:

Գեսմանլի: Գյուլ Օլթիի շրջանում, որի անվան մեջ նաև հայ. -մն (հմմտ. ջերմն, կողմն, սերմն) ածանցն է, որը սեռական հոլովաձևով դառնում է -ման և -լի բառը:

Գեսնակ: Բնակավայր Վանի նահանգի Հեքյարի գավառում: Տեղանվան վերջում հայ. -նակ մասնիկն է (հմմտ. տղանակ, աղջնակ, խոսնակ):

Նախալեզվի g հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ և ք (Օս., էջ 298): Գեւ- արմատն այդ տարբերակներով մենք տեսնում ենք նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Կես: Գյուլ Էրզրումի գավառում:

Կեսալե: Բնակավայր Դիարբեքիի գավառում, որի անվան վերջում հայ. -ալի ածանցն է քիչ աղավաղված ձևով:

Կեսան: Գյուլեր Բիթլիսի նահանգի Գենջի և Սդերդի շրջաններում: Տեղանվան վերջում հայ. հոգնակի իմաստ ընծայող -ան ածանցն է:

Կեսեկ: Բնակավայր Բայազետի գավառում, որի անվան վերջում հայ. եկ բառն է (հմմտ. դուրեկան):

Կեսիք: Գյուլ Ալաշկերտի դաշտում:

Կեսնակ: Գյուլ Ջուլամերկի գավառակում: Տեղանվան վերջում հայ. -նակ ածանցն է (հմմտ. տղա և տղանակ):

Կեստնկ: Բնակավայր Խլաթի գավառակում, որի անվան մեջ հայ. -ոնք ածանցն է:

Կեստր: Գյուլ Սոկսի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -որ մասնիկն է:

Կեստուկ: Բնակավայր Ճորոխի միջին ավազանում:

Քեսա: Գյուլ Բայազետի գավառում և լեռ Հայկական պար լեռնաշղթայում: Տեղանվան վերջում հայ. սեռական հոլովի -ա ցուցիչն է:

Քեսալա: Բնակավայր Ղազախի շրջանում, որի անվան վերջում հայ. -աղ ածանցն է հին -ալ ձևով և վերը նշված -ա ցուցիչը:

Քեսալե: Գյուլ Դիարբեքիի գավառում: Տեղանվան վերջում հայ. -ալի մասնիկն է քիչ աղավաղված:

Քեսաման: Բնակավայր Գետաբեկի շրջանում, որի անվան մեջ հին հայ. ամ- «լի» բառն է և -ան հոգնակիակերտ մասնիկը:

Քեսան: Բնակավայրեր Վանի, Այնթափի և Խնուսի շրջաններում: Տեղանվան վերջում վերը նշված հոգնակի իմաստով -ան ածանցն է:

Քեսեկ: Գյուլ Բայազետի գավառում, որի անվան վերջում նաև հայ. եկ բառն է:

Քեսեն: Բնակավայր Արդանամադնի գավառում: Տեղանունն իր մեջ ունի -են ածանցը:

Քեսեր: Գետակ, Բաղեշ գետի ձախ օժանդակը:

Քեսերիկ: Գյուլ Խարբերդի գավառում:

Քեսիկ: Բնակավայր Էրզրումի շրջանում:

Քեսոնք: Գյուլ Խլաթի գավառակում:

Քեսոր: Բնակավայր Սոկսի շրջանում: Տեղանունը հայ. -որ մասնիկով է:

Քեսրիկ: Գյուլեր Խարբերդի և Վանի գավառներում, որոնց անվան մեջ հայ. -րի և -իկ ածանցներն են:

Քեսուկ: Բնակավայր Էրզրումի գավառում:

Քեսրենի: Գյուլ Բիթլիսի շրջանում, որի անվան վերջում -րի և -ենի ածանցներն են:

Բերված տեղանունները (ՀՏԲ) մատնացույց են անում այդ բնակավայրերի և լեռների ծաղիկներով հարուստ լինելը:

ԳեՎԵՐ: Գյուլ Բիթլիսի նահանգի Սդերդի գավառում (ՀՏԲ): Ստորև բերվող Գեվիշ, Գեվրան և Գեվրեգեվ գյուղերի անունների հետ համեմատելիս պարզվում է, որ Գեվեր տեղանվան մեջ առանձնանում է գեվ- բաղադրիչը և հայ. -եր ածանցը: Հայկական գրավոր աղբյուրներում այդպիսի բառ չի հանդիպում:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *gēu- «ուրբվել, ծովել» արմատն է (Pok.): Հայերենում ու հնչյունը բառամիջում հաճախ է դառնում վ (հմմտ. լու և լվիճ, բու և բվեճ): Այդպիսի իմաստ ունեն Էրզրումի գավառի Ծուռա, Ախալցխայի Ծոե, Տրապիզոնի Ծոբբար և

Իջևանի Շովիզ (այժմ՝ Լուսահովիտ) բնակավայրերի անունները (ՀՏԲ):
Գեվ- արմատն ունեն իրենց մեջ ստորն բերվող տեղանունները:

Գեվաբախան: Լեռ Աղստն գետի ձախ կողմում, որի անվան մեջ -ա- հոդակապով հայ. բախել «հարվածել» բայի բախան «բախող» տարբերակն է:

Գեվանդուկ: Գյուղ Խնուսի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -անդ և -ուկ մասնիկներն են:

Գեվդարլի: Գյուղ Արթիկի շրջանում (այժմ՝ Փանիկ), որի անվան մեջ հին հայ. դար «գառիվեր, բարձրություն» և լի «լի» բառերն են:

Գեվեր: Գավառ Տուրուբերան նահանգում և գյուղ Սդերդի շրջանում:

Գեվերիկ: Գյուղ Վանի նահանգի Կոտուրի շրջանում:

Գեվերա: Բնակավայր Վանի նահանգի Սպարկերտի շրջանում:

Գեվիշ: Գյուղակ Վանի նահանգի Սպարկերտի շրջանում, որի անվան վերջում հայ. -իշ ածանցն է:

Գեվրան: Բնակավայր Դիարբեքիի գավառում: Տեղանվան վերջում հայ. -րի և -ան ածանցներն են:

Գեվրեզեվ: Գյուղ Բայազետի գավառում, որի անվան մեջ գեվ- բառը կրկնված է և -րի մասնիկն է:

Մայր լեզվի g հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ ու ք (ՕԿ., էջ 298): Գեվ- արմատի ենթադրվող կեվ- և քեվ- տարբերակները համանիշն են ստորն բերվող կեվ- արմատի և դրա քեվ- ենթադրվող տարբերակի հետ: Ուստի դրանցով կազմված տեղանունները մենք կբերենք դրա բաժնում:

Բերված բոլոր տեղանունները (ՀՏԲ) մատնանշում են, որ այդ գյուղերի տարածքները ծուռ են:

ԳԵՐՄԱՆԻ: Գյուղ Կարսի շրջանում (ՀՏԲ): Դրա անունը համեմատելիս ներքոհիշյալ Գերմեջիկ և Գերմուջեք հին բնակավայրերի հորջորջումների հետ պարզվում է, որ Գերմալիի մեջ առանձնանում է գերմ-բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում և -ալի ածանցը:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *gher-m-«տաք, շոգ» արմատն է (ИЯИ, էջ 683): Այդ արմատը հայ. ջերմ բառն է, որը տեղանուններում շատ է հանդիպում:

Ստորն բերենք տեղանուններ, որոնք իրենց անվան հիմքում ունեն մայր լեզվի գերմ- արմատը:

Գերման: Գյուղ Էրզրումի գավառում, որի անունը վերջանում է հայ. -ան ածանցով:

Գերմանիա: Բնակավայր հին Երևանի գավառում: Տեղանվան վերջում հայ. -անի ածանցն է հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Գերմաշիք: Բնակավայր Ճորոխի ակունքի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -աշ և -իք ածանցներն են:

Գերմավ: Գյուղ Մուշի գավառում (տրբ. Գերմար) որի անվան վերջում հայ. -ավ մասնիկն է:

Գերմավիջ: Բնակավայր Սալմաստի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ավ և -իչ ածանցներն են:

Գերմեջեկ: Գյուղ Արդահանի շրջանում, որի անվան մեջ հայ. -եճ ածանցն է և ապա եկ բառը:

Գերմուջեկ: Լեռնաշղթա Ճորոխի ավազանի արևելյան հատվածում: Տեղանվան մեջ հայ. -ուճ մասնիկն է և եկ բառը:

Նախալեզվի gh հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ ու ք (ՕԿ., էջ 298): Ստորն բերում ենք գերմ- արմատի կերմ- և քերմ- տարբերակներով հայկական տեղանուններ:

Կերմա: Գյուղ Շատախի գավառակում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ա ցուցիչն է:

Կերմալի: Խնուս գետի աջ օժանդակն է: Տեղանունը վերջանում է հայ. -ալի ածանցով: Այդպես կոչվել է նաև մի բնակավայր Մուշի շրջանում:

Կերմակ: Գյուղ Արդահանի շրջանում:

Կերման: Բնակավայր Քդիի շրջանում, որի անվան վերջում հայ. գործողություն ցույց տվող -ան ածանցն է:

Կերմանավ: Գյուղ Ղարաղաղի գավառում: Տեղանվան վերջում բացի վերը նշված -ան մասնիկից նաև գործիական հոլովի -ավ ցուցիչն է:

Կերմանից: Բնակավայր Արճեշի գավառակում, որի անվան վերջում վերը նշված ածանցից հետո հայ. -իք մասնիկն է հին հոգնակի սեռական հոլովի -g ցուցիչով:

Քերմենց: Գյուղ Շատախի շրջանում (տրբ. Կերմենց): Տեղանվան վերջում հայ. -ենք ածանցն է հոգնակի սեռական հոլովաձևով:

Քերմիկ: Բնակավայր Դիարբեքիի նահանգի Մարդինի գավառում:

Քերմինիս: Գյուղ Շատախի շրջանում, որի անվան վերջում հայ. -ին և -իք ածանցներն են:

Քերմիսիք: Բնակավայր Դերսիմի գավառում: Տեղանվան վերջում հայ. -իք և ապա -իկ ածանցներն են:

Վերը բերված տեղանունների մեջ (ՀՏԲ) մայր լեզվի գերմ -«շոգ» արմատն է և դրա հայկական կերմ- ու քերմ- տարբերակները, որոնք հուշում են այդ տեղերի տաք բնությունն ունենալու մասին:

ԳԻՂԱՆ: Գյուղ Վանի նահանգում (ՀՏԲ):

Երբ այդ տեղանունը համեմատում ենք ներքոհիշյալ Գիդրիս, Գիդեմն և Գիդեվետ հին գյուղերի անունների հետ պարզվում է, որ դրա մեջ առանձնանում է գիդ- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չկա և -ան հոգնակի իմաստ ընծայող մասնիկը:

Կարծում ենք, այն հնդեվրոպական մայր լեզվի *xidhu* «ծառ» արմատն է (Pok.): Մայր լեզվի *x* հնչյունը հին հայերենում դարձել է նաև գ, իսկ *dh-* ն *դ* (Օս., էջ 298): Բազմավանկ բառերի վերջին ձայնավորն ընկել է, քանի որ շեշտը հայերենում հաստատվել է նախավերջին վանկի վրա (ՀԼՊ, 228):

Գիդան տեղանունը, որը կարելի է ընկալել «ծառեր», հիշեցնում է Խորասանի գավառի Ծառ, Շատախի շրջանի Ծառնոց, Մոկսի Ծառատուն և Խարբերդի գավառի Ծառատուն հին բնակավայրերի անունները (ՀՏԲ):

Տվյալ գիդ- արմատը նշված իմաստով մենք տեսնում ենք նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Գիդեմնաս: Գյուղ Կապանի շրջանում (տրբ. Գիտեմնաս), որի անվան մեջ հայ. -մն (հմմտ. երբեմն, ուրեմն) և -աք ածանցներն են: Վերջինս հին հայ. հոգնակի հայցական հոլովի -u ցուցիչով է:

Գիդրեվետ: Բնակավայր Արդվինի շրջանում: Տեղանվան մեջ թերևս հայ. -րի և -ավետ ածանցներն են:

Գիդրեվեխա: Գյուղ Արդվինի շրջանում, որի անվան մեջ թերևս հայ. -րի (հմմտ. բերք և բերրի) և -եխ (գոռ և գոռեխ, տառ և տառեխ) ածանցներն են: Իսկ վ հնչյունը երկու է ձայնավորների միջև է առաջացել:

Նախալեզվի *dh* բաղաձայն հնչյունը հին հայերենում դարձել է նաև տ (Օս., էջ 298):

Այդ տարբերակով գիդ- արմատը հանդիպում է ներքև բերվող մի քանի տեղանուններում:

Գիտ: Գյուղ Շատախի գավառում:

Գիտանց: Բնակավայր Բիթլիսի նահանգի Մարմտանքի շրջանում:

Գիտրիս: Գյուղ Մակուի շրջանում, որի անվան մեջ հայ. -րի ածանցն է հին հոգնակի հայցական հոլովի -u ցուցիչի հետ:

Գիտուրա: Վայր Խնուսի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ուր ածանցն է և ապա՝ սեռական հոլովի -ա ցուցիչը:

Բերված տեղանունները (ՀՏԲ) մատնացույց են անում, որ տվյալ բնակավայրերը ծառերով հարուստ են եղել:

ԳՈՍՏ: Գյուղ Բիթլիսի նահանգում (տրբ. Կոստ, ՀՏԲ):

Հայկական գրավոր աղբյուրներին անծանոթ գոստ- բառը, կարծում ենք, հնդեվրոպական նախալեզվի **ghosti-s*-«բարեկամ, հյուր» արմատն է (Pok.): Դրա վերջի ի ձայնավորը հին հայերենում ընկել է շեշտի նախավերջին վանկի վրա հաստատվելու հետևանքով (ՀԼՊ, էջ 228):

Գոստ տեղանունը այդ իմաստով հիշեցնում է Ակնի շրջանի Հյուրի, Բիթլիսի Խիզան գավառակի Հյուրուք, Վանի նահանգի Կեցանի շրջանի Հյուրանց և Վայոց ձորի Հյուրատուն բնակավայրերի անունները (ՀՏԲ), որոնք վկայում են այդ տեղերում հյուրանոցի՝ իջևանատան առկայության մասին:

Այդ գոստ- արմատով ունենք ևս մեկ տեղանուն:

Գոստենի: Գյուղ Վայոց ձորի գավառում, որի անվան վերջում հայ. -ենի ածանցն է:

Նախալեզվի ցհ հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ (Օս., էջ 298): Այդ կոստ- տարբերակը հանդիպում է ներքոհիշյալ տեղանուններում:

Կոստ: Գյուղ Սասունում:

Կոստամուն: Գյուղ Տրապիզոնի գավառում, որի անվան վերջում հայ. ամ- «լի» բառն է և -ոն ածանցը:

Կոստեմուկ: Գյուղ Տրապիզոնի գավառում, որի անվան վերջում հայ. -եմ (հմմտ. խոհ և խոհեմ) և -ուկ ածանցներն են:

Կոստինվատ: Բնակավայր Տրապիզոնից արևելք: Տեղանվան մեջ հայ. -ին ածանցն է և վատ «վատ» բառը:

Կոստյանք: Բնակավայր Այրարատ նահանգի Ծաղկոտն գավառում:

Կոստնուտ: Բնակավայր Խոտորջուրի շրջանում:

Այս տեղանունները (ՀՏԲ) հուշում են, որ նշված բնակավայրերում իջևանատուն է եղել:

ԳՈՊ: Ավան Մուշի գավառում (ՀՏԲ): Հին հայկական գրավոր աղբյուրներում գույ բառ չի հանդիպում:

Կարծում ենք, տվյալ տեղանվան մեջ հնդեվրոպական նախալեզվի պեր- «ջուր» արմատի պժբ- տարբերակն է (Փոկ.), քանի որ մայր լեզվի ք հնչյունը հին հայերենում դարձել է նաև գ (ՀԼՊ, էջ 95), իսկ ք-ն նաև մնացել է նույնը (Օս., էջ 298):

Այն իր իմաստով հիշեցնում է Ախալցխայի գավառի Ջուր, Սյունիքի Ճահուկի շրջանի Ջուր, Բայազետի Ջուրահամ, Ջուրա և Օլթիի Ջուրջուրիս հին բնակավայրերի անունները (ՀՏԲ): Մայր լեզվի վոպ-«ջուր» արմատը հայերեն գուպ- տարբերակով հանդիպում է ներքոհիշյալ տեղանուններում:

Գոպալ: Գյուղեր Խնուսի գավառակում (նաև տեղի գետակն է այդպես կոչվել), Արդահանի շրջանում և Բայազետի գավառում (տրբ. Գոպեր): Տեղանվան վերջում հայ. -աղ ածանցի հին -ալ տարբերակն է:

Գոպեր: Բնակավայր Ալաշկերտի գավառակում:

Մայր լեզվի ք հնչյունը հին հայերենում դարձել է նաև ք (Օս., էջ 298):

Գոբեթ: Գյուղ Ախալցխայի շրջանում, որի անվան վերջում հայ. -եթ ածանցն է (տրբ. -ետ):

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), կազմված մայր լեզվի վոպ-«ջուր» արմատի հայ. գուպ- և գոբ- տարբերակներից, հուշում են տեղանքի ջրով հարուստ լինելու մասին:

ԳՈՏ: Գյուղ Օլթիի շրջանում (ՀՏԲ, տրբ. Գոթ): Հայկական գրավոր աղբյուրներում նման բառ չկա: Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի պատ- «ծոել, կորացնել» արմատի պոտ տարբերակն է (Փոկ.), քանի որ մայր լեզվի ք հնչյունը հին հայերենում դարձել է նաև գ (Օս., էջ 299):

Տեղանքին այդպիսի բնութագիր են տալիս հին հայկական Օուտս, Օոե, Կոր, Կորան, Կորիկ բնակավայրերի անունները (ՀՏԲ):

Սոտ- արմատի հայ. գոտ- տարբերակը նշված իմաստով հանդիպում է նաև ներքև բերվող տեղանուններում:

Գոտակ: Գյուղ Բիթլիսի նահանգում:

Գոտառիճ: Բնակավայր Խարբերդի նահանգում:

Գոտաքար: Գյուղ Վանի նահանգում:

Գոտեվանք: Բնակավայր Սյունիք նահանգի Բաղք գավառում (տրբ. Գոդեվանք):

Գոտեր: Գյուղ Դերջանի շրջանում:

Գոտիա: Բնակավայր Օլթիի շրջանում, որի անվան մեջ հայ. -իք ածանցն է:

Գոտիտափ: Գյուղ Օլթիի շրջանում, որի անվան մեջ նաև հին հայ. տափ «հարթ, տափարակ դաշտ» բառն է (ՀԱԲ):

Գոտնի: Բնակավայր Մուշի գավառում: Տեղանվան վերջում հայ. -նի ածանցն է:

Գոտոկ: Գյուղ Վանի նահանգում, որի անվան մեջ հայ. -որ ածանցն է աղավաղված ձևով:

Գոտաղ: Բնակավայր նախկին Երևանի գավառում (ալժմ' Գոդթ): Տեղանունը հայ. -ող մասնիկով է:

Գոտուսվանք: Գյուղ Շարուրի գավառում, որի անվան մեջ հայ. -ուք ածանցն է հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով և «վանք» բառը:

Գոթանա սար: Լեռ Կոտայքի սարահարթի հյուսիսային հատվածում, որի անվան մեջ նաև հայ. -ան ածականակերտ մասնիկն է և սար բառը:

Գոթանլի: Գյուղ Սուշի շրջանում, որի անվան մեջ հայ. -ան ածանցն է և լի «լի» բառը:

Գոթանոց: Բնակավայր Էրզրումի գավառում:

Գոթեղա: Գյուղ Ջավախքում: Տեղանվան մեջ հայ. -եղ ածանցի հին -ել տարբերակն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Գոթի: Բնակավայր Սուրմալուի գավառում: Տեղանունը հայ. սեռական հոլովի -ի ցուցիչն ունի:

Գոթիա: Գյուղ և համանուն գետակ Սպերի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -իք ածանցն է հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Գոթիք: Գետակ Ճորոխի ավազանում:

Գոթուր: Գյուղաքաղաք և համանուն լեռ Պարսկահայքում, որոնց անվան վերջում հայ. -ուք մասնիկն է:

Մայր լեզվի ց հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ (Օս., էջ 298): Մակայն գոտ արմատի ենթադրվող հայկական կոտ տարբերակը նույնանուն է ներքև բերվող նախալեզվի կոտ- արմատի հետ:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ) մատնանշում են, որ այդ բնակավայրերի տարածքները ծուռ են կամ կոր:

ԳՈՒՄ: Լեռ և գյուղ Բասենի շրջանում ու բնակավայր Մանազկերտի գավառում (ՀՏԲ): Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» մեջ հանդիպում է հազվագյուտ գործածությամբ Գուխարսխել «տերևաթա-

փել» բառը, որի մեջ առկա է գուս արմատը «տերև» իմաստով (ՀԱԲ): Դա ինդեվրոպական մայր լեզվի gyes- «ճյուղավորություն, տերևներ» արմատի gus-տարբերակն է (Pok.):

Հին հայերենի ճյուղ «ծառի ոստ, ուրիշ բաների ճյուղավորված մաս» (ՀԱԲ) արմատից մենք ունենք Խոտրջրի գավառակի ճղիկներ լեռան անունը, որը հուշում է դրա ճյուղերի բաժանված լինելու մասին: Նախկին Երևանի գավառի Վեդիբասարի շրջանի ճիղին գյուղի և դրա մոտի համանուն գետի անունը նույնպես նշված ճյուղ բառն ունի իր մեջ: Ուտիք նահանգի Գարդմանաձոր գավառի Տերեն բերդի անունը հայ. տերև բառն ունի իր կազմում:

Ճյուղ բառի ջուղ տարբերակը հանդիպում է Նախիջևանի շրջանի Ջուղա կամ Ճուղա և Վանի գավառի Ջուղա ու Միսիանի Ջուղա հին գյուղերի անուններում (ՀՏԲ):

Մայր լեզվի գուս- արմատը այդ իմաստով հանդիպում է նաև մի քանի այլ տեղանուններում:

Գուսենց: Գյուղ Վանի նահանգի Թիմարի գավառակում:

Գուսիլու: Բնակավայր Շուշիի գավառում, որի անվան վերջում հայ. -իլ ածանցն է և սեռական հոլովի -ու ցուցիչը:

Գուսպաթ: Գյուղ Դերսիմի շրջանում: տեղանվան վերջում հայ. պատել բայի արմատն է: Տեղանունը նշանակում է «ճյուղապատ»:

Մայր լեզվի ց հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ ու ք (Օս., էջ 298):

Գուս- արմատի ենթադրվող կուս- տարբերակը համանիշ է հայ. կույս արմատի կուս տարբերակի հետ, որը հանդիպում է տեղանուններում «մաքուր» իմաստով: Ուստի այստեղ դրանով կազմված տեղանուններին չեն կարող անդրադառնալ:

Իսկ քուս- տարբերակը մենք տեսնում ենք մի քանի այլ տեղանուններում:

Քուս: Լեռնաբազուկ Հայկական պար լեռնաշղթայում:

Քուսովա: Գյուղ Դերսիմի գավառում: Տեղանվան մեջ նաև հայ. օվա բառն է, հովիտի քիչ աղավաղված ձևը:

Քուստ: Գավառ Արցախում, որի անվան վերջում հայ. -տ մասնիկն է (ՀԼՊ, էջ 248):

Քուստուտ: Գյուղ Մեղրիի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ուտ ածանցն է:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), կազմված մայր լեզվի գուս- ար- մատից և դրա հայկական քուս- տարբերակից, վկայում են այդ բնակավայրերի և լեռների ծառերով հարուստ լինելով մասին:

Դ

ԴԱԼԱԼՈՒ: Գյուղ Էջմիածնի գավառում (ՀՏԲ): Երբ այդ տեղանունը համեմատում ենք ներքև բերվող Դալեկ, Դալիկ և Դալյակ հին գյուղերի անունների հետ, պարզվում է, որ դրանում առանձնանում է դալ- բառը և -ալի ածանցը հայ. սեռական հոլովի -ու ցուցիչով:

Կարծում ենք, դա մայր լեզվի *dhāl-«ծաղկել, կանաչել» արմատն է (Pok.) «ծաղիկ» իմաստով: Վ. Պոկորնու բառարանում dhj-վերականգնված արմատ չկա, որից Հ. Աճառյանը բխեցնում է հայ. դալար բառը: Դա վերը նշված դալ- արմատն է: Ծաղիկ բառից են կազմված Դերսիմի գավառի Ծաղիկ, Շուշիի Ծաղիկ, Գեղարքունիքի Ծաղիկ ու շատ այլ հայկական տեղանուններ (ՀՏԲ): Մայր լեզվի դալ- «ծաղիկ» արմատը հանդիպում է նաև ստորև բերվող տեղանուններում:

Դալա: Գյուղ Սասունում: Տեղանվան վերջում հայ. սեռականի -ա ցուցիչն է:

Դալան: Բնակավայր Գենջի գավառում, որի անվան վերջում հայ. -ան ածանցն է:

Դալանիկ: Գյուղ Լճեի գավառակում:

Դալաշամբ: Բնակավայր Մակուի շրջանում:

Դալաս: Գյուղ Բիրլիսի նահանգի Սպարկերտի շրջանում: Տեղանվան վերջում -աք ածանցն է, հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Դալավար: Բնակավայր Սպերի շրջանում: Տեղանունը հայ. -վար ածանցով է:

Դալավեր: Գյուղ Կարսի գավառում, որի անվան վերջում հայ. վեր «վեր, վերի ծայր» բառն է: Այն նշանակում է «գեր ծաղկած գյուղ»:

Դալաքարի: Բնակավայր Բայազետի գավառում:

Դալաքլի: Գյուղ Կապանի շրջանում, որի անվան մեջ հայ. -աք ածանցն է և ապա լի «լի» բառը:

Դալաֆ: Բնակավայր Երզնկայի գավառում: Տեղանվան վերջում հայ. գործիական հոլովի -ավ ցուցիչն է օտար աղավաղումով:

Դալեկ: Գյուղ Ալաշկերտի շրջանում: Տեղանվան մեջ նաև հայ. եկ բառն է:

Դալի: Գետակ, Որոտանի վտակ (տրբ. Դալի գետ): Տեղանունը հայ. սեռական հոլովի -ի ցուցիչով է: Գյուղեր Նոր Բայազետի, Գանձակի գավառներում, որոնց անվանը կցվել է որևէ թուրք. անձնանուն, որպեսզի դալի բառը հասկացվի դրանց լեզվով «վայրի, վայրենի, խելատ» և դառնա այդ լեզվով տեղանուն: Դա նրանց կողմից հայերեն տեղանունները կեղծ ստուգաբանությամբ թուրքերեն դարձնելու անտրամաբանական միջոց է:

Դալիչայ: Գետակներ Ախուրյանի, Քասախի, Արփա գետի, Որոտանի, Վանա լճի ավազաններում, որոնց անվան վերջում թուրք. չայ «գետ» բառն է:

Դալիսար: Լեռներ Իջևանի շրջանում:

Դալիսխանա: Գազաթ Արդվինի գավառում, որի անվան մեջ -իք ածանցն է հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով և խան «իջևան» բառը (ՀԱԲ):

Դալիքար: Լեռնաճյուղ Արագածի արևելյան մասում:

Դալիքդաղ: Լեռ Հայկական պարում:

Դալիքդաշ: Գյուղ Նոր Բայազետի շրջանում (այժմ՝ Ծակքար Մարտունու շրջանում), որի անվան վերջում թուրք. դաշ «քար» բառն է: Այդպես են կոչվել Գանձակի, Ղազախի մեկական լեռ:

Դալիքթեք: Գազաթ Սյունյաց լեռնահամակարգում, որի անվան մեջ հայ. իք և -է ածանցներն են ու «թեք» բառը:

Դալլաքլու: Գյուղեր Կապանի, Արովյանի և Նախիջևանի շրջաններում: Տեղանունը իր մեջ ունի հայ. -աք ածանցը և ապա թուրք. -լու մասնիկը: Կրկնակ լ հնչյունը թուրքերի կողմից կեղծ ստուգաբանության հետևանք է:

Դալմա: Թաղամաս Երևանում և լեռնաճյուղ Սևանի ավազանում, որոնց անվան վերջում հին հայ. մայակ «շտեմարան» բառի մա- արմատն է (ՀԱԲ):

Դալյակ: Գյուղ Բայազետի գավառում: Տեղանունը վերջանում է -եակ ածանցով:

Դալովեր: Բնակավայր Կարսի շրջանում, որի անվան մեջ հայ. -ով և -եր մասնիկներն են:

Դալուդադ: Լեռներ Հայկական Տավրոս լեռնահամակարգում, որի անվան մեջ դալի անունը սեռական հոլովաձևով է, որից հետո թուրք. դադ «լեռ» բառը:

Դալուլար: Գյուղեր Կապանի, Արտաշատի, Կաղզվանի շրջաններում, որոնց անվան վերջում թուրք. հոգնակիակերտ -լար մասնիկն է:

Դալք: Գյուղ Սյունիքի նահանգի Կովսական գավառում:

Բերված բոլոր տեղանունները (ՀՏԲ), որոնք իրենց հիմքում ունեն մայր լեզվի դալ- «ծաղիկ» արմատը, հուշում են դրանց տեղանքի բուսական աշխարհի ծաղիկներով հարուստ լինելու մասին:

ԴԵԲՄԼԻՄ: Գյուղակ Վանի նահանգի Հեքյարի գավառում (ՀՏԲ): Տվյալ տեղանունը համեմատելի է Դվին քաղաքի Դեբիլ և Վանի գավառի Դեբեքլու բնակավայրի անունների հետ, որոնք բերվում են ստորև: Դրանից պարզ է դառնում, որ Դեբանիս տեղանվան մեջ առանձնանում է հայկական գրավոր աղբյուրներին անծանոթ դեբ - բառը, -անի ածանցը և հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչը:

Այն հիշեցնում է հնդեվրոպական նախալեզվի *dheb- «հաստ, պինդ» արմատը (Pok.):

Հին հայերենի հաստ «ամուր, հաստաբուն» բառը (ՀԱԲ) հանդիպում է Արցախի նահանգի Հաստաբակ գավառի, Մալաթիայի Հաստեսի, Դերսիմի Հաստեկ և Մալաթիայի Հաստեսի գյուղերի անուններում (ՀՏԲ) «ամուր» իմաստով:

Մայր լեզվի դեբ- արմատը այդ իմաստով հանդիպում է նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Դեբա: Գետակ Խարբերդի դաշտում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ա ցուցիչն է: Այն հուշում է, թե դրա ափերը ամուր են:

Դեբախի: Լեռներ Շիրակի սարահարթում և Փամբակի լեռներում, որի անվան մեջ հայ. -ախ ածանցն է (հմմտ. կամք և կամախ «նվեր») և լի բառը:

Դեբակլու: Լեռնանցք Զանգեզուրում:

Դեբես: Գետ Գուգարք նահանգում: Տեղանունը վերջանում է հայ. -ես ածանցով:

Դեբեքլու: Գյուղ Վանի շրջանում, որի անվան վերջում հայ. -եք ածանցն է և լի բառը:

Դեբիլ: Արաբական և թուրքական աղբյուրներում այդպես է կոչվել Դվին քաղաքը: Տեղանվան վերջում հայ. -իլ ածանցն է:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ) մատնանշում են բնակավայրերի, լեռների և գետերի ափերի ամուր լինելը:

ԴԵԼԱԼԻ: Գյուղ Ելիզավետպոլի Կարյազիների գավառում (ՀՏԲ): Այդ տեղանունը, համեմատելով ստորև բերվող Դելիք, Դելիբ և Դելիկ հին գյուղերի անունների հետ, պարզ է դառնում, որ իր հիմքում ունի դել- բառը, որը հայերեն գրավոր աղբյուրներում չի հանդիպում, և -ալի ածանցը:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *del- «երկար» արմատն է (Pok.):

Բնակավայրերի երկար դրվածք ունենալու հատկանիշը մենք տեսնում ենք Խոտորջրի շրջանի Երկեն, Կապանի Երկենանց, Էրզրումի Երկինիս և Երզնկայի Երկայն հին գյուղերի անուններում (ՀՏԲ):

Այդ դեմքը «երկար» բառն ունեն իրենց կազմում նաև ներքոհիշյալ տեղանունները:

Դեղակ: Գյուղեր Ջանգելանի և Ղազախի շրջաններում, որոնց անվան մեջ հայ. -ակ մասնիկն է և լի բառը:

Դեղեզ: Բնակավայր Վանի նահանգի Ջուլամերկի գավառակում: Տեղանվան մեջ նաև հայ. եզ «միակ, մեկ» բառն է:

Դեղեք: Գյուղ Սասունի Խուլփ գավառակում, որի անվան վերջում հայ. -ետ ածանցն է թ տարբերակով (հմմտ. փաթաթել և փաթեթ):

Դեղեք: Բնակավայր Սալաթիայի գավառում: Տեղանունը վերջանում է -եք ածանցով:

Դեղիբաբա: Գյուղեր Բասենի, Էրզրումի և Վանի շրջաններում, որոնց անվան մեջ հին հայ. բաբայ «բլուր» բառն է (ՀԱԲ): Տեղանունը թերևս նշանակում է «երկար բլրի վրա գտնվող բնակավայր»:

Դեղիկ: Բնակավայր Էրզրումի գավառում (տրբ. Դեղիք):

Դեղիկի: Գյուղ Սղերդի շրջանում (տրբ. Դեղիքի): Տեղանվան վերջում -իկ ածանցից հետո սեռական հոլովի -ի ցուցիչն է:

Դեղիֆ: Բնակավայր Ջավախքում, որի անվան վերջում հայ. գործիական հոլովի -իվ ցուցիչն է աղավաղված ձևով:

Հնդեվրոպական նախալեզվի d հնչյունը հին հայերենում դարձել է նաև թ ու տ (Օս., էջ 298):

Դեմքը արմատի թեմքը և տեմքը տարբերակները առկա են ներքոհիշյալ տեղանուններում:

Թեմք: Գյուղեր Սուշի և Դերսիմի շրջաններում (տրբ. Տեմք):

Թեմեկ: Բնակավայր Սալաթիայի գավառում (տրբ. Թեմեք): Վերջին տարբերակը հուշում է, որ այդ տեղանվան վերջում հայ. -եք ածանցն է:

Թեմեվ: Գյուղ Տրապիզոնի գավառում: Տեղանվան վերջում հայ. գործիական հոլովի -եվ ցուցիչն է:

Թեմիկ: Բնակավայրեր Թալինի, Կաղզվանի և Սուշի շրջաններում:

Թեմին: Գյուղ Դերսիմի գավառում, որի անվան վերջում հայ. ածականակերտ -ին ածանցն է:

Թեմխան: Բնակավայր Սղերդի շրջանում (տրբ. Տեմխան): Տեղանվան մեջ նաև հին հայ. խան «իջևան» բառն է (ՀԱԲ): Այն, թերևս, նշանակում է «իջևանատուն ունեցող երկար գյուղ»:

Թեմյակ: Գյուղ Կարսի մարզում, որի անվան մեջ հայ. -յակ (-եակ) մասնիկն է:

Տեման: Բնակավայր Սղերդի շրջանում, որի անվան մեջ հայ. -ան գործողություն ցույց տվող մասնիկն է:

Տեմիդ: Գյուղ Սասունի Խուլփ գավառակում: Տեղանվան վերջում հայ. -իտ ածանցն է բարբառային ձևով:

Տեմյան: Բնակավայր Բիթլիսի նահանգի Գենջի գավառում:

Տեմիկ: Բնակավայրեր Խնուսի գավառակում և Կարսի շրջանում:

Տեմուկ: Գյուղ Սղերդի գավառում:

Սոստ մեր էրայի սկզբներից հին հայերենի շատ բառերի լ հնչյունը սկսում է դառնալ դ (Օս., էջ 311):

Մայր լեզվի դեմքը «երկար» արմատը այս տարբերակով մենք տեսնում ենք ներքոհիշյալ տեղանուններում:

Դեմք: Գյուղեր Սոկսի և Գորիսի շրջաններում:

Դեղառ: Լեռ Հայկական Տավրոսի կենտրոնական հատվածում: Կարծում ենք, տեղանվան վերջում հայ. -ար ածանցն է քիչ աղավաղված ձևով:

Դեղսար: Գյուղ Նախիջևանի շրջանում:

Դեղեք: Բնակավայր Նախիջևանում:

Դեղթափ: Քարածայր Կամախի շրջանում, որի անվան մեջ նաև թափ բառն է «պտույտ» իմաստով (ՀԱԲ):

Դեղի: Գյուղ Սյունիքի Հաբանդ գավառում:

Թեղսար: Լեռ Շիրակում:

Տեղ: Գյուղ Գորիսի շրջանում և լեռ, որի անունով կոչվել է այդ բնակավայրը:

Տեղան: Բնակավայր Քղիի գավառակում: Տեղանունը վերջանում է հայ. -ան ածականակերտ ածանցով:

Տեղեր: Գետակ, Ամբերդ գետի աջ վտակի օժանդակն է:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ) հուշում են բնակավայրերի և լեռների երկար դրվածք ունենալու մասին:

ԴԵՐԳԱԼԲ: Գյուղ Բիթլիսի նահանգի Սդերդի գավառակում (ՀՏԲ): Այդ տեղանունը բաղդաստելով ստորև բերվող Դերգեզ, Դերգեվանք բնակավայրերի և Դերգյազին լեռան անունների հետ՝ մեզ համար պարզ է դառնում, որ դրանում առանձնանում են դերգ և ալբ բառերը, որոնք հայկական գրավոր աղբյուրներում չեն հանդիպում:

Այս տեղանվան մեջ մենք տեսնում ենք հնդեվրոպական մայր լեզվի *dheregh- «բռնել, պահել ամուր» և *albho-«սպիտակ» արմատները (Pok.): Մայր լեզվի բազմավանկ բառերի վերջին ձայնավորը հին հայերենում ընկել է, քանի որ շեշտը հաստատվել է նախավերջին վանկի վրա:

Դերգալբ տեղանունը, թերևս, նշանակում է «սպիտակ քարերով ամուր կառուցված բնակավայր»:

Այն իմաստի առումով մասամբ հիշեցնում է Արշարունիք գավառի Ամուր ամրոցի և Ստեփանավան քաղաքից ոչ հեռու Ամրակ (ավերակ) և Ղազախի Ամրեք հին գյուղերի անունները (ՀՏԲ):

Մայր լեզվի դերգ- «ամուր» արմատը կարելի է տեսնել նաև ստորև բերվող տեղանուններում:

Դերգամ: Գյուղ Բիթլիսի նահանգի Բշերիկի գավառակում, որի անվան մեջ նաև հայ. ամ- «լի» արմատն է (ամալ, ՀԱԲ) և սեռական հոլովի -ո ցուցիչը:

Դերգել: Բնակավայր Վանի նահանգի Հեքյարի գավառում: Տեղանվան վերջում հայ. -ել ածանցի հին -ել տարբերակն է:

Դերգեվանք: Գյուղ Մուշի շրջանում (տորբ. Դերկեվանք, Դերքեվանք), որի անվան մեջ նաև -ե- հոդակապով վանք բառն է:

Դերգետ: Բնակավայր Դիարբեքիրի նահանգի Իլիջայի գավառակում: Տեղանվան վերջում հայ. -ետ ածանցն է:

Դերգյազին: Լեռ Վանա լճի հյուսիս-արևելյան ավազանում, որի անվան մեջ նաև հին հայ. ազ-«չոր» արմատն է (տես ազազել «չորանալ»

ՀԱԲ) և -ին ածականակերտ ածանցը: Դրանում յ հնչյունը օտարների կողմից ա ձայնավորի քմայնացման արդյունքն է:

Նախալեզվի dh հնչյունը հին հայերենում դարձել է նաև ք ու տ, իսկ gh-ն՝ նաև կ ու ք (Օպ., էջ 298):

Դերգ- արմատը նշված տարբերակներով մենք տեսնում ենք ստորև բերվող տեղանուններում:

Դերկ: Գյուղեր Դիարբեքիրի նահանգում և Շատախի շրջանում:

Դերկունիս: Բնակավայր Վանի նահանգի Ջուլամերկի գավառակում, որի անվան վերջում հայ. -ունի ածանցն է և ապա՝ հին հոգնակի հայ-ցական հոլովի -ս ցուցիչը:

Դերքեվանք: Գյուղ Մուշի գավառում:

Թերգեվեր: Բնակավայր Ուրմիա լճից արևմուտք (տորբ. Թերկեվեր): Տեղանվան մեջ հայ. -եվ և -եր ածանցներն են:

Թերքեշ: Գյուղ Նախիջևանի գավառում, որի անվան վերջում հայ. -եշ ածանցն է:

Թերքեր: Քաղաք Վանի նահանգում:

Տերգավար: Գավառ Վանա և Ուրմիա լճերի միջև: Տեղանվան վերջում -ա- հոդակապով հայ. -վար ածանցն է:

Տերկան: Բնակավայր Բալուի գավառակում, որի անվան վերջում հայ. -ան հոգնակի իմաստ ընծայող ածանցն է:

Տերկաշեն: Գյուղ Վանի գավառում:

Տերկե: Բնակավայր Դիարբեքիրի գավառում, որի անվան վերջում հայ. - է ածանցն է:

Տերկեշ: Գյուղ Նախիջևանի շրջանում:

Տերկեվանք: Բնակավայր Մուշի գավառում:

Տերք: Գյուղ Բայազետի շրջանում:

Տերքու: Բնակավայր Մուշի գավառում, որի անունը վերջանում է հայ. սեռական հոլովի -ու ցուցիչով:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք իրենց կազմում ունեն մայր լեզվի դերգ- արմատը և դրա հայերեն տարբերակները, մատնանշում են նշված բնակավայրերի ամուր կառուցված լինելը:

ԴԵՏՄԻՆԱՅ: Գավառ և գյուղ Խարբերդի նահանգում (տրբ. Տերսիմ, ՀՏԲ): Այս տեղանունը, համեմատելով ներքոհիշյալ Թերսուն և Թերսուզ հին գյուղերի անունների հետ, պարզ է դառնում, որ կազմված է դերս- բառից, որը հայկական գրավոր աղբյուրներում բացակայում է և -իմ ածանցից (հմմտ. ուշ և ուշիմ):

Կարծում ենք, դերս- բաղադրիչը հնդեվրոպական նախալեզվի *dher-«համարձակվել, քաջ լինել» արմատն է (Pok.):

Այդ իմաստն ունեն Մակուի շրջանի Քաջոտ, Սասունի Քաջոնք, Երզնկայի Քաջարան, Կապանի Քաջարան և այլ հին բնակավայրերի անուններ (ՀՏԲ):

Նախալեզվի դերս- արմատը մենք տեսնում ենք նաև ներքև բերվող տեղանուններում:

Դերսիլ: Գյուղ Դիարբեքիի նահանգի Սլիվանի գավառակում (տրբ. Տերսիլ), որի անվան վերջում հայ. -իլ ածանցն է (հմմտ. կաթել և կաթիլ):

Մայր լեզվի dh հնչյունը հին հայերենում դարձել է նաև թ ու տ (ՕԿ., էջ 298): Դերս- արմատը այդ տարբերակներով առկա է ներքև բերվող տեղանուններում:

Թերսիգոմ: Բնակավայր Էրզրումի գավառում (տրբ. Տերսիգոմ):

Թերսուն: Գյուղ Տրապիզոնի գավառում (տրբ. Տերսուն), որի անվան վերջում հայ. -ուն ածանցն է

Թերսուզ: Բնակավայր Խոյի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ուճ ածանցն է (բրդել և բրդուճ) քիչ աղավաղված ձևով:

Տերսական: Գյուղ Դիարբեքիի գավառում:

Այս տեղանունները (ՀՏԲ), որոնք կազմված են մայր լեզվի դերս-«քաջ, համարձակ» արմատից և դրա հայերեն տարբերակներից, մատնանշում են բնակիչների համարձակ լինելը:

ԴԻ: Գյուղ Բիթլիսի նահանգի Խիզանի գավառակում (տրբ. Տի, ՀՏԲ):

Հին հայերենում երեք դի արմատներ կան: Դրանցից առաջինը՝ դի, նշանակում է «դիակ», երկրորդը՝ դիել «ծիծ ուտել» և երրորդը՝ դիբ

«աստված, կուռք» բառի մեջն է (ՀՄԲ), որոնք իմաստի տեսակետից չէին կարող գործածվել որպես տեղանուն:

Ուստի, կարծում ենք, Դի տեղանվան մեջ հնդեվրոպական նախալեզվի *dē - «կապել» արմատի dī - տարբերակն է (Pok.):

Այդպիսի իմաստ ունեն Խարբերդի գավառի Կապան գավառակի, Բիթլիսի Կապան, Արդահանի Կապան, Օլթիի շրջանի Կապան և շատ այլ հին գյուղերի անուններ, որոնք ցույց են տալիս, թե այդ բնակավայրերը կապող դիրք ունեն:

Տվյալ դի- արմատը առկա է նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Դիադին: Գյուղեր Բայազետի (տրբ. Տիատին), Մուշի և Շարուրի գավառներում, որոնց անունը դի արմատի կրկնությունն է -ա- հոդակապով:

Դիակամուրջ: Գյուղ Արդվինի շրջանում: Այն նշանակում է «կապկամուրջ»:

Դիան: Ժամանակակից բնակավայր Թալինի շրջանում, որի անվան վերջում հայ. -ան գործողություն ցույց տվող մասնիկն է: Այն նշանակում է «կապող»:

Դիասար: Գյուղ Նախիջևանի շրջանում:

Դիարբակ: Այժմյան Դիարբեքիի հին անունն է, որի մեջ հայ. -ար ածանցն է և բակ բառը: Այն նշանակում է «կից բակեր ունեցող բնակավայր»:

Նախալեզվի d բաղաձայնը հին հայերենում դարձել է նաև տ ու թ (ՕԿ., էջ 298):

Դի- արմատի թի- և տի- տարբերակները կարելի է առանձնացնել ստորև բերվող տեղանուններում:

Թի: Գյուղ Վանի նահանգի Հերիկի գյուղախմբում:

Թիախս: Բնակավայր Սասունի Խուլփ գավառակում, որի անվան մեջ հայ. -ախ ածանցն է (հմմտ. կամք և կամախ «նվեր», շաղել և շաղախ) և հին հայ. հայցական հոլովի -ս ցուցիչը

Թիար: Շրջան Վանի նահանգի Հեքյարի գավառում: Տեղանվան վերջում հայ. -ար ածանցն է (հմմտ. թաղ և թաղար, պայտ և պայտար):

Թիյոնիք: Գյուղ Մուշի շրջանում, որի անվան մեջ հայ. -ոն և -իք մասնիկներն են:

Տի: Բնակավայր Բիթլիսի նահանգի Խիզանի և Վանի Շամդինանի գավառակներում:

Տիք: Գյուղ Բիթլիսի նահանգի Գենջի գավառում:

Տիարի: Շրջան Վանի նահանգի Հեքյարի գավառում, որի անվան մեջ վերը նշված -ար ածանցն է (տես Թիար) և սեռական հոլովի -ի ցուցիչը:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ) ցույց են տալիս, որ այդ գյուղերը կամ լեռները կապող դիրք են ունեցել:

ՂՈՒՍՍՍՍԿ: Գյուղ Սասունի Խարզան գավառակում (տրբ. Տուսատակ, ՀՏԲ): Այդ տեղանունը համեմատելով ներքև բերվող Դուսուր և Թուսու տեղանունների հետ պարզ է դառնում, դրա մեջ առկա է դուս բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում, և -ա- հոդակապով տակ արմատը:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *dheyes-«մրրկել, անձրև, մեզ» արմատի *dhñs- տարբերակն է (Pok.):

Մայր լեզվի երկար ձայնավորները հին հայերենում դարձել են սովորական հնչյուն (ՀԼՊ, էջ 225):

Թերևս Դուսատակ տեղանունը նշանակում է «անձրևի տակ գտնվող բնակավայր»:

Նման իմաստն ունեն քղիի գավառի Անձրևիկ, Երզնկայի Մեզ և Օլթիի շրջանի Մեզենք հին գյուղերի անունները (ՀՏԲ):

Դուս- արմատը կարելի է տեսնել նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Դուսար: Գյուղ Նախիջևանի գավառում, որի անվան վերջում հայ. -ար ածանցն է (հմմտ. պայտ և պայտար, թաղ և թաղար):

Դուսուր: Լեռ Հայկական պարի արևելյան հատվածում: Տեղանվան վերջում հայ. -ուր ածանցն է (հմմտ. մուր և մրուր):

Մայր լեզվի dh հնչյունը հին հայերենում դարձել է նաև ք ու տ (ՕԿ., էջ 298):

Դուս- արմատը այդ տարբերակներով կարելի է առանձնացնել ներքոհիշյալ տեղանուններում:

Թուսանի: Գյուղ Կադզվանի շրջանում, որի անվան վերջում հայ. -անի ածականակերտ ածանցն է:

Թուսկուլու: Բնակավայր Նոր Բայազետի շրջանում (տրբ. Տուսկուլու, այժմ՝ Լուսակունք): Տեղանվան մեջ նաև հայ. կուլ «կլանում, կուլ տալ» բառն է (ՀՄԲ) և սեռական հոլովի -ու ցուցիչը: Այն նշանակում է «անձրևին կուլ գնացած գյուղ»:

Թուսու: Գյուղ Բիթլիսի նահանգի Սպարկերտի գավառակում (տրբ. Տուսու), որի անունը սեռական հոլովի -ու ցուցիչով է:

Բերված տեղանունները (ՀՏԲ) մատնացույց են անում այդ վայրերի անձրևոտ լինելը:

Ե

ԵՐՄԱՆԷ: Գյուղ Մուշի գավառում (ՀՏԲ): Տվյալ տեղանունը համեմատելով ներքև բերվող Երսունի, Երսունկ և Երսինեակ հին գյուղերի անունների հետ պարզվում է, որ դրանում առկա է երս- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում և -անք ածանցը:

Կարծում ենք, դա հնդեվրոպական նախալեզվի *ers -«եռալ» արմատն է (ՀՄԲ, տես եռ):

Երսանք տեղանունը այդ իմաստով հիշեցնում է Վանի նահանգի Եռմանց և Մեղրիի շրջանի Եռնաձոր հին բնակավայրերի անունները (ՀՏԲ): Թերևս այդ տեղանունները մատնանշում են այդ տեղերի բնակիչների եռուն աշխատանքով զբաղվելը: Սակայն լեռների և գետերի անուններում հանդիպող երս- արմատը հուշում է առաջինների իրաբխային, իսկ երկրորդների հորդ լինելու մասին:

Երս- արմատը նշված իմաստով հանդիպում է նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Երսանդադ: Լեո Մնձուրի լեռնահամակարգում, որի անվան վերջում գործողություն ցույց տվող -ան ածանցն է (հմմտ. կծել և կծան) ու թուրքերի ավելացրած դադ «լեռ» բառը: Այն նշանակում է «եռացող»:

Երսիկյակ: Գյուղ Օլթիի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ին և -յակ ածանցներն են:

Երսիչայ: Գետակ, որը միանում է Արաքսին Օրդուբադի մոտ:

Երսնի: Բնակավայր Մուշի գավառում, որի անվան վերջում հայ. -ոն ածանցն է և սեռական հոլովի -ի ցուցիչը:

Երսունկ: Գյուղ Մուշի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ունք ածանցն է:

Բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք կազմված են մայր լեզվի երս-«եռալ» արմատից, հուշում են մարդկանց եռուն աշխատանքի, լեռների հրաբխային և գետերի արագահոս լինելու մասին:

Թ

ԹՈՍ: Գյուղ Մուշի գավառում (ՀՏԲ): Նման բառ հայկական գրավոր աղբյուրներում չկա: Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *thom- «տուն» արմատն է (ИЯИ, էջ 50):

Մայր լեզվի th հնչյունը հին հայերենում դարձել է թ և դ (ՀԼՊ, էջ 253):

Թում տեղանունը մեր առաջարկած իմաստով հիշեցնում է Խլաթի գավառակի Տունիս (-իք հոգնակիակերտ մասնիկով) գյուղի անունը: Խրճիթ բառից է կազմված Ապահունիք գավառի Խրճտոնք բնակավայրի անունը: Իսկ հյուղ- արմատով է Խարբերդի շրջանի Հյուղե գյուղի անունը (ՀՏԲ):

Թում- «տուն» արմատը հանդիպում է նաև ստորև բերվող տեղանուններում:

Թում: Գյուղեր Էրզրումի և Վանի գավառներում:

Թումա: Բնակավայր Խարբերդի շրջանում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ա ցուցիչն է:

Թումակ: Գյուղ Մալաթիայի գավառում:

Թուման: Ավերակ բնակավայր հին Երևանի գավառում:

Թումըկ: Գյուղ Բայազետի շրջանում, որի անվան վերջում հայ. -իկ ածանցն է օտար աղավաղումով:

Դուման: Բնակավայր Խնուսի գավառակում:

Դումբաթ: Գյուղ Բայազետի գավառում, որի անվան մեջ նաև հայ. բաթ «միայն» բառն է (ՀԱԲ):

Դումբակի: Գյուղ Մակուի շրջանում: Տեղանվան մեջ նաև հայ. բակ «գավիթ» բառն է:

Դումիան: Բնակավայր Մուշի գավառում, որի անվան վերջում հայ. -յան ածանցն է:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ) կազմված են մայր լեզվի թում- «տուն» արմատից և դրա հայերեն դոմ- տարբերակից:

Լ

ԼԱԳԵՐ: Լեո Կարսի բարձրավանդակում, համանուն գետի ավազանում (ՀՏԲ): Այդ տեղանունը բաղդատելով ներքև բերված Լագլան, Լագորի գյուղերի և Լագուպար գետի անունների հետ՝ պարզվում է, որ դրանում առանձնանում է լագ բառը, որը հայկական գրավոր աղբյուրներին անծանոթ է, և -եր հոգնակիակերտ մասնիկը:

Հավանաբար, այն հնդեվրոպական նախալեզվի *lāgh-«կտրել» արմատն է (Pok.): Մայր լեզվի երկար ձայնավորները հին հայերենում դարձել են սովորական հնչյուն (ՀԼՊ, էջ 225):

Նման իմաստ ունեն Վայոց ձորի գավառի Կտրոնք, Մոկսի շրջանի Կտոր, Սասունի Կտրնի հայկական հին տեղանունները (ՀՏԲ):

Լագեր լեռան անունը կարելի է ընկալել որպես «կտրվածքներով լցված կտոր-կտոր գազաթներով»:

Լագ արմատը նման իմաստով հանդիպում է նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Լագլան: Գյուղ Դերսիմի գավառում, որի անվան վերջում հայ. -լան մասնիկն է (հմմտ. խաբել և խափլան «խաբող»):

Լագորի: Բնակավայր Արդանամադենի գավառում: Տեղանվան վերջում հայ. -որ (հմմտ. բեկոր, խոտոր) ածանցն է, որից հետո՝ սեռական հոլովի -ի ցուցիչը:

Լագուպար: Գետ Ճորոխի ավազանում, որի անվան մեջ նաև -ո- հոդակապով պար «շրջան» բառն է (ՀԱԲ): Այն նշանակում է «շրջանաձև կտրվածքներով գետ»:

Նախալեզվի ցի հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ և ք (Օս., էջ 298):

Բերենք լազ- արմատի այդ տարբերակներով կազմված տեղանուններ:

Լակաթաղ: Գյուղ Նախիջևանի գավառում (տրբ. Լաքաթաղ), որի անվան մեջ -ա- հոդակապով հայ. թաղ «թաղ» բառն է (ՀԱԲ):

Լակբար: Բնակավայր Սպերի գավառակում: Տեղանվան վերջում հայ. -բար ածանցն է:

Լակի: Գյուղ Ղազախի շրջանում, որի անունը հայ. սեռական հոլովի -ի ցուցիչով է:

Լակզի: Գավառակ Էրզրումի նահանգում: Տեղանվան մեջ նաև հայ. զի «ինչպես» բառն է (ՀԱԲ):

Լաքաթաղ: Լեռ Զանգեզուրում: Հավանաբար այն կոչվել է մոտի գյուղի անունով:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), որոնց մեջ առկա է մայր լեզվի լազ- արմատը և դրա հայ. լակ- և լաք- տարբերակները, մատնանշում են տեղանքի կտրվածքներ ունենալը:

ԼԱՏԻՆ: Գյուղ Նախիջևանի գավառում (ՀՏԲ):

Երբ այդ տեղանունը համեմատում ենք ներքոհիշյալ Լատար, Լատեր գյուղերի և Լատոնցու լեռների անունների հետ, պարզվում է, որ դրա մեջ լատ բառն է, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հիշատակվում, և -իկ ածանցը:

Հավանաբար այն հնդեվրոպական նախալեզվի *lat- «խոնավ, թաց» արմատն է (Pok.):

Այդպիսի իմաստ ունեն Ուրմիայի շրջանի Թացու, Վանի նահանգի Կարկառի գավառակի Թացու կամ Թացուն և Էրզրումի գավառի Թացմաձոր գյուղերի անունները (ՀՏԲ):

Մայր լեզվի լատ-«թաց, խոնավ» արմատը մենք տեսնում ենք նաև ստորև բերվող տեղանուններում:

Լատար: Գյուղ Մուշի գավառում (տրբ. Լաթար), որի անվան մեջ նաև հայ. -ար ածանցն է (հմմտ. մութ և մթար):

Լատեր: Բնակավայր Մուշի շրջանում (տրբ. Լաթեր): Տեղանվան վերջում հայ. -եր մասնիկն է:

Լատոնցու: Լեռնաշղթա Ճորոխի ավազանի Խոտրջուրի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -ոնք ածանցն է հոգնակի սեռական հոլովաձևով և սեռական հոլովի -ու ցուցիչը:

Մայր լեզվի t բաղաձայն հնչյունը հին հայերենում դարձել է նաև թ (ՀԼՊ, էջ 254): Ստորև բերենք լաթ- տարբերակով երկու տեղանուններ:

Լաթ: Գյուղ Արծկե-Էրզրում ճանապարհին:

Լաթիֆ: Գետ Ախուրյանի ավազանում, որի անվան վերջում հայ. -իվ գործիական հոլովի ցուցիչն է քիչ աղավաղված ձևով:

Բերված տեղանունները հուշում են տեղանքի թաց լինելը:

ԼԵԳԱՍՄԻ: Գյուղ Արդահանի շրջանում (ՀՏԲ): Տվյալ տեղանունը համեմատելի է ստորև բերվող Լեզլեկ, Լեզգի բնակավայրերի և Լեզլի լեռան անունների հետ: Պարզ է դառնում, որ դրանում առանձնանում է լեզ- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում և հին հայ. ամ-«լի» և լի «լի» արմատները:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *leg-«անձրև մաղել, կաթկթել» բառն է (Pok.):

Լեզամլի տեղանունը թերևս նշանակում է «շատ անձրևոտ գյուղ»:

Այդ լեզ- արմատը նշված իմաստով հանդիպում է նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Լեզգի: Գյուղախումբ Քղիի գավառակում, որի անվան մեջ նաև հայ. զի «ինչպես» բառն է:

Լեզլեկ: Բնակավայր Սպերի գավառում: Տեղանվան մեջ լեզ- արմա տը կրկնված է:

Լեզլի: Լեռ Ջավախքի լեռներում (տորք. Լեկլի), որի անվան վերջում հայ. լի «լի» բառն է:

Նախալեզվի g հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ ու ք (Օս., էջ 298): Լեզ- արմատը նշված տարբերակներով հանդիպում է ներքոհիշյալ տեղանուններում:

Լեկ: Գյուղեր Շատախի և Մեղրու շրջաններում:

Լեք: Բնակավայր Քղիի գավառակում:

Բերված տեղանունները (ՀՏԲ) հուշում են տեղանքի անձրևոտ լինելու մասին:

Կ

ԿԱՂԻՆ: Գյուղ Բիթլիսի նահանգի Սղերդի գավառում (ՀՏԲ): Ստորև բերվող Կաղալու, Կաղագետ և Կաղափա գյուղերի անունների հետ համեմատելիս՝ տեղանվան մեջ առանձնանում է կաղ- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում, և -ին ածանցը:

Հավանաբար, այն հնդեվրոպական նախալեզվի kadh- «պահպանել, պաշտպանել» արմատն է (Քոկ.):

Այդպիսի իմաստ ունեն Սյունիք նահանգի Բաղք-Քաշունիք գավառի Պահուբերդ, Վանի նահանգի Գավառ կոչվող գավառակի Պահանիս, նույն տարածքի Խոշաբի շրջանի Պահանց և Գեղարքունիքի Պահավանց հին տեղանունները (ՀՏԲ):

Կաղ- արմատը այդ իմաստով առկա է նաև ներքոհիշյալ տեղանուններում

Կաղազան: Գյուղ Երզնկայի գավառում, որի անվան մեջ հայ. -ական ածանցն է բարբառային հնչմամբ:

Կաղագետ: Բնակավայր Արդվինի շրջանում: Տեղանվան մեջ նաև -ա- հոդակապով գետ բառն է:

Կաղալա: Ավերակ գյուղ Ջավախքում, որի անունով կոչվել է նաև տեղի գետը: Դրա անվան վերջում հայ. -աղ ածանցի հին -ալ տարբերակն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Կաղափա: Բնակավայր Էրզրումի գավառում: Տեղանվան վերջում հայ. ափ «ափ, եզր» բառն է և սեռական հոլովի -ա ցուցիչը: Այն թերևս նշանակում է «եզրերով պաշտպանված բնակավայր»:

Կաղիս: Բնակավայր Սղերդի գավառում: Տեղանվան վերջում հայ. -իք ածանցն է:

Կաղիլի: Գյուղ Արարատի շրջանում (այժմ՝ Լանջանիստ), որի անվան վերջում հայ. -իլ ածանցն է և ապա սեռական հոլովի -ի ցուցիչը: Այդպես է կոչվել նաև մի ամբողջ Գորիսից մոտ 10կմ հարավ-արևելք:

Կաղիկ: Գյուղ Էրզրումի նահանգի Խորասանի շրջանում:

Կաղին: Բնակավայր Սղերդի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ին ածականակերտ ածանցն է:

Կաղինակ: Գյուղ Բիթլիսի նահանգի Խիզանի գավառակում, որի անվան վերջում հայ. -ին և -ակ ածանցներն են:

Կաղիր: Ավերակ բերդ Մեղրու շրջանում: Տեղանվան վերջում հայ. -իր ածանցն է (հմմտ. երկիր և երկինք):

Նախալեզվի k հնչյունը հին հայերենում դարձել է նաև ք ու խ, իսկ dh-ն՝ թ ու տ (Օս., էջ 298):

Ստորև բերենք կաղ- արմատի նշված հնչյունական տարբերակներով տեղանուններ:

Կատան: Գյուղեր Խնուսի և Մուշի շրջաններում, որոնց անվան վերջում -ան գործողություն ցույց տվող ածանցն է:

Կատեպանց: Բերդ և գյուղ Վանի գավառում: Տեղանվան մեջ -ե- հոդակապով նաև հայ. պան բառն է (հմմտ. պահապան, այգեպան) հոգնակի թվի սեռական հոլովի -ց ցուցիչով:

Կատիան: Բնակավայր Դիարբեքիրի նահանգում (տորք. Քաթիան): Տեղանվան վերջում հայ. -յան ածանցն է:

Կատինոք: Գյուղ Բիթլիսի նահանգի Խիզանի գավառակում, որի անվան մեջ հայ. -ին և -ոք ածանցներն են:

Կատիշար: Բնակավայր Դերսիմի գավառում: Տեղանվան մեջ նաև -ի- հոդակապով հայ. շար «շարք, խումբ» բառն է: Այն թերևս նշանակում է «բազմության կողմից պաշտպանվող գյուղ»:

Կատիրկայա: Գյուղ Տրապիզոնի գավառում, որի անվան մեջ առկա է -իր ածանցը և կայ «կայան, տեղ» ածանցը (ՀՄԲ):

Կատոգ: Բնակավայր Լաչինի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ոգ ածանցն է (հմմտ. գոռ և գոռոգ):

Կատոս: Գյուղ Դերսիմի գավառում, որի անվան վերջում հայ. -ոք ածանցն է:

Կատունի: Բնակավայրեր Էրզրումի և Հեքյարի գավառներում: Տեղանվան վերջում հայ. -ունի ածանցն է:

Կատուսա: Գյուղ Դերսիմում (տրբ. Կատուսան): Տեղանվան մեջ հայ. -ուք ածանցն է հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով և սեռական հոլովի -ա վերջավորությամբ:

Քադատու: Բնակավայր Մուշի գավառում, որի անվան մեջ նաև հայ. առ «առնելը» բառն է և սեռական հոլովի -ու ցուցիչ ը: Այն նշանակում է «պաշտպանության առնված բնակավայր»:

Քադիքոյ: Գյուղ Դիարբեքիի գավառում (տրբ. Քատի), որի անվան վերջում թուրք. քոյ «բնակավայր» բառն է:

Քադոքենլի: Բնակավայր Մակուի շրջանում: Տեղանվան վերջում թուրք. քենլ «գյուղ» բառն է:

Քաթ: Ավերակ գյուղ Շիրակում:

Քաթերս: Բնակավայր Ուրմիայի գավառում:

Քաթունկ: Գյուղ Շուշիի գավառում:

Խադ: Բնակավայր Սյունիքի նահանգի Հաբանդ գավառում:

Խադան: Գյուղ Սասունում, որի անվան մեջ հայ. -ան ածանցն է:

Խադիմլի: Բնակավայր Սուրմալուի շրջանում (տրբ. Խատիմլի), որի անվան մեջ հայ. -իմ ածանցն է և լի «լի» բառը:

Խադիտ: Գյուղ Սղերդի շրջանում: Տեղանունը -իտ ածանցով է:

Խադիր: Բնակավայր Բասենի գավառում, որի անունը հայ. -իր ածանցն ունի իր մեջ:

Խադիրի: Լեռ Արցախի Խաչեն գետի ստորին հոսանքի ավազանում: Տեղանունը նշված -իր ածանցով է և սեռական հոլովի -ի ցուցիչով:

Խադիրլի: Բնակավայրեր Շուշիի և Մակուի շրջաններում:

Խադիք: Գյուղ Էրզրումի գավառում, որի անվան վերջում -իք ածանցն է:

Խադրուս: Բնակավայր Կարսի շրջանում: Տեղանունը հայ. -ուք ածանցով է:

Խաթ: Գյուղ Բիթլիսի նահանգի Խիզանի գավառում:

Խաթա: Բնակավայր Մուշի շրջանում:

Խաթալ: Գյուղ Մուշի գավառում, որի անվան վերջում հայ. -աղ ածանցի հին -ալ տարբերակն է:

Խաթաղ: Բնակատեղի Դերջանի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -աղ ածանցն է:

Խաթերք: Բերդ Արցախի Խաչեն գավառում:

Խաթիավերա: Գյուղ Տրապիզոնի գավառում, որի անվան մեջ հայ. -ավ և -եր ածանցներն են ու սեռական հոլովի -ա ցուցիչը:

Խատ: Գյուղ Կուրաթլիի շրջանում:

Խատա գավառ: Այդ անունով է կոչվել Կոտայքը:

Խատադան: Բնակավայր Երզնկայի գավառում, որի անվան մեջ հայ. -աղ և -ան ածանցներն են:

Խատամ: Գյուղ Լաչինի շրջանում: Տեղանվան մեջ նաև հին հայ. ամ-«լի» բառն է:

Խատան: Բնակավայր Սասունում, որի անվան վերջում հայ. -ան ածանցն է:

Խատանիոն: Գյուղ Հեքյարի գավառում: Տեղանվան մեջ հայ. -անի և -ոն ածանցներն են:

Խատիլա: Բնակավայր Արդվինի շրջանում, որի անվան մեջ հայ. -իլ ածանցն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Խատիկ: Գյուղ Էրզրումի գավառում:

Խատիկլի: Բնակավայր Թոռուգի շրջանում, որի անվան մեջ հայ. -ին ածանցն է և լի բառը:

Խատիշար: Գյուղ Դերսիմի գավառում: Տեղանվան մեջ -ի- հոդակա-
պով հայ. շար «շարք, խումբ» բառն է:

Խատիք: Բնակավայր Էրզրումի գավառում:

Խատտուր: Գյուղ Բայազետի շրջանում, որի անվան մեջ նաև հայ.
տալ բայի տուր ձևն է: Այն նշանակում է «պաշտպանություն տվող»:

Այս բոլոր տեղանունները (ՀՏԲ), կազմված մայր լեզվի կադ-«պահ-
պանել, պաշտպանել» արմատից և դրա հայկական տարբերակներից,
ցույց են տալիս նշված բնակավայրերի պաշտպանված լինելը:

ԿԱԿԿ: Գյուղ Դիարբեքիի նահանգի Սլիվանի գավառում (ՀՏԲ):
Եթե այդ տեղանունը համեմատենք ներքև բերվող Կաունի բնակավայրի
անվան հետ, կպարզվի, որ դրանում առկա է կա- բառը, որը հայկական
գրավոր աղբյուրներում չի վկայված, և -իկ ածանցը:

Կարծում ենք, դա հնդեվրոպական նախալեզվի *kā -«սիրել, ցանկա-
նալ» արմատն է (Pok.):

Այդպիսի իմաստ ունեն Դիարբեքիի գավառի Սերան, Երզնկայի
Սերանիս, Ուրմիայի Սերի և Բալուի գավառակի Սերին հին բնակավայ-
րերի անունները (ՀՏԲ), որոնք մատնանշում են դրանց «սիրելի, ցանկա-
լի բնություն ունենալը»:

Մայր լեզվի կա- արմատը նշված իմաստով մենք տեսնում ենք նաև
ներքև բերվող տեղանուններում:

Կախնախլը: Բնակավայր Արցախում, որի անվան մեջ հայ. -ին, -ախ
ածանցներն են (հմմտ. խոր և խորին, խարդ «խայթոց» և խարդախ, կամք
և կամախ «նվեր») և լի «լի» բառը:

Կախնդերե: Գետակ, որը հոսում է Կադզվանի շրջանով: Տեղանվան
մեջ վերը նշված -ին ածանցից հետո թուրք. դերե «ձոր» բառն է:

Կաունի: Գյուղ Բիթլիսի նահանգի Սդերդի գավառում, որի անվան
վերջում հայ. -ունի ածանցն է:

Նախալեզվի k հնչյունը հին հայերենում դարձել է խ ու ք (ՀԼՊ, էջ
253):

Կա- արմատի խա- և քա- տարբերակները հանդիպում են ներքո-
հիշյալ տեղանուններում:

Խախլ: Գյուղեր Բաբերդի գավառակում և Էրզրումի գավառում,
որոնց անվան վերջում հայ. -իկ ածանցն է:

Խախն: Գետակ, որն հոսում է Խորասանի շրջանով: Տեղանվան վեր-
ջում հայ. -ին մասնիկն է:

Խախնեա: Գյուղ Օլթիի շրջանում, որի անվան մեջ հայ. -ին և -եք
ածանցներն են:

Խախա: Բնակավայր Վանի նահանգի Հեքյարի գավառում: Տեղանվան
վերջում հայ. -իք ածանցն է հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցի-
չով:

Խաունա: Գյուղ Վանի գավառում, որի անվան վերջում հայ. -ունք
ածանցն է հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Խաուրա: Բնակավայր Սալմաստի գավառում: Տեղանվան վերջում
հայ. -ուր ածանցն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Բերված տեղանունները (ՀՏԲ) հուշում են, որ այդ բնակավայրերի
բնությունը սիրելի է եղել:

ԿԱՄԲԵԸ: Գյուղ Էրզրումի գավառում (ՀՏԲ): Երբ այդ տեղանունը
համեմատում ենք ներքոհիշյալ Կամբալա, Կամբարվան հին գյուղերի և
Կամբիլ լեռան անունների հետ, ապա դրանում առանձնանում է կամբ-
բառը և -եր ածանցը:

Հին հայերենի կամբ(ի) «մի բույս (°)» կամ կամբակ «փափուկ կաշվից
կոշիկ» բառերը (ՀԱԲ) չէին կարող իրենց իմաստով գործածվել որպես
տեղանուն:

Կարծում ենք, Կամբեր տեղանվան մեջ հնդեվրոպական նախալեզվի
*kamb- «ծռել» արմատն է (Pok.):

Տեղանքի նման բնութագիր են տալիս Բասենի Ծուռս, Ախալցխայի
Ծոե, Ուրմիայի շրջանի Ծոստան և այլ գյուղերի անուններ (ՀՏԲ):

Կամբ- արմատը նշված իմաստով կարելի է առանձնացնել նաև
ստորև բերվող տեղանուններում:

Կամբալա: Գյուղ Սպերի շրջանում, որի անվան վերջում հայ. -ալ ածանցի հին -ալ տարբերակն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Կամբարվան: Բնակավայր Արդահանի շրջանում, որի անվան մեջ հայ. -ար ածանցն է և վան «բնակություն» բառը:

Կամբիլ: Լեռնագագաթ Սյունիքում (տրբ. Գամբիր, Կամբիր): Տեղանվան վերջում հայ. -իլ ածանցն է:

Մայր լեզվի k հնչյունը հին հայերենում դարձել է նաև խ ու ք (ՀԼՊ, էջ 253): Կամբ- արմատը խամբ- և քամբ- տարբերակներով գործածված է նաև մի քանի այլ տեղանուններում:

Խամբաշեխ: Գյուղ Բալուի գավառակում (տրբ. Խամպաշեխ), որի անվան վերջում հայ. -աշ և -եխ ածանցներն են:

Խամբար: Բնակավայր Վանի նահանգի Հեքյարի գավառում: Տեղանվան վերջում հայ. -ար մասնիկն է:

Քամբոր: Գյուղ և գետակ Սպերի շրջանում, որի անվան վերջում հայ. -որ ածանցն է (հմմտ. հատոր, բեկոր):

Այս տեղանունները (ՀՏԲ), որոնք կազմված են մայր լեզվի կամբ- ար- մատից և դրա հայկական տարբերակներից «ծուռ» իմաստով, վկայում են նշված բնակավայրերի տարածքների և լեռան ծուռ լինելու մասին:

ԿԱՆԴԱԼԱ: Գյուղ Տրապիզոնի նահանգում, Գայլ գետի վերին հոսանքի աջ ափին (ՀՏԲ): Այդ տեղանունը համեմատելի է ներքև բերվող Կանդիս, Կանդու հին բնակավայրերի և Կանդիլ լեռան անունների հետ: Դրանից պարզ է դառնում, որ այդ տեղանվան մեջ առկա է կանդ- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում և -ադ ածանցի հին -ալ տարբերակը ու սեռական հոլովի -ա ցուցիչը:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *kan-d-«լուսավոր» բառն է (Pok.):

Տեղանքին այդպիսի բնութագիր են տալիս Բաբերդ գավառակի Լուսոնք, Սյունիք նահանգի Հաբանդ գավառի Լուսակունք և Արտաշատի շրջանի Լուսաբեր հին գյուղերի անունները (ՀՏԲ):

Մայր լեզվի կանդ- բառը «լուսավոր» իմաստով գործածված է նաև ստորև բերվող տեղանուններում:

Կանդեյան: Գետ Արցախում: Տեղանվան վերջում -եդ ածանցի հին -ել տարբերակն է և -ան մասնիկը:

Կանդետի: Գյուղ Էրզրումի գավառում, որի անվան վերջում հայ. -ետ ածանցն է և ապա՝ սեռական հոլովի -ի ցուցիչը:

Կանդիլ: Լեռնագագաթներ Ծաղկանց և Հայկական պար լեռներում (տրբ. Գանդիլ) և գյուղ Սպերի շրջանում (տրբ. Գանտիլ): Տեղանունը հայ. -իլ ածանցով է:

Կանդիրի: Գյուղ Էրզրումի գավառում, որի անվան վերջում հայ. -իր ածանցն է և ապա՝ սեռական հոլովի -ի ցուցիչը:

Կանդիս: Բնակավայր Բաբերդ գավառակում: Տեղանվան վերջում հայ. -իք ածանցն է հին հոգնակի հայցականի -ս ցուցիչով:

Կանդու: Գյուղ Վանի շրջանում: Տեղանունը հայ. սեռական հոլովի -ու ցուցիչով է:

Մայր լեզվի k հնչյունը հին հայերենում դարձել է նաև q ու ք (ՕԿ., էջ 298): Կանդ -արմատը այդ տարբերակով հանդիպում է ներքոհիշյալ տեղանուններում:

Գանթ: Գյուղ հին Երևանի գավառում, Վեդի գետի ավազանում:

Գանթարա: Բնակավայր Մալաթիայի շրջանում, որի անվան վերջում հայ. -ար ածանցն է և ապա՝ սեռական հոլովի -ա ցուցիչը:

Գանթարկայա: Գյուղ Էրզրումի գավառում, որի անվան մեջ հին հայ. կայ «կայան» բառն է նաև:

Քանդարա: Բնակավայր Շարուր գավառում (տես Գանթարա):

Քանդերի: Գյուղատեղի Միսիանի շրջանում:

Քանդիկամի: Բնակավայր Էրզրումի գավառում: Տեղանվան մեջ հայ. -իկ մասնիկն է և ամ-«լի» բառը:

Քանդիրլու: Լեռնագագաթ Օրդուբադի շրջանում, որի անվան վերջում հայ. -իր մասնիկն է և ապա լի «լի» բառը սեռական հոլովաձևով:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ) մատնանշում են այդ տեղերի բնության լուսավոր ու պայծառ լինելը:

ԿԵԼՅԱՆ: Գյուղ Ալաշկերտի գավառակում (ՀՏԲ): Տվյալ տեղանվան մեջ, եթե այն համեմատենք ներքոհիշյալ Կելան, Կելեք գյուղերի և Կելին լեռան անունների հետ, առանձնանում է կել- բառը և -յան ածանցը:

Հին հայերենի միակ կել «հնարք, խորամանկություն» արմատն իր իմաստով չէր կարող գործածվել որպես տեղանուն (ՀԱԲ):

Ուստի կարծում ենք, որ այն հնդեվրոպական նախալեզվի *kel- «բարձրանալ, վեր բարձրանալ» արմատն է (Քոկ.):

Այդպիսի բնութագիր են տալիս տեղանքին Վայոց ձորի գավառի Բարձրունի, Կոտայքի Բարձրաղի, Սասունի Բարձենք, Սուշի Բրձինք և շատ այլ հայկական հին տեղանուններ (ՀՏԲ):

Կել- արմատը «բարձր» իմաստով կարելի է տեսնել նաև ներքև բերվող տեղանուններում:

Կելամ: Բնակավայր Ղարադաղում, որի անվան մեջ նաև հին հայ. ամ -«լի» բառն է:

Կելան: Գյուղ Վանի նահանգի Հեքյարի գավառում: Տեղանվան վերջում հայ. -ան ածանցն է:

Կելասուր: Բնակավայր հին Երևանի գավառում: Տեղանվան մեջ -ա- հոդակապով նաև -սուր բառն է: Այն նշանակում է «սուր բարձունք»:

Կելավ: Գետակ, որը հոսում է Ղարադաղի շրջանով: Տեղանվան վերջում հայ. գործիական հոլովի -ավ ցուցիչն է:

Կելավիտ: Գյուղ Էրզրումի գավառում, որի անվան վերջում հայ. -ավ և -իտ ածանցներն են:

Կելատ: Քաղաք Բիթլիսի գավառում: Տեղանվան վերջում հայ. -ատ ածանցն է:

Կելատի: Գյուղ Արդվինի շրջանում, որի անունը նշված -ատ ածանցն ունի և սեռական հոլովի -ի ցուցիչը:

Կելար: Գյուղ Սպեր քաղաքից մոտ 58կմ հյուսիս-արևմուտք: Տեղանվան մեջ հայ. -ար ածանցն է:

Կելաք: Բնակավայր Կարսի շրջանում:

Կելենկար: Գյուղ Էրզրումի նահանգի Խորասանի գավառակում, որի անվան մեջ հայ. -են ածանցն է և քար բառը քիչ աղավաղված ձևով:

Կելենցիք: Բնակավայր Երզնկայի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -են, -ցի և -ք մասնիկներն են:

Կելեսեր: Գյուղ Օլթիի շրջանում, որի անվան մեջ հայ. -եք և -եր ածանցներն են:

Կելեվան: Բնակավայր Արդահանի շրջանում: Տեղանվան մեջ նաև հայ. վան «բնակություն» բառն է:

Կելեվուտ: Գյուղ Էրզրումի գավառում, որի անվան մեջ հայ. -եվ և -ուտ ածանցներն են:

Կելեք: Բնակավայր Էրզրումի շրջանում:

Կելին: Լեռ Շարիան լեռնաշղթայի հյուսիսային հատվածում, որի անվան վերջում հայ. -ին ածանցն է:

Կելիկ: Գյուղ Արդահանի շրջանում:

Կելինկայա: Լեռնագագաթ Վայքի լեռնաշղթայում: Տեղանվան մեջ հայ. -ին ածանցն է և հին հայ. կայ «կայան, վիճակ, տեղ» արմատը (ՀԱԲ):

Կելլեր: Բնակավայր Երզնկայի գավառում (տրբ. Քելեր):

Կելլիկ: Գյուղ Արդահանի շրջանում:

Կելխազ: Բնակավայր Սպերի գավառակում, որի անունով կոչվել է նաև տեղի գետը: Տեղանվան մեջ նաև հին հայ. խազ «քար» բառն է (ՀԱԲ):

Կելյան: Գյուղ Ալաշկերտի գավառում: Տեղանունը հայ. -յան ածանցով է:

Կելով: Բնակավայր Ղարադաղում, որի անունը վերջանում է հայ. -ով մասնիկով:

Կելորի: Գյուղ Սուշի գավառում: Տեղանվան վերջում հայ. -որ ածանցն է և սեռական հոլովի -ի ցուցիչը:

Կելութներ: Բնակավայր Ալաշկերտի գավառակում: Տեղանվան վերջում հայ. ուտ և -(ն)եր մասնիկներն են:

Կելուր: Գյուղ Երզնկայի գավառում, որի անվան վերջում հայ. -ուր ածանցն է:

Մայր լեզվի *k* հնչյունը հին հայերենում դարձել է նաև յս ք (ՀԼՊ, էջ 253):

Կել- արմատի խել- և քել- տարբերակները մենք տեսնում ենք ստորև բերվող տեղանուններում:

Խելանի: Գյուղ Էջմիածնի գավառում, որի անվան մեջ հայ. -անի ածանցն է:

Խելավան: Բնակավայր Արդահանի շրջանում:

Խելեն: Գյուղ Դիարբեքիրի նահանգի Սլիվանի գավառակում: Տեղանվան վերջում հայ. -են ածանցն է:

Խելեր: Բնակավայր Երզնկայի շրջանում:

Քել: Ազատ գետի վտակներից մեկն է:

Քելաճ: Գյուղ Դիարբեքիրի նահանգի Սլիվանի գավառակում, որի անվան վերջում հին հայ. աճել «մեծանալ» բայի աճ -արմատն է: Տեղանունը նշանակում է «մեծ բարձունք»:

Քելաղբյուր: Բնակավայր Բաբերդի գավառակում:

Քելաման: Բնակավայր Բիթլիսի գավառում, որի անվան մեջ հայ. ամ «լի» բառն է և հետո -ան հոգնակիակերտ մասնիկը:

Քելառիճ: Գյուղ Երզնկայի գավառում:

Քելեսիկ: Բնակավայր Մալաթիայի շրջանում, որի անվան մեջ հայ. -եք և -իկ մասնիկներն են:

Քելեր: Գյուղ և լեռ Երզնկայի գավառում:

Քելեքիլի: Լեռնագագաթ Բյուրակն-Մնձոյան լեռնահամակարգում, որի անվան մեջ քել- արմատը կրկնված է (-ե- հոդակապով):

Քելին: Գյուղ Սղերդի գավառում: Տեղանվան վերջում հայ. -ին ածանցն է:

Կերը բերված այս տեղանունները (ՀՏԲ), որոնք կազմված են մայր լեզվի կել- արմատից և դրա հայերեն տարբերակներից, մատնանշում են բնակավայրերի և լեռների բարձր լինելը:

ԿԵՆԳ: Գյուղ Խարբերդի գավառում (տրբ. Կենք, ՀՏԲ): Հայկական գրավոր աղբյուրներում կենգ բառ չի հանդիպում:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *(s)keng- «կաղալ, ծուռ» արմատն է: Հին հայերենի կաղ բառը, ինչպես Հ.Աճառյանը նշում է, փոխաբերաբար գործածվել է նաև «անհարթ» իմաստով (ՀԱԲ):

Այն հանդիպում է Պարխարյան լեռների Կաղքար լեռան, Նոր Բայազետի գավառի Կաղկաղ, Երզնկայի Կաղի, Կարսի Կաղալի, Ագուլիսի Կաղաբերդ և Ակնի շրջանի Կաղերան բնակավայրերի անուններում (ՀՏԲ):

Կենգ- արմատը հանդիպում է նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Կենգեվեր: Բնակավայր Վանի նահանգի Խոշաբի գավառում, որի անվան մեջ հայ. -եվ և -եր մասնիկներն են:

Կենգերլի: Գյուղեր Արդանամադենի գավառում (տրբ. Քենքերլի), Մալմաստի (տրբ. Քենգերլու), Շուշիի և Աղդամի շրջաններում: Տեղանվան վերջում հայ. -եր ածանցն է և լի «լի» բառը:

Կենգլիկ: Գյուղ Արցախում (տրբ. Քենգլիկ), որի անվան մեջ հայ. -լիկ մասնիկն է (հմմտ. կաղլիկ, հաստլիկ):

Այս տեղանունները (ՀՏԲ) մատնանշում են բնակավայրերի տեղանքի անհարթ, իսկ լեռների ծուռ լինելը:

ԿԵՎԱՆԻՍ: Բերդ և շրջան Դերսիմի գավառում (ՀՏԲ): Երբ այդ տեղանունը համեմատում ենք ներքև բերվող Կեվլիկ, Կեվդար, Կեվուկ և Կեվրե գյուղերի անունների հետ, պարզ է դառնում, որ դրանում առանձնանում է կեվ- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում, և -անի ածանցը հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Հավանաբար, այն հնդեվրոպական նախալեզվի *(s)keu- «ծածկել, թաքցնել» արմատն է (Pok.): Հին հայերենում ու ձայնավորը բառամիջում հաճախ է դառնում վ:

Ալեքսանդրապոլի գավառի Թաքնալի, Կարսի Թաքնալի, Ելիգավետպոլի Թաքնալի և Կաղզվանի շրջանի Թաքնալի բնակավայրերի

անունները տվյալ թաքուն արմատն ունեն իրենց կազմում (ՀՏԲ): Ստորև բերենք կեվ- արմատով այլ տեղանուններ:

Կեվախոր: Գյուղ Երզրումի գավառում, որի անվան մեջ առկա է նաև -ա- հոդակապով հայ. խոր բառը:

Կեվակ: Լեռնաշղթա Խաղտիքում:

Կեվանդուկ: Գյուղ Խնուսի գավառակում, որի անվան մեջ հայ. -անդ և -ուկ մասնիկներն են:

Կեվանք: Բնակավայր Օլթիի շրջանում:

Կեվդագ: Լեռնագագաթ Ղերջան բնակավայրից հյուսիս-արևելք (տորք. Քեվդաղ): Տեղանվան վերջում թուրք. դաղ «լեռ» բառն է:

Կեվդար: Գյուղ Ելիզավետպոլի Կարյազինի գավառում (տորք. Քեվ-դար), որի անվան վերջում հայ. դար «գառիվեր բարձրություն» բառն է:

Կեվլիկ: Բնակավայր Վանի գավառում: Տեղանվան վերջում հայ. -լիկ մասնիկն է (հմմտ. կարճ և կարճլիկ):

Կեվորդ: Լիճ Կարս քաղաքի շրջանում:

Կեվրե: Գյուղ Երզրումի գավառում, որի անվան վերջում հայ. -րի ածանցն է (հմմտ. բերք և բերրի):

Կեվրիկ: Բնակավայր Մալաթիայի շրջանում:

Կեվուկ: Գյուղ Շուշիի գավառում:

Սայր լեզվի k հնչյունը հին հայերենում դարձել է նաև խ ու ք (ՀԼՊ, էջ 253): Ներքոհիշյալ տեղանուններում մենք տեսնում ենք կեվ- արմատը նշված տարբերակներով:

Խեվա: Գյուղեր Բայազետի, Արդվինի, Կիսկիմի և Արդահանի գավառներում, որոնց անվան վերջում հայ. սեռական հոլովի -ա ցուցիչն է:

Խեվակ: Բնակավայր Կիսկիմի շրջանում:

Խեվաշեն: Գյուղ Ախալցխայում:

Խեվե: Բնակավայր Բայազետի գավառում, որի անվան վերջում հայ. -ե ածանցն է:

Խեվիսքար: Գյուղեր Արդահանի և Կիսկիմի շրջաններում: Տեղանվան մեջ հայ. -իք ածանցն է և քար բառը:

Խեվներ: Բնակավայր Մուշի գավառում:

Խեվնու: Գյուղ Բաբերդի շրջանում, որի անվան մեջ հին հայ. -ն մասնիկն է և -ուք ածանցը:

Խեվո: Բնակավայր Բայազետի գավառում: Տեղանվան վերջում հայ. սեռական հոլովի -ո ցուցիչն է:

Քեվանլու: Գյուղեր Շուշիի գավառում և Զանգեզուրում: Տեղանվան մեջ հայ. -ան հոգնակի իմաստ տվող ածանցն է, որից հետո՝ թուրք. -լու մասնիկը:

Քեվդարլի: Բնակավայր Շիրակում (այժմ՝ Փանիկ): Տեղանվան մեջ նաև հայ. դար «գառիվեր բարձրություն» և լի «լի» արմատներն են:

Քեվե: Գյուղ Սասունի Խուլվի գավառակում: Տեղանունը հայ. -ե ածանցով է:

Քեվենգ: Բնակավայր Օլթիի շրջանում, որի անվան վերջում հայ. -ենք ածանցն է օտար աղավաղումով:

Քեվիճան: Գյուղ Բիթլիսի նահանգի Սղերդի գավառում: Տեղանվան մեջ հայ. -ճան ածանցն է (հմմտ. դավ և դավաճան):

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք իրենց կազմում ունեն մայր լեզվի կեվ- «թաքուն» արմատը և դրա հայերեն տարբերակները, հուշում են նշված բնակավայրերի թաքուն տեղ գտնվելու մասին:

ԿԵՆՄՆ: Գյուղ Երզրումի գավառում (տորք. Քերան, ՀՏԲ):

Այդ տեղանունը կարելի է համեմատել ստորև բերվող Կերնակ, Կերկեր և Կերոտ բնակավայրերի անունների հետ: Պարզվում է, որ դրանում առանձնանում է կեր- բառը և -ան ածանցը: Հին հայերենի կեր «ուտելիք, կերակուր» արմատը (ՀՄԲ) իմաստի տեսակետից չէր կարող գործածվել որպես տեղանուն:

Ամենայն հավանականությամբ Կերան տեղանվան հիմքում հնդեվրոպական նախալեզվի *(s)ker- «շուր գալ, ծովել» արմատն է (Pok.):

Այդպիսի իմաստ ունեն Բասենի գավառակի Մուռս, Ախալցխայի գավառի Մոռե, Ուրմիայի Մոստան, Կոտայքի Շուռնիս, Գորիսի Շուռնուխ, որի անվան մեջ նաև հայ. ուղիս «արագ հոսող ջուր, հեղեղ, հեղեղատ» արմատի ուխ տարբերակն է (ՀՄԲ):

Ստորև բերենք տվյալ կեր- արմատով այլ տեղանուններ:

Կեր: Գյուղ Արդահանի շրջանում:

Կերավու: Բնակավայր Սուշի գավառում, որի անվան վերջում հայ. -ալի ածանցն է սեռական հոլովի -ու ցուցիչով:

Կերամուն: Գյուղ Արդանամադենի գավառում: Տեղանվան մեջ նաև հայ. ամ-«լի» բառն է և -ուն ածանցը:

Կերան: Բնակավայր Սակուի շրջանում:

Կերանիս: Գյուղ հին Երևանի գավառում, որի անվան վերջում հայ. -անի ածանցն է և հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչը:

Կերանց: Բնակավայր Իջևանի շրջանում:

Կերաշլի: Լիճ և լեռ Օլթիի շրջանում (տրբ. Քերաշլի), որի անվան մեջ հայ.-աշ ածանցն է և լի «լի» բառը:

Կերաջան: Գյուղ Դիարբեքիի գավառում (տրբ. Քերաջան), որի անվան մեջ -ա- հոդակապով հայ. -ճան ածանցն է (հմմտ. դավ և դավա-ճան):

Կերասիա: Լեռ Օլթիի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -աք ածանցն է հին հայ. հայցական հոլովի -ս ցուցիչով և -յա մասնիկը:

Կերասին: Գյուղ Դիարբեքիի նահանգի Ֆարկինի շրջանում, որի անվան մեջ վերը նշված -աք ածանցն է և -ին մասնիկը:

Կերասոն: Բնակավայր Վանի գավառում: Տեղանվան մեջ վերը նշված -աք և -ոն ածանցներն են:

Կերավի: Գյուղ Ղարադաղի շրջանում, որի անվան վերջում հայ. -ավ մասնիկն է և սեռական հոլովի -ի ցուցիչը:

Կերավոն: Բնակավայր Վանի գավառում: Տեղանվան մեջ հայ. -ավ և -ոն ածանցներն են:

Կերար: Գյուղ Էրզրումի գավառում, որի անվան վերջում հայ. -ար ածանցն է (հմմտ. մութ և մթար, մեծ և մեծար):

Կերեկ: Բնակավայր Սալաթիայի շրջանում և լեռ Հայկական պարի կենտրոնական մասում: Տեղանվան վերջում հայ. եկ բառն է ((հմմտ. առաջնեկ, միջնեկ, դուրեկան «դուր եկող»):

Կերենո: Գյուղ Բիթլիսի նահանգի Գենջի գավառում, որի անվան վերջում հայ. -եմ ածանցն է (հմմտ. համ և համեմ, խոհ և խոհեմ) և սեռական հոլովի -ո ցուցիչը:

Կերեն: Բնակավայրեր Սյունիքի նահանգի Կովսական և Քաջաթաղի գավառներում:

Կերեսելիք: Գյուղ Թորթումի շրջանում, որի անվան վերջում հայ. -եք, -ելի և -ք ածանցներն են:

Կերեսլի: Բնակավայր Բաբերդի գավառակում: Տեղանվան մեջ վերը նշված -եք ածանցն է և -լի «լի» բառը:

Կերեք: Գյուղ Էրզրումի գավառում:

Կերիլ: Բնակավայր Վանի նահանգի Հեքյարի գավառում, որի անվան վերջում -իլ ածանցն է:

Կերիկ: Գյուղ Դիարբեքիի նահանգի Բշերիկի գավառակում:

Կերիմ: Բնակավայր Բայազետի գավառում, որի անվան վերջում հայ. -իմ մասնիկն է (հմմտ. ուշ և ուշիմ, ճղճիմ):

Կերիսոր: Բնակավայր Վանի նահանգի Հեքյարի գավառում: Տեղանվան մեջ -ի- հոդակապով հին հայ. սոր «ծակ, խոռոչ, փոս» բառն է (ՀԱԲ):

Կերկեր: Բնակավայր Բայազետի շրջանում: Տեղանունը կեր- արմատի կրկնությամբ է:

Կերձոր: Գյուղ Էրզրումի գավառում:

Կերնակ: Բնակավայր Երզնկայի շրջանում (տրբ. Կեոնակ), որի անվան վերջում հայ. -նակ ածանցն է:

Կերնոսի: Գյուղ Սուշի գավառում, որի անվան վերջում հայ. -ն և -ոք ածանցներն են և սեռական հոլովի -ի ցուցիչը:

Կերոկ: Գյուղ Դիարբեքիի նահանգի Բշերիկի գավառակում, որի անվան մեջ հայ. -ոք ածանցն է օտար աղավաղմամբ:

Կերոն: Գյուղեր Բայազետի և Սյունիքի նահանգի Հաբանդ գավառներում:

Կերոտ: Բնակավայր Դերսիմի գավառում:

Կերս: Գյուղեր Վանի գավառում(տրբ. Քերս), Խլաթի և Կաղզվանի շրջաններում:

Կերվանք: Բնակավայր Էրզրումի գավառում:

Կերու: Գյուղ Սյունիքի Հաբանդ գավառում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ու ցուցիչն է:

Կերուկ: Բնակավայր Մալաթիայի շրջանում:

Նախալեզվի k հնչյունը հին հայերենում դարձել է նաև խ ու ք (ՀԼՊ, էջ 253): Կեր -«ծուռ» արմատը խեր- և քեր- տարբերակներով առկա են ներքոհիշյալ տեղանուններում:

Խերան: Գյուղեր Դերսիմի և Արցախի Մարտունու շրջաններում, որոնց անվան վերջում հայ. -ան հոգնակիակերտ մասնիկն է:

Խերանի: Բնակավայր Դերջանի շրջանում: Տեղանունը -անի ածանցն ունի իր մեջ:

Խերգերդ: Գյուղ Մուշի շրջանում, որի անվան վերջում հայ. -կերտ «կերտվածք» բառն է (ՀԱԲ):

Խերես: Բնակավայր Արդվիների գավառում: Տեղանվան վերջում հայ. -եք ածանցն է հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Խերխան: Գյուղ Արցախի Մարտունու շրջանում, որի անվան մեջ նաև հայ. խան «իջևան» արմատն է (ՀԱԲ):

Խերս: Բնակավայր Կիսկիմի գավառակում: Տեղանվան վերջում հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչն է:

Խերցիկ: Գյուղ Վանի նահանգի Բերկրիի գավառակում, որի անվան վերջում հայ. -ցի, -ք ածանցներն են:

Քերան: Բնակավայր Էրզրումի գավառում: Տեղանվան վերջում հայ. հոգնակիակերտ -ան ածանցն է:

Քերաշլու: Գյուղ Ապարանի շրջանում, որի անվան մեջ հայ. -աշ ածանցն է և թուրք. -լու մասնիկը:

Քերաշան: Բնակավայր Դիարբեքիի գավառում: Տեղանվան մեջ հայ. -աշ և -ան ածանցներն են:

Քերաֆ: Գյուղ Սդեքդի գավառում, որի անվան վերջում հայ. -ավ մասնիկն է օտար աղավաղումով:

Քերեջլի: Բնակավայր Թորթումի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -եճ ածանցն է և լի «լի» բառը:

Քերեսլի: Գյուղ Բաբերդի գավառակում, որի անվան մեջ հայ. -եք ածանցն է և լի բառը:

Քերեր: Բնակավայրեր Երզնկայի գավառում և Ակնի շրջանում:

Քերի: Գյուղ Մոկսի շրջանում:

Քերիլ: Բնակավայր Մոկսի գավառակում, որի անվան վերջում հայ. -իլ ածանցն է:

Քերխանա: Գյուղ Կարսի մարզում: Տեղանվան մեջ նաև հայ. խան «իջևան» բառն է:

Քերիկ: Բնակավայր Դիարբեքիի գավառում:

Քերքի: Գյուղ հին Երևանի նահանգում (տրբ. Քյարքի): Տեղանվան վերջում հայ. -ք ածանցն է և սեռական հոլովի -ի ցուցիչը:

Բերված տեղանունները (ՀՏԲ) ցույց են տալիս այդ գյուղերի տարածքի և լեռների ծուռ լինելը:

ԿԵՐՄԱՆ: Գյուղ Վանի նահանգի Հեքյարի գավառում (ՀՏԲ): Տվյալ տեղանունը բաղդատելիս ներքև բերվող Կերբեկ, Կերբո և Կերբոցիկ հայկական տեղանունների հետ՝ պարզվում է, որ դրանում առանձնանում է կերբ- բաղադրիչը և -ան ածանցը: Այդպիսի բառ հայկական գրավոր աղբյուրներին անծանոթ է:

Ամենայն հավանականությամբ այն հնդեվրոպական նախալեզվի *(s)kerb- «շուռ տալ, ծռել» արմատն է:

Նման իմաստ ունեն Գորիսի շրջանի Շուռնուխ (իմաստ. ուղիս «արագահու ջուր» տրբ. ուխ, ՀԱԲ) գյուղի և Կոտայքի Շուռնիս ու Նախիջևանի Շուռույք հին բնակավայրերի անունները (ՀՏԲ):

Նախալեզվի կերբ- արմատը նշված իմաստով կարելի է առանձնացնել նաև ստորև բերվող տեղանուններում:

Կերբալա: Գյուղեր Նախիջևանի և Զանգեզուրի գավառներում, որոնց անվան մեջ հայ. աղ ածանցի հին -ալ տարբերակն է սեռական հոլովի -ա ցուցիչով:

Կերբեկ: Գյուղեր Սպերի շրջանում և Հեքյարի գավառում: Տեղանվան վերջում հայ. եկ բառն է (հմմտ. միջնեկ, առաջնեկ, դուրեկան):

Կերբո: Բնակավայր Բալուի գավառակում, որի անվան վերջում սեռական հոլովի -ո ցուցիչն է:

Կերբորան: Գյուղ Սդերդի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -որ և -ան մասնիկներն են:

Կերբոցիկ: Բնակավայր Բալուի շրջանում:

Կերպող: Գյուղ Քդիի գավառակում:

Նախալեզվի k հնչյունը հին հայերենում դարձել է նան խ ու ք (ՀԼՊ, էջ 253), իսկ b-ն՝ նան պ ու փ (Օպ., էջ 298):

Կերբ- արմատը նշված հնչյունափոխված տարբերակներով հանդիպում է ներքոհիշյալ տեղանուններում:

Խերբախլու: Գյուղ Էրզրումի գավառում, որի անվան վերջում հայ. -ախ ածանցն է (հմմտ. շաղախ) և թուրք. -լու մասնիկը:

Խերբեկլու: Բնակավայր Էջմիածնի շրջանում: Տեղանվան մեջ նան հայ. եկ բառն է և թուրք. -լու մասնիկը:

Խերբեսոր: Գյուղ Էրզրումի գավառում: Տեղանվան մեջ նան հին հայերենի սոր «ծակ, խոռոչ, փոս» բառն է -ե- հոդակապով (ՀՄԲ):

Խերպեձոր: Բնակավայր Խնուսի շրջանում (տրբ. Խերպոզ՝ ոզ ածանցով, հմմտ. գոռ և գոռոզ):

Քերբալա: Գյուղեր Զանգեզուրի և Նախիջևանի գավառներում, որոնց անվան մեջ հայ. -աղ ածանցի հին -ալ տարբերակն է սեռական հոլովի -ա ցուցիչը:

Քերբան: Բնակավայր Վանի շրջանում:

Քերփիլան: Լեռներ Կոտտորի լեռնաշղթայում: Տեղանվան մեջ հայ. -իլ և -ան ածանցներն են:

Քերփիճլի: Գյուղ Կոտայքի շրջանում (այժմ՝ Գեղաղիր): Տեղանվան մեջ հայ. -իճ ածանցն է և լի «լի» բառը:

Քերպուս: Բնակավայր Քդիի գավառակում: Տեղանվան վերջում հայ. -ոք ածանցն է հին հոգնակի հայցականի -ս ցուցիչով:

Քերպու: Բերդ Սասունում, որի անվան վերջում սեռական հոլովի -ու ցուցիչն է:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ) հուշում են տեղանքի ծուռ լինելու մասին:

ԿեՐՍ: Գյուղեր Կաղզվանի և Խլաթի շրջաններում (տրբ. Քեոս, ՀՏԲ): Հայկական գրավոր աղբյուրներում կերս բառ չի հանդիպում: Կարծում ենք այն հնդեվրոպական նախալեզվի *kers -«սև» արմատն է (Քոկ.):

Տեղանքի այդպիսի բնութագիր են տալիս Սասունի գավառի Սնիթ, Ալաշկերտի Սնիկ և Խնուսի շրջանի Սնիկ բնակավայրերի անունները (ՀՏԲ):

Կերս- «սև» արմատը մենք տեսնում ենք նան ներքոհիշյալ տեղանուններում:

Կերսիկ: Գյուղ և գետակ Բայազետի գավառում (տրբ. Կերսուկ):

Կերսնուղ: Բնակավայր Երզնկայի շրջանում, որի անվան վերջում հայ. -ն և -ուտ մասնիկներն են:

Կերսու: Գյուղ Վանի նահանգի Բերկրիի գավառակում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ու ցուցիչն է:

Նախալեզվի k հնչյունը հին հայերենում դարձել է նան խ ու ք (ՀԼՊ, էջ 253): **Կերս-** արմատը այդ տարբերակներով մենք տեսնում ենք ստորև բերվող տեղանուններում:

Խերս: Գյուղ և գետակ Ճորոխի միջին ավազանի Կիսկիմի գավառում (տրբ. Քերս):

Խերաֆ: Բնակավայր Բիթլիսի նահանգի Սդերդի գավառում, որի անվան վերջում հայ. -ավ գործիական հոլովի մասնիկն է օտարների կողմից աղավաղված:

Խերսենի: Գյուղ Դիարբեքիրի նահանգի Ջերմիկի գավառակում:

Խերսունկ կամ Խերսունգ: Բնակավայր Խլաթի շրջանում, որի անունների մեջ հայ. -ոնք և -ունք ածանցներն են օտարների կողմից աղավաղված:

Քերս: Գյուղ էրգրումի գավառում, լեռ Արցախում և գետակ Ճորոխի ավազանում:

Քերսին: Բնակավայր Երզնկայի գավառում:

Քերսիկ: Գյուղ Բայազետի շրջանում և գետակ Արածանիի ավազանում:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ) բնութագրում են գյուղերի, գետերի և լեռների գունային երանգը:

ԿՈԲ: Ավան Մուշի գավառում (տրբ. Կոպ, Քոպ, ՀՏԲ): Հայկական գրավոր աղբյուրներում կոբ բառ չի հանդիպում:

Կարծում ենք այն հնդեվրոպական նախալեզվի *kob-«լավ կապվել, հաջողվել» արմատն է (Pok.):

Թերևս այդ իմաստն ունեն Վայոց ձոր գավառի Աջողք, Վանի նահանգի Աջի, Շարուրի Աջի և Դերսիմի գավառի Աջմ (-մ ածանցով հմմտ. կող և կողմ, հող և հողմ, ջեր և ջերմ) բնակավայրերի անունները (ՀՏԲ):

Նախալեզվի կոբ- արմատը «հաջող» իմաստով թերևս կարելի է առանձնացնել ներքոհիշյալ տեղանուններում:

Կոբալ: Գյուղեր Խնուսի և Արդահանի շրջաններում, որոնց անվան վերջում հայ. -աղ ածանցի -ալ հին տարբերակն է:

Կոբախ: Գյուղակ Սուրմալուի գավառում: Տեղանվան վերջում հայ. -ախ ածանցն է (հմմտ. խարդախ, կամախ «նվեր», շաղախ):

Կոբաղ: Բնակավայր Կիսկիմի գավառակում:

Կոբայր: Ավան Թումանյանի շրջանում (տրբ. Քոբայրի), որի անվան մեջ հայ. այր «մարդ» բառն է:

Կոբան: Գյուղ Սպերի գավառակում: Տեղանվան վերջում հայ. -ան հոգնակիակերտ մասնիկն է:

Կոբի: Բնակավայր Էրզրումի գավառում:

Կոբիկ: Գյուղ Սուրմալուի շրջանում:

Նախալեզվի k հնչյունը հին հայերենում դարձել է նաև խ ու ք (ՀԼՊ, էջ 253), իսկ b-ն՝ նաև պ ու փ (Օս., էջ 298):

Ստորև բերենք կոբ- արմատը նշված հնչյունական տարբերակներով՝ զործածված տեղանունների մեջ:

Կոպս: Գյուղ Խնուսի գավառակում:

Կոպալ: Բնակավայր Խնուսի շրջանում (տրբ. Քոփալ), որի անվան վերջում հայ. -աղ ածանցի հին -ալ տարբերակն է:

Կոպալո: Գյուղ Մուշի շրջանում, որի անվան վերջում նշված -ալ ածանցից հետո հայ. սեռական հոլովի -ո ցուցիչն է:

Կոպակ: Բնակավայր Մուշի շրջանում:

Կոպան: Գյուղակ Բիթլիսի գավառում:

Կոպանե: Բնակավայր Բայազետի գավառում, որի անվան վերջում հայ. -անի ածանցն է քիչ աղավաղված ձևով:

Կոպատ: Գետակ Բուլանքի շրջանում:

Կոպի: Լեռներ վանա լճից հյուսիս-արևմուտք (տրբ. Կոփի):

Կոպիա: Գյուղ Բաբերդի գավառակում, որի անվան վերջում հայ. -իք ածանցն է:

Կոպիլյան: Բնակավայր Արցախի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -իլ և -յան ածանցներն են:

Կոպին: Գյուղ Բաբերդի շրջանում:

Կոպո: Բնակավայր Մուշի գավառում:

Կոպուս: Գյուղ Բայազետի գավառում և լեռ Հայկական պարում, որոնց անվան վերջում հայ. -ուք ածանցն է հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Կոպուր: Բնակավայր Դերջանի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ուր ածանցն է:

Կոփալ: Գյուղ Բայազետի գավառում: Տեղանվան վերջում հայ. -աղ ածանցի հին -ալ տարբերակն է:

Խոբեր: Բնակավայր Մուշի շրջանում (տրբ. Խոպեր):

Խոբերան: Գյուղ Կաղզվանի գավառում (տրբ. Խոպերան):

Խոպ: Գյուղեր Դիարբեքիրի և Սդերդի գավառներում:

Խոպս: Բնակավայր Հեքյարի գավառում:

Խոպին: Գյուղ Դիարբեքիրի շրջանում:

Խոփան: Բնակավայր Կարսի գավառում:
Խոփե: Նավահանգիստ Տրապիզոնի գավառում:
Խոփեր: Գյուղ Մուշի շրջանում (տրբ. Քոփերս):
Խոփերան: Բնակավայր Կադզվանում:
Խո Փի: Գյուղ Մուշի շրջանում:
Խոփիկ: Բնակավայր Դերսիմի գավառում:
Խոփուք: Քաղաք Խարբերդի նահանգում:
Խոփուս: Գյուղեր Բաբերդի և Ալաշկերտի շրջաններում, որոնց անվան վերջում հայ. հին -ուք ածանցն է հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:
Խոփուր: Գյուղ և գետակ Բաբերդի շրջանում:
Քոբ: Գյուղ Մուշի շրջանում(տրբ. Քոպ, Քոփ):
Քոբա: Բնակավայր Սուրմալուի գավառում:
Քոպլիան: Գյուղ Ախալցխայի շրջանում, որի անվան մեջ հայ. լի «լի» բառն է և -ան ածանցը:
Քոփ: Գյուղ Էրզրումի և լեռներ Բաբերդի շրջաններում:
 Վերոհիշյալ տեղանունները (ՀՏԲ), որոնք կազմված են մայր լեզվի կոբ-«հաջող» արմատից և դրա հայկական տարբերակներից, ցույց են տալիս, թե տվյալ բնակավայրերը հաջող տեղեր են մարդկանց համար:

ԿՂՏ: Գյուղեր Մուշի և Շամշադինի (տրբ. Քոթ) շրջաններում (ՀՏԲ): Հայկական գրավոր աղբյուրներում կոտ բառ չի հանդիպում, որն իր իմաստով դառնար տեղանուն:
 Ամենայն հավանականությամբ այն հնդեվրոպական նախալեզվի *kē-«ապրելու տեղ» արմատի *kot-տարբերակն է(Pok.):
 Հին հայերենի «ապրիլ, ապրել» բայի ապր- հիմքից կազմված (ՀՄԲ) Մուշի գավառի Ապրի բնակավայրի, Կեալ «ապրել» բայի կեց տարբերակից, Մազազ գավառի Կեց, Բայազետի Կեցան, Վանի Կեցան գյուղերի անունները թերևս նման իմաստ ունեն (ՀՏԲ):
Կոտ-«ապրելու տեղ» արմատը հանդիպում է նաև ներքև բերվող տեղանուններում:

Կոտ: Գյուղ Շամշադինի շրջանում:
Կոտակ: Գավառ Արցախ նահանգում:
Կոտայք: Շրջան Այրարատ նահանգում:
Կոտան: Գյուղ Մուշի գավառում (տրբ. Քոթան), որի անվան վերջում հայ. -ան հոգնակիակերտ մասնիկն է:
Կոտառիճ: Բնակավայր Դերսիմի գավառում:
Կոտաս: Գյուղ Արդահանի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -աք ածանցն է հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:
Կոտատ: Բնակավայր Մուշի գավառում: Տեղանվան մեջ հայ. -ատ ածանցն է (հմմտ. միջատ, գունատ, կոնատ):
Կոտենոց: Գյուղ Բիթլիսի գավառում, որի անվան մեջ հայ. -են և -ոց ածանցներն են:
Կոտենս: Բնակավայր Բիթլիսի նահանգի Խիզանի գավառակում: Տեղանվան մեջ նշված -են մասնիկն է և հին հոգնակի հայցականի -ս ցուցիչը:
Կոտեր: Գյուղ Դերջանի շրջանում:
Կոտի: Բնակավայր Դիլիջանի շրջանում:
Կոտիկ: Գյուղեր Օլթիի և Կիսկիմի շրջաններում:
Կոտին: Բնակավայր Սդերդի գավառում:
Կոտից: Գյուղեր Շատախի շրջանում և Բայազետի գավառում, որոնց անվան վերջում հայ. -իք ածանցն է հին հոգնակի սեռական հոլովի -ց ցուցիչով:
Կոտխանի: Բնակավայր Էրզրումի գավառում, որի անվան մեջ նաև հին հայ. խան «իջևան» բառն է և սեռական հոլովի -ի ցուցիչը:
Կոտնի: Գյուղ Բիթլիսի գավառում: Տեղանվան վերջում հայ. -նի հոգնակիակերտ մասնիկն է:
Կոտման: Լեռներ Գուգարաց լեռնաշղթայի հյուսիսային շարունակությունում, որի անվան վերջում հայ. -մն ածանցն է, անվան սեռական հոլովաձևով:
Կոտում: Գյուղ Բիթլիսի նահանգում, որի անունը վերջանում է ներգոյական հոլովի -ում ցուցիչով:

Կոտուր: Լեռնաշղթա Վանա և Ուրմիա լճերի միջև, գյուղեր Դերջանի, Խոյի, Խնուսի, Եղեգնաձորի շրջաններում և լեռ Կարսի բարձրավանդակում:

Նախալեզվի *k* հնչյունը հին հայերենում դարձել է նաև խ ու ք, իսկ *t-*ն՝ նաև թ (ՀԼՊ, էջ 253): Ներքոհիշյալ տեղանուններում կոտ- արմատը այդ տարբերակներով է գործածված:

Կոթ: Գյուղեր Գեղարքունիքի, Ղազախի և Տարոնի շրջաններում: Դրանց անունով կոչվել են նաև լեռներ ու գետեր:

Կոթանիս: Գյուղեր Էրզրումի և Բաբերդի շրջաններում, որոնց անվան մեջ հայ. -անի ածանցն է և հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչը:

Կոթանց: Բնակավայր Վանի գավառում:

Կոթեր: Ավան Դերջանի գավառակում:

Կոթի: Գյուղ Նոյեմբերյանի շրջանում:

Կոթիկ: Բնակավայրեր Օլթիի և Թորթումի շրջաններում:

Կոթնի: Գյուղ Բիթլիսի գավառում:

Կոթու: Բնակավայր Վանի նահանգի Ջուլամերկի գավառակում, որի անվան վերջում հայ. -ուք ածանցն է:

Կոթուր: Գյուղեր Դերջանի, Էջմիածնի շրջաններում, որոնց անունը վերջանում է հայ. -ուր ածանցով:

Կոտ- արմատի ենթադրվող խոտ տարբերակներով մենք տեղանուններ դժվարանում ենք այստեղ բերել, քանի որ այն համանիշ է հայ. խոտ «խոտ» բառի հետ: Դրանք իրարից զանազանել հնարավոր չէ:

Խոթանց: Գյուղ Սիսիանի շրջանում:

Խոթար: Հարթավայր Ակն քաղաքի մոտակայքում:

Քոտակ: Գավառ Արցախ նահանգում:

Քոթակ: Գյուղ Բասենի գավառակում:

Քոթակա: Բնակավայր Արդանամադենի շրջանում:

Քոթուն: Գյուղ Նախիջևանի գավառում:

Քոթանի: Բնակավայր Էրզրումի գավառում:

Քոթանոց: Գյուղ նշված շրջանում:

Քոթիան: Բնակավայր Մուշի գավառում:

Քոթիկ: Գյուղ թորթումի շրջանում:

Քոթխան: Բնակավայր Բաբերդի գավառակում, որի անվան մեջ նաև հին հայ. խան «իջևան» բառն է:

Քոթորու: Գյուղ Քոլիի գավառակում, որի անվան մեջ հայ. -որ և -ուք ածանցներն են:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), որոնց հիմքում ընկած են մայր լեզվի կոտ- արմատը և դրա հայկական տարբերակները, ցույց են տալիս այդ բնակավայրերի ապրելու համար հարմար լինելը:

Հ

ՀԵԼ: Լեռնագագաթ Դերսիմի գավառում (ՀՏԲ): Հայկական գրավոր աղբյուրներում նման բառ չի հանդիպում:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի **pelə*-«լայն, հարթ» արմատն է (Pok.): Մայր լեզվի *p* հնչյունը հին հայերենում դարձել է *h* (ՀԼՊ, էջ 253), իսկ բազմազան բառերի վերջին ձայնավորը ընկել է, քանի որ շեշտը հաստատվել է նախավերջին վանկի վրա (ՀԼՊ, էջ 228):

Նույնպիսի իմաստ ունեն Սասուն գավառի Հարթ, Հարթիկ, Դերսիմի Հարթիկ, Բաբերդի շրջանի Հարթ տեղանունները (ՀՏԲ), որոնք ցույց են տալիս այդ գյուղերի տեղանքի հարթ լինելը:

Հել- արմատը «հարթ» իմաստով մենք տեսնում ենք նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Հելելի: Գյուղ Խնուսի գավառակում, որի անվան մեջ հայ. -ելի ածանցն է:

Հելեն: Բնակավայր Դիարբեքիրի նահանգի Սլիվանի գավառում: Տեղանվան վերջում հայ. -են ածանցն է (հմմտ. նորեն, ծվեն):

Հելենդար: Գյուղ Դիարբեքիրի Կախտե գավառակում, որի անվան մեջ նշված -են մասնիկից հետո հին հայ. դար «գառիվեր բարձրություն» արմատն է:

Հելիմջան: Բնակավայր Կաղզվանի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -իմ (իմստ. մտերիմ, ուշիմ) և -ճան (իմստ. դավ և դավաճան) ածանցներն են:

Հելին: Գյուղ Դիարբեքիրի նահանգի Սլիվանի գավառակում, որի անվան վերջում հայ. -ին ածականակերտ մասնիկն է:

Նշված տեղանունները (ՀՏԲ), որոնց հիմքում մայր լեզվի հել-«հարթ» արմատն է, ցույց են տալիս այդ բնակավայրերի տարածքների հարթ լինելը:

ՀԵՐ: Գավառ Պարսկահայք նահանգում և համանուն կենտրոն, գյուղեր Սղերդի գավառում, Դիարբեքիրի Սլիվանի, Իլիջայի, Մոկսի գավառակներում (ՀՏԲ):

Հին հայերենի միակ նման հեր «մագ» արմատը իր իմաստով չէր կարող գործածվել որպես տեղանուն:

Ուստի, կարծում ենք, Հեր տեղանվան մեջ հնդեվրոպական նախալեզվի *(s)per-«փայտամած» արմատն է (Pok.), որի ք հնչյունը հին հայերենում դարձել է նաև հ (ՕԿ., էջ 298):

Այդպիսի իմաստ ունեն էրգրումի գավառի Փայտակերտ, Մոկսի գավառի Փայտատեղի գյուղերի և Երզնկայի արևմուտքի Փայտածոր ձորի անունները (ՀՏԲ):

Հեր- արմատը «Փայտաշեն» իմաստով հանդիպում է նաև ստորև բերվող տեղանուններում:

Հերան: Գյուղ Հարք գավառում, որի անվան վերջում հայ. -ան ածանցն է:

Հերանդ: Բնակավայր Ղարադաղի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -անդ ածանցն է:

Հերանի: Գյուղ Էրզրումի նահանգի Դերջանի գավառակում, որի անունը վերջանում է հայ. -անի ածանցով:

Հերաշեն: Բնակավայր Արդահանի շրջանում:

Հերաք: Գյուղ Լճեի գավառակում:

Հերե: Բնակավայր Սյունիքի Քաշաթաղ գավառում: Տեղանունը -է ածանցով է:

Հերեգ: Գյուղ Տարոնում, որի անվան մեջ նաև հայ. եգ «եզակի» բառն է:

Հերեք: Բնակավայր Հարք գավառում: Տեղանունը հայ. -եք ածանցով է:

Հերեկունիք: Գյուղ Մուշի գավառում, որի անվան մեջ նաև հայ. եկ բառն է և -ունի ու -ք ածանցները:

Հերենագրակ: Բնակավայր Կիսկիմի գավառակում: Տեղանվան վերջում հայ. -են ածանցն է և ազարակ բառը:

Հերերի: Գյուղ Վանի շրջանում:

Հերիկ: Բնակավայր Հեքյարի գավառում:

Հերիք: Գյուղ Զանգեզուրի շրջանում:

Հերիեր: Գյուղեր Դիարբեքիրի նահանգում և Բայազետի գավառում, Վանի Կարկառի գավառակում, Արցախի Մարտունու (տրբ. Հերշեն) և Վայքի շրջաններում:

Հերով: Բնակավայր Շուշիի շրջանում:

Հերք: Գյուղ Վայոց ձորի գավառակում:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), կազմված մայր լեզվի (ս)պեր-«փայտամած» արմատի հայ. հեր- տարբերակից, մատնացույց են անում տեղանքի շինությունների փայտաշեն լինելը:

ՀԵՐԹ: Գավառ Պարսկահայք նահանգում, գյուղեր Հարք գավառում և Խնուսի շրջանում (ՀՏԲ): Հայկական գրավոր աղբյուրներում նման բառ չի հանդիպում: Իսկ ժամանակակից հայերենի հերթ «հերթ» արմատը այդպիսի իմաստով չէր կարող գործածվել որպես տեղանուն:

Ուստի, կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *perth- «ձող, շիվ» արմատն է (Pok.): Մայր լեզվի ք հնչյունը հին հայերենում դարձել է նաև հ, իսկ th-ն՝ թ և դ (ՀԼՊ., էջ 253): Հիշենք Այրարատ նահանգի Մասյացոտն գավառի, Ձողկերտ ավանի, Սասունի Մոտկան գավառա-

կի Ձողուտ, Սալմաստի գավառի Շիվա և Կապանի Շիվանի ձոր բնակավայրերի անունները (ՀՏԲ), որոնք այդպիսի իմաստ ունեն:

Տվյալ հերթ- արմատը մենք տեսնում ենք նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Հերթեն: Գյուղ Էրզրումի գավառում:

Հերթն: Բնակավայր նշված շրջանում, որի անվան վերջում հայ. -ել գործիական հոլովի ցուցիչն է որպես ածանց:

Հերթիկ: Գյուղ Վայոց ձոր գավառում:

Հերթինք: Բնակավայր Սասունում:

Հերթիչ: Բնակավայր Շարուրի շրջանում:

Հերթիս: Գյուղ Ջավախքում, որի անվան վերջում հայ. -իք ածանցն է:

Հերթիվ: Բնակավայր Քղիի գավառակում (տրբ. Հերտիվ): Տեղանվան վերջում հայ. -իվ մասնիկն է:

Հերթս: Գյուղ Էրզրումի գավառում, որի անվան վերջում հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչն է:

Բերված տեղանունները (ՀՏԲ) վկայում են, որ այդ բնակավայրերի շինությունները ձողերով են կառուցված կամ այդ վայրերը ծառերի շիվերով հարուստ են:

ՀՈՓ: Գյուղ Սասունում (ՀՏԲ): Հայկական գրավոր աղբյուրներում նման բառ չի հանդիպում:

Ամենայն հավանականությամբ այն հնդեվրոպական նախալեզվի *hop^[h]- «բարիք, հարստություն» արմատն է (ИЯИ, էջ 63):

Այդպիսի իմաստ ունեն Օլթիի շրջանի Բարիք, Մալաթիայի գավառի Բարի, Տրապիզոնի Բարիամ (նաև ամ-«լի» բառն է դրանում) և Մուշի Բարիան (-յան ածանցով) հին հայկական տեղանունները (ՀՏԲ):

Կարծում ենք, մայր լեզվի հոփ- արմատը կարելի է առանձնացնել նաև ներքև բերվող տեղանուններում:

Հոփաք: Գյուղ Խարբերդի նահանգի Արդանամադենի գավառում:

Հոփերան: Բնակավայր Էրզրումի գավառում, որի անվան մեջ հայ. -եր և -ան ածանցներն են:

Հոփիկ: Գյուղեր Արդանամադենի և Դերսիմի գավառներում:

Հոփյաց ձոր: Բնակավայր Գեղարքունիքում:

Հոփվերան: Գյուղ Կարսի շրջանում: Տեղանվան մեջ հայ. վեր «վեր» բառն է և -ան ածանցը:

Հոփում: Բնակավայրեր Մուշի շրջանում և Դիարբեքիի Լճեի գավառակում:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ) մատնանշում են, որ նշված բնակավայրերը ծառերի շիվերով հարուստ են եղել:

Մ

ՄՄԳՈՆՑ: Գյուղ Օլթիի շրջանում (ՀՏԲ): Այդ տեղանունը Մագանա, Մագի և Մագու ստորև բերվող բնակավայրերի անունների հետ համեմատելուց պարզ է դառնում, որ իր հիմքում ունի մագ- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում և -ոնք ածանցը հոգնակի սեռական հոլովի -ց ցուցիչով:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *māgh «կարողանալ» արմատն է (Pok.):

Իրանականից փոխադրյալ «ուժ, կարողություն» բառն ունեն իրենց կազմում Արագածոտնի գավառի Ուժան (-ան ածանցով, այժմ՝ Ուջան), Կապանի Ուժանի, Արա գյուղի մոտի Ուժբաշխարար (ավերակ) բնակավայրերի անունները (ՀՏԲ), որոնք բնութագրում են տեղի բնակիչներին:

Նախալեզվի մագ - «ուժեղ» արմատը մենք տեսնում ենք նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Մագալա: Գյուղ Տրապիզոնի գավառում, որի անվան մեջ հայ. -աղ ածանցի հին -ալ տարբերակն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Մագալան: Բնակավայր Սալմաստի գավառում: Տեղանվան մեջ վերը նշված -ալ և ապա -ան մասնիկներն են:

Մագալի: Գյուղեր Բաբերդի և Դերջանի շրջաններում, որոնց անվան վերջում հայ. -ալի ածանցն է:

Մագանա: Բնակավայր Տրապիզոնի գավառում: Տեղանվան վերջում հայ. հոգնակիակերտ -ան ածանցն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Մագասպերա: Բերդ Կադզվանի շրջանում, որի անվան մեջ հայ. -աք ածանցն է և բերդ բառը օտար աղավաղմամբ:

Մագավուզ: Գյուղ Արցախի Մարդակերտի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -ավ մասնիկն է և ուզել բայի ուզ- արմատը:

Մագարա: Բնակավայրեր Նախիջևանի, Դիարբեքի, Վանի, Երզնկայի գավառներում և Արդվինի, Բալուի ու Բաբերդի շրջաններում: Տեղանվան վերջում հայ. -ար ածանցն է (հմմտ. տիպ և տիպար) և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Մագենոց: Գյուղ Սյունիքի Սողք գավառում (տրբ. Մաքենոց), որի անվան վերջում հայ. -են և -ոց ածանցներն են:

Մագերա: Բնակավայր Բաբերդի գավառակում: Տեղանվան վերջում հայ. -եր մասնիկն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Մագի: Բնակավայր Մասունում:

Մագու: Պարսկահայքի Մակու քաղաքն է նաև այդպես կոչվել, որի անունը սեռական հոլովի -ու ցուցիչով է:

Նախալեզվի ցի հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ ու ք (Օս., էջ 298):

Ստորև բերվող տեղանուններում մայր լեզվի մագ-«կարող» արմատը հանդիպում է մակ- և մաք- տարբերակներով:

Մակարա: Գյուղ Սյունիք նահանգի Բաղք գավառում, որի անվան վերջում հայ. -ար ածանցն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Մակենիս: Բնակավայր Վարդենիսի շրջանում (տրբ. Մաքենիս):

Մակիստր: Գյուղ Կիսկիմի գավառակում, որի անվան վերջում -ի- հոդակապով հին հայ. տր «ծակ, խոռոչ, փոս» (ՀՄԲ) բառն է:

Մակնի: Բնակավայր Մոկսի շրջանում:

Մակրի: Գյուղ Ղարադաղի գավառում, որի անվան վերջում հայ. -րի ածանցն է (հմմտ. բերք և բերրի):

Մաքավա: Բնակավայր Վանի գավառում: Տեղանվան վերջում հայ. -ավ մասնիկն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Մաքս: Գյուղ Վանի շրջանում: Տեղանվան վերջում հին հայ. հոգնակի հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչն է:

Բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք կազմված են նախալեզվի մագ-«կարող» արմատից և դրա հայկական տարբերակներից, բնութագրում են տեղի բնակիչներին:

ՄԱՂՄԱ: Գյուղ Դիարբեքիի նահանգի Բալուի գավառակում (տրբ. Մատրա, ՀՏԲ):

Այդ տեղանունը համեմատելով ներքև բերվող Մատրիկոն գյուղի անվան հետ՝ ակնառու է դառնում, որ դրա մեջ առկա է մաղր- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում և հայ. սեռական հոլովի -ա ցուցիչը:

Ամենայն հավանականությամբ դա հնդեվրոպական նախալեզվի *medhro- «կապույտ» արմատի madhro տարբերակն է (Pok.): Մայր լեզվի բազմավանկ բառերը, որոնք անցել են հին հայերենին, վերջին ձայնավորը կորցրել են, քանի որ արդեն շեշտը հաստատվել էր նախավերջին վանկի վրա (ՀԼՊ, էջ 228):

Նույնպիսի բնութագիր են տալիս տեղանքին Վայոց ձորի շրջանի Կապույտ, Արովյանի Կապուտան և Դերսիմի Կապուտ բնակավայրերի անունները:

Ստորև բերենք մաղր- արմատով այլ հայկական տեղանուններ:

Մաղրախ: Գյուղ Էրզրումի գավառում (տրբ. Մաղրակ), որի անվան վերջում հայ. -ախ ածանցն է:

Մաղրակ: Բնակավայր Բիթլիսի նահանգի Գենջի գավառում:

Նախալեզվի dh հնչյունը հին հայերենում դարձել է նաև տ (Օս., էջ 298):

Մատր- տարբերակը առանձնանում է ներքև բերվող տեղանուններում:

Մատրա: Գյուղ Դիարբեքիի գավառում: Տեղանվան վերջում հայ. սեռական հոլովի -ա ցուցիչն է:

Մատրակերտ: Բնակավայր Սյունիքի նահանգի Աղահեջք գավառում:

Մատրաղ: Գյուղ Էրզրումի գավառում, որի անվան վերջում հայ. -աղ ածանցն է:

Մատրասան: Բնակավայր Մալաթիայի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -աք և -ան ածանցներն են:

Բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք իրենց հիմքում ունեն մայր լեզվի մաղր-«կապույտ» արմատը և դրա հայերեն մատր- տարբերակը, բնութագրում են նշված բնակավայրերի տեղանքը:

ՄԱՆԳՐԱ: Գյուղ Կոտայքի շրջանում (տրբ. Մանգուս, ՀՏԲ): Երբ այս տեղանունը համեմատում ենք ներքոհիշյալ Մանգար և Մանգնի բնակավայրերի անունների հետ, պարզ է դառնում, որ դրանում առանձնանում է մանգ- բառը, որն անձանոթ է հայկական գրավոր աղբյուրներին և հայ. -իք ածանցը հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Ամենայն հավանականությամբ այն հնդեվրոպական նախալեզվի *men(e)gh- «հարուստ, շատ» արմատի **ռոգ** gh-տարբերակն է (Pok.): Մայր լեզվի -ո- հնչյունը հին հայերենում դարձել է ան (ՀԼՊ, էջ 226):

Այդ իմաստն ունեն Մասունի գավառի Շատ, Նախիջևանի Շատ, Դերսիմի Շատիկ և Ալաշկերտի շրջանի Շատ բնակավայրերի անունները:

Մանգ- արմատը կարելի է առանձնացնել նաև ներքև բերվող տեղանուններում:

Մանգասար: Գյուղ Բայազետի գավառում, որի անվան վերջում հայ. -աք ածանցն է հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով և -ար մասնիկը:

Մանգար: Բնակավայր Կամախի գավառակում:

Մայր լեզվի gh հնչյունը հին հայերենում դարձել է նան կ ու ք (ՕԿ., էջ 298):

Մանգ- արմատը նշված տարբերակներով առկա է նաև ստորև բերվող տեղանուններում:

Մանկագոմ: Գյուղ Հարք գավառում: Այն նշանակում է «շատ գոմեր ունեցող»:

Մանկանա: Բնակավայր Տրապիզոնի գավառում: Տեղանվան վերջում հայ. -ան մասնիկն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Մանկավոր: Գյուղ Բայազետի շրջանում, որի անվան վերջում հայ. -ավոր ածանցն է: Այն նշանակում է «շատվոր»:

Մանկու բերդ: Բնակավայր Վանի գավառում, որի անվան վերջում սեռական հոլովի -ու ցուցիչն է:

Մանկուք: Գյուղ Արարատի շրջանում:

Մանք: Գյուղ Երզնկայի գավառում:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ) հուշում են տվյալ գյուղերի շատ բնակիչներ ունենալու մասին:

ՄԱՆԴԵՆՅ: Բնակավայր Բիթլիսի գավառում (ՀՏԲ):

Այդ տեղանունը համեմատելի է ներքև բերվող Մանդան, Մանդուք և Մանդար բնակավայրերի անունների հետ: Դրանից պարզվում է, որ Մանդենց տեղանվան մեջ առանձնանում է մանդ- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներին անձանոթ է, և հայ. -ենք ածանցը բառի հոգնակի սեռականի հոլովաձևով:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *mand- «հյուսված ցանկապատ» արմատն է (Pok.):

Այդպիսի իմաստ ունեն Նոր Բայազետի շրջանի Հյուսեն, Սուրմալուի Հյուսեն, Դիարբեքիի գավառի Հյուսենիկ, վերջինիս Սլիվանի շրջանի Հյուսան և շատ այլ գյուղերի անուններ (ՀՏԲ), որոնք հուշում են, թե այդ բնակավայրերը շատ պինդ հյուսվածք ունեցող շինություններով են կամ հյուսված ցանկապատ ունեն:

Մանդ- արմատը նշված իմաստով կարելի է տեսնել նաև ստորև բերվող տեղանուններում:

Մանդա: Գյուղ Տրապիզոնի գավառում, որի անունը սեռական հոլովի -ա ցուցիչով է:

Մանդագուտ: Բնակավայր Ճորոխի միջին ավազանում՝ Կիսկիմի գավառում: Տեղանվան մեջ հայ. -ակ (քիչ աղավաղված) և -ուտ ածանցներն են:

Մանդալիկ: Գյուղ Բայազետի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ալի և -իկ մասնիկներն են:

Մանդակունիք: Գավառ Մեծ Հայքի Տուրուբերան նահանգում: Տեղանվան մեջ հայ. -ակ, -ունի և -ք ածանցներն են:

Մանդան: Բնակավայր Վանի նահազի Արճակի գավառակում (տրբ. Մանտան):

Մանդանա: Գյուղ Բիթլիսի նահանգում, որի անվան մեջ հայ. հոգնակիակերտ -ան ածանցն է և հոգնակի հայցական հոլովի հին -ս ցուցիչը:

Մանդաշկան: Բնակավայր Շատախի գավառակում (տրբ. Մանտաշկան): Տեղանվան վերջում հայ. -աշ և -կան մասնիկներն են:

Մանդասոր: Գյուղ Արճեշի գավառակում: Տեղանվան մեջ հին հայ. սոր «ծակ, խոռոչ, փոս» բառն է (ՀՄԲ):

Մանդար: Բնակավայր Կաղզվանի շրջանում: Տեղանունը -ար ածանցով է:

Մանդուկ: Գյուղ Արցախում, Թարթառ ավանից հարավ-արևմուտք:

Մայր լեզվի d հնչյունը հին հայերենում դարձել է թ և տ (ՕԿ., էջ 298):

Մանդ- արմատը մանթ- և մանտ- տարբերակներով հանդիպում է ներքոհիշյալ տեղանուններում:

Մանթալսի: Բերդ Գորիս քաղաքից մոտ 30կմ հյուսիս-արևելք, որի անվան մեջ հայ. -աղ ածանցի հին -ալ տարբերակն է, հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչը ու սեռականի -ի վերջավորությունը:

Մանթաշ: Ժամանակակից գյուղ Արթիկի և ամրոց Բջևանի շրջաններում: Տեղանվան վերջում հայ. -աշ ածանցն է:

Մանթար: Բնակավայր Կաղզվանի շրջանում: Տեղանունը -ար ածանցով է:

Մանտիկան: Գյուղ Արդանամադենի գավառում, որի անվան մեջ հայ. -իկ և -ան մասնիկներն են:

Մանտոնեց: Բնակավայր Բիթլիսի գավառում:

Մանտոն: Գյուղ Վանի գավառում:

Այստեղ բերված տեղանունները (ՀՏԲ), որոնց հիմքում մայր լեզվի մանդ- արմատն է և դրա հայերեն մանթ- ու մանտ- տարբերակները, վկայում են այդ բնակավայրերի ամուր շինություններ ունենալու կամ ցանկապատված լինելու մասին:

ՄԵՂԱՆ: Գյուղեր Սասունի Սոսկան գավառակում և Դերսիմի շրջանում (ՀՏԲ):

Երբ այդ տեղանունը բաղդատում ենք ներքև բերվող Մեղեթաղ, Մեղիա և Մեղիկա բնակավայրերի անունների հետ, պարզվում է, որ դրանում առանձնանում է մեղ- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներին ծանոթ չէ, և -ան ածանցը:

Ամենայն հավանականությամբ այն հնդեվրոպական մայր լեզվի *medhi - «միջին, միջակ» արմատն է (Քոկ.): Դա հայերեն մեջ բառն է:

Հիշենք Բիթլիսի նահանգի Խիզանի գավառակի Միջա, Սասունի գավառի Միջգեղ, Խարբերդի Միջինգեղ, Կաղզվանի Միջինկերտ (Մժենկերտ), Թալինի Միջնաձոր գյուղերի անունները (ՀՏԲ), որոնք հուշում են դրանց տարածաշրջանի կամ ձորի մեջտեղ գտնվելու մասին:

Մեղ- արմատը «մեջ, միջին» իմաստով կարելի է առանձնացնել նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Մեղանիկ: Գյուղ Բալուի շրջանում, որի անվան մեջ հայ. -ան և -իկ ածանցներն են:

Մեղեթաղ: Բնակավայր Բիթլիսի նահանգում:

Մեղիա: Գյուղ Խարբերդի գավառում:

Մեղիկա: Բնակավայր Նոր Բայազետի շրջանում, որի անվան մեջ հայ. -ին ածականակերտ մասնիկն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Տվյալ տեղանունները (ՀՏԲ) մատնանշում են, որ դրանցով կոչվող բնակավայրերը որևէ տարածքի մեջտեղում են գտնվել:

ՄԵԼ: Գյուղ Սյունիք նահանգի Արևիք գավառում (ՀՏԲ):

Կարծում ենք, Մել տեղանունը իր մեջ ունի մել- բաղադրիչը, որը հայկական գրավոր աղբյուրներում այդ ձևով չի հանդիպում: Այն հնդեվրոպական նախալեզվի *mel- «մեղմ» արմատն է (ՀԱԲ, տես մեղմ), որը ինչպես նշում է Հ. Աճառյանը, հայերենում հանդիպում է մեղմ ձևով:

Մայր լեզվի մել- արմատը «մեղմ» իմաստով առանձնանում է նաև ստորև բերվող տեղանուններում:

Մելաղյուր: Գյուղակ Օլթիի շրջանում, որի անվան մեջ նաև -ա- հոդակապով հայ. դիր «հարթ, դյուրին» արմատն է (ՀԱԲ):

Մելախան: Բնակավայր Քղիի շրջանում: Տեղանվան մեջ -ա- հոդակապով նաև հին հայ. խան «իջևան» բառն է:

Մելան: Գյուղ Ալաշկերտի շրջանում, որի անվան վերջում հայ. -ան ածանցն է:

Մելեզկի: Բնակավայր Բաբերդի գավառակում: Տեղանվան մեջ նաև հայ. եզ «մեկ, միակ» բառն է (ՀԱԲ) և -կի ածանցը (հմմտ. լուցանել և լուցկի):

Մելբերդ: Լեռ Երզնկայի արևելյան կողմում:

Մելեկա: Լեռ Մեծուրի լեռնաշղթայի արևելյան հատվածում, որի անվան վերջում հայ. եկ բառն է (հմմտ. դուրեկան) և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Մելենլի: Գյուղակ Երզնկայի գավառում: Տեղանվան վերջում հայ. -են ածանցն է և լի «լի» բառը:

Մելեշկուտ: Գյուղախումբ Գենջի գավառում, որի անվան վերջում հայ. -եշ և -կուտ մասնիկներն են (հմմտ. վախել և վախկոտ):

Մելեսա: Լեռ Սասունում: Տեղանվան վերջում հայ. -ետ ածանցն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Մելի: Բերդ Բայազետի գավառում:

Մելիխան: Գյուղ Արդանամադենի գավառում, որի անվան վերջում նաև հին հայ. խան «իջևան» բառն է -ի- հոդակապով:

Մելին: Բնակավայր Երզնկայի գավառում:

Մելիշ: Գյուղ Նախիջևանի շրջանում:

Մելիսի: Գետ Ճորոխի ավազանում, որի անվան վերջում հայ. -իք ածանցն է հին հոգնակի հայցական հոլովի -ս և ապա սեռականի -ի ցուցիչով:

Մելիախ: Բնակավայր Թորթումի գավառակում: Տեղանվան վերջում հայ. -իտ և -իք ածանցներն են:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ) մատնացույց են անում այդ բնակավայրերի կամ լեռների մեղմ բնություն, իսկ գետերի մեղմ հոսանք ունենալու մասին:

ՄԵՆԳԵՆԵ: Լեռնաշղթա Ադրակ գավառի հյուսիսային հատվածում (ՀՏԲ):

Մայր լեզվի g հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ ու ք (Օս., էջ 298): Երբ այդ տեղանունը բաղդաստում ենք ներքև բերվող Մենկուճակ, Մենկալիսի և Մենկյան բնակավայրերի անունների հետ, ապա դրանում առանձնանում է մենգ- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում և -ենի ածանցը քիչ աղավաղված ձևով:

Ամենայն հավանականությամբ այն հնդեվրոպական նախալեզվի meng-«գեղեցկացնել» արմատն է (Pok.):

Բնակավայրերի տեղանքին այդպիսի հատկանիշ են մատնանշում Սյունիք նահանգի Ձորք գավառի Գեղ (այժմ՝ Գեղի Կապանի շրջանում), Արովյանի Գեղաղիր, Էջմիածնի Գեղակերտ, Սպերի գավառակի Գեղաձոր և շատ այլ հին բնակավայրերի անունները (ՀՏԲ):

Մենգ- արմատը մենկ- տարբերակով կարելի է առանձնացնել նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Մենկալիսի: Բնակավայր Զավախքում, որի անվան վերջում հայ. -ա- լի ածանցն է, հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչը և սեռականի -ի վերջավորությունը:

Մենկան: Գյուղ Վանի նահանգի Հեքյարի գավառում (տրբ. Մենկյան):

Մենկուճակ: Բնակավայր Դերսիմի շրջանում (տրբ. Մենկյուճիկ), որի անվան մեջ հայ. -ուճ և -ակ ածանցներն են:

Մենկուշան: Լեո Հայկական Տավրոսի արևելյան հատվածում: Տեղանվան վերջում հայ. -ուշ և -ան մասնիկներն են:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ) վկայում են այդ բնակավայրերի գեղեցիկ տեղանք ունենալու մասին:

ՄԵՆՂԱՆ: Գյուղեր Վանի և Արդվինի գավառներում (ՀՏԲ):

Ստորև բերվող Մենդելիկ, Մենդին և Մենդիվան բնակավայրերի անունների հետ համեմատելիս՝ պարզ է դառնում, որ Մենդան տեղանվան մեջ առանձնանում է մենդ- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում, և հայ. -ան ածանցը:

Այն, կարծում ենք, հնդեվրոպական նախալեզվի *mendh-«կենսալի լինել, ողջ լինել» արմատն է (Pok.):

Այդպիսի իմաստ ունեն Խոյի գավառի Կենալի, Տարոնի Կենացավայրք, Ձանգեգուրի Կենիք և Խարբերդի Կենք բնակավայրերի անունները (ՀՏԲ), որոնք մատնանշում են տեղի բնակիչների կենսունակ լինելու հատկանիշը:

Մենդ- արմատը «կենսալի» իմաստով կարելի է տեսնուլ նաև ստորև բերվող տեղանուններում:

Մենդելիկ: Գյուղ Մակուի շրջանում, որի անվան մեջ առկա են հայ. -ել ածանցի հին -ել տարբերակը և -իկ մասնիկը:

Մենդեն: Բնակավայր Տրապիզոնի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -են ածանցն է (հմմտ. Նորեն, ծվեն):

Մենդերն: Գյուղ Երզնկայի գավառում, որի անվան վերջում հայ. -եր և -նի մասնիկներն են:

Մենդիվան: Բնակավայրեր Վանի նահանգի Հեքյարի և Էրզրումի (տրբ. Մենտեվան) գավառներում:

Այս տեղանունները (ՀՏԲ) վկայում են բնակիչների կենսունակության մասին:

ՄԵՐԳԱՆ: Գյուղեր Մասունի Մոտկան գավառակում և Քդիի շրջանում (ՀՏԲ):

Այդ տեղանունը համեմատելի է ներքև բերվող Մերգե, Մերգեկ և Մերգուկ բնակավայրերի անունների հետ: Պարզվում է, որ դրանում առանձնանում է մերգ- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներով չի ավանդված, և -ան բաղադրիչը, որը հայերեն ածանց է:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *meragh-«խոնավացնել» արմատն է (Pok.): Մայր լեզվի բազմավանկ բառերի վերջին ձայնավորը հին հայերենում թուլացել ու ընկել է, քանի որ շեշտը կայունացել է նախավերջին վանկի վրա (ՀԼՊ, էջ 228):

Այդպիսի իմաստ ունեն Վանի նահանգի Կարկառի գավառակի Թացոն, Թացու, Ուրմիայի շրջանի Թացու գյուղերի և Հայաստանի հյուսիսի Խոնավ լեռների անունները (ՀՏԲ):

Մայր լեզվի մերեգ- արմատը հայերեն մերգ- ձևով և նշված իմաստով հանդիպում է նաև ստորև բերվող ընդանուններում:

Մերգա: Գյուղ Մուշի գավառում: Տեղանունը հայ. սեռական հոլովի -ա ցուցիչով է:

Մերգանի: Բնակավայր Վանի նահանգի Հեքյարի գավառում:

Մերգաշեն: Լեո Հայկական պար լեռնաշղթայում, որի անվան մեջ հայ. -աշ և -են ածանցներն են:

Մերգավար: Գավառ Ուրմիա լճի հարավ-արևմտյան ավազանում: Տեղանվան վերջում -ա- հոդակապով հայ. -վար ածանցն է:

Մերգավետ: Գյուղ նշված տարածքում: Տեղանվան մեջ հայ. -ավետ ածանցն է:

Մերգե: Բնակավայր Հեքյարի գավառում:

Մերգեգար: Գյուղ Խնուսի գավառակում (տրբ. Մերկեգարկ): Տեղանունը նշանակում է «խոնավությունից զարկված»:

Մերգել: Գետ, որն հոսում է Արդվինի շրջանի տարածքով: Տեղանվան վերջում հայ. -ել ածանցի հին -ել տարբերակն է:

Մերգելիւել: Բնակավայր Բայազետի գավառում, որի անվան վերջում հայ. -ելս և -ել մասնիկներն են:

Մերգեմետ: Արածանիի աջ վտակներից մեկը, Մուշից հյուսիս-արևմուտք գտնվող լեռները և Ծաղկունյաց լեռների մի ճյուղավորություն այդ անունն են կրել: Տեղանվան մեջ հայ. -եմ և -ետ մասնիկներն են:

Մերգեմոգան: Բնակավայր Սասունում, որի անվան մեջ -ե- հոդակապով նաև հին հայ. մոգ «մեծ, շատ, սաստիկ» բառն է (ՀՄԲ) և -ան ածանցը: Այն նշանակում է «սաստիկ խոնավ»:

Մերգեն: Գյուղ Մակուի շրջանում:

Մերգեշե: Լեռ Հայկական պար լեռնաշղթայում: Տեղանվան վերջում հայ. -եշ և -է ածանցներն են:

Մերգեր: Բնակավայր Սասունում:

Մերգյավու: Գյուղ Վանի նահանգի Խոշաբի գավառակում: Տեղանվան մեջ հայ. -ավ ածանցն է և սեռական հոլովի -ու ցուցիչը:

Մերգուկ: Բնակավայր Էրզրումի գավառում:

Նախալեզվի ցի հնչյունը հին հայերենում դարձել է նաև կ ու ք (Օս., էջ 298): Մայր լեզվի մերեգ- արմատի մերկ- և մերք- տարբերակները առկա են ստորև բերվող տեղանուններում:

Մերկ: Գյուղ Վանի նահանգի Խոշաբի գավառակում: Ի դեպ, հին հայ. մերկ «բան չհագած, մերկ» արմատը (ՀՄԲ) իր իմաստի առումով չէր կարող որպես տեղանուն գործածվել:

Մերկան: Բնակավայրեր Սասունում և Սղերդի շրջանում:

Մերկեմեր: Բնակավայրեր Բիթլիսի և Բայազետի գավառներում, որոնց անվան մեջ հայ. -եմ և -եր մասնիկներն են:

Մերկեր: Գյուղ Սասունում:

Մերքեգ: Բնակավայրեր Խարբերդի և Տրապիզոնի գավառներում, որոնց անվան վերջում նաև հայ. եգ «եզակի, միակ» արմատն է (ՀՄԲ):

Մերկիտ: Լեռ Հայկական Տավրոս լեռնահամակարգում:

Մերքլի: Գյուղ Ակնի գավառակում: Տեղանվան վերջում հայ. լի բառն է:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք կազմված են մայր լեզվի մերեգ- «խոնավ» արմատի հայկական մերգ-, մերկ- և մերք- տարբերակներից, մատնանշում են այդ բնակավայրերի և լեռների խոնավ լինելը:

ՄԵՐՄԱՆ: Գյուղ Երզնկայի գավառում (ՀՏԲ):

Ներքոհիշյալ Մերդենի, Մերդի և Մերդոն գյուղերի անունների հետ համեմատելիս՝ պարզվում է, որ այդ տեղանվան մեջ առանձնանում է մերդ- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում և հայ. -անի ածանցը:

Հավանաբար, այն հնդեվրոպական նախալեզվի *meradh- «սկսել եռալ» արմատն է (Pok.): Մայր լեզվի բազմաձևակ բառերի վերջին ձայնավորը հին հայերենում թուլացել ու ընկել է, քանի որ շեշտը կայունացել է նախավերջին վանկի վրա (ՀԼՊ, էջ 228):

Հին հայերենի եռ «եռում, եռք» արմատից են կազմված Վանի նահանգի Եռմանց (հայ. -մն ածանցով, որը սեռական հոլովաձևում դառնում է -ման և նույն հոլովի հոգնակի -ց ցուցիչն է դրանում), Եռնիս և Մեղրիի շրջանի Եռնաձոր բնակավայրերի անունները, որոնցից վերջինը հուշում է ձորի ջրի անհանգիստ լինելու մասին, իսկ առաջին երկուսը՝ մարդկանց եռուն աշխատանքի:

Ներքոհիշյալ տեղանուններում մենք այդ մերդ- արմատն ենք տեսնում:

Մերդենի: Գյուղ Գորիս քաղաքից մոտ 34կմ հարավ-արևելք, որի անվան մեջ հայ. -ենի ածանցն է:

Մերդենիկ: Բնակավայր Արդահանի շրջանում:

Մերդի: Գյուղ Մուշի գավառում:

Մերդիլիկ: Բնակավայր Էրզրումի գավառում: Տեղանվան մեջ հայ. -իլ և -իկ ածանցներն են:

Մերդիվեն: Գյուղ Էրզրումի շրջանում, որի անվան մեջ հայ. -իվ և -են ածանցներն են:

Մերդուն: Բնակավայր Դիարբեքիրի գավառում: Տեղանունը -ուն ածանցն ունի իր կազմում:

Մայր լեզվի dh հնչյունը հին հայերենում դարձել է նաև թ և տ (Օս., էջ 298): Մերդ- արմատի հայերեն մերթ- և մերտ- տարբերակները կարելի է տեսնել ստորև բերվող տեղանուններում:

Մերթակերտ: Գյուղ Սյունիք նահանգի Բաղք-Քաշունիք գավառում:

Մերթեկլի: Բնակավայր Երզնկայի շրջանում, որի անվան վերջում հայ. եկ և լի բառերն են:

Մերթիքար: Լեռ Մեղրու շրջանում:

Մերտալի: Քաղաք Տուրուբերան նահանգում:

Մերտանի: Լեռ Մալաթիայի գավառում: Տեղանունը հուշում է, որ լեռը հրաբխային է:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ) հուշում են նշված բնակավայրերում մարդկանց եռուն աշխատանքի, իսկ լեռների հրաբխային լինելու մասին:

ՄՈՒԿԵՐ: Գյուղ Արդվինի շրջանում (ՀՏԲ): Ստորև բերվող Մուկյազ, Մուկոլ և Մուկուս գյուղերի անունների հետ համեմատելիս պարզվում է, որ դրանում առանձնանում է մուկ- բաղադրիչը և հայ. -եր մասնիկը: Հին հայերենի մուկն «մուկ կենդանի», որը գործածվում է նաև մուկ ձևով և մուկն «նյարդ» արմատները (ՀԱԲ) իմաստի տեսակետից չէին կարող գործածվել որպես տեղանուն:

Թերևս այն հնդեվրոպական նախալեզվի *mṛk-«թումբ» արմատն է (Pok.): Մայր լեզվի երկար ձայնավորները հին հայերենում կորցրել են այդ հատկանիշը և դարձել սովորական հնչյուններ (ՀԼՊ, էջ 225):

Թումբ արմատից են կազմված Զավախք գավառի Թումբ և Թմբուկ, Նախիջևանի Թումբուլ (-ուլ ածանցով), իսկ դրա բլուր հոմանիշից՝ Մուշի գավառի Բլուր, Սդերդի Բլուր և Երզնկայի Բլուր բնակավայրերի անունները (ՀՏԲ):

Նախալեզվի մուկ-«թումբ» արմատը կարելի է առանձնացնել նաև ստորև բերվող տեղանուններում:

Մուկես: Գյուղ Կապանի շրջանում (այժմ՝ Կադնուտ), որի անվան վերջում հայ. -եք ածանցն է հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Մուկեր: Գյուղ Արդվինի շրջանում:

Մուկյալ: Բնակավայր Օլթիի շրջանում (տրբ. Մուքյալ), որի անունով կոչվել է նաև տեղի գետը: Տեղանվան վերջում -յ- հոդակապով հայ. -ավ մասնիկն է:

Մուկոլ: Գյուղ Երզնկայի գավառում:

Մուկունց խաչ: Գյուղատեղի Կապանի շրջանում:

Մուկուս: Գավառակ Վանի նահանգում, որի անվան վերջում -ուք ածանցն է հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով: Դա Մուկսի անվան հին և ճիշտ տարբերակն է: Այդ անունով է կոչվել նաև տեղի Մուկս գետը:

Տվյալ տեղանունները (ՀՏԲ) հուշում են, որ նշված գյուղերը կառուցված են թումբերի վրա:

ՄՈՒՍԱ: Գյուղեր Կարսի գավառում և Սասունում (ՀՏԲ):

Երբ այդ տեղանունը համեմատում ենք ներքև բերվող Մուսիկ, Մուսյան և Մուսուն բնակավայրերի անունների հետ, պարզ է դառնում, որ դրանում առկա է մուս-բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում, և հայ. սեռական հոլովի -ա ցուցիչը:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *m(e)us-«մամուտ» արմատն է (ИЯИ, էջ 663-664):

Այդ իմաստն ունեն Ելիզավետպոլի գավառի Մամուտ բերդի, Բիթլիսի Մամուտանք գյուղախմբի, Մուշի Մամրկան (-կան ածանցով), Տայքի Մամրվան բնակավայրերի անունները (ՀՏԲ):

Մուս- արմատը «մամուտ» իմաստով գործածված է նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Մուսա: Գյուղ Սասունի գավառում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ա ցուցիչն է:

Մուսալամ: Բնակավայր Կապանի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -աղ ածանցի հին -ալ տարբերակն է և ամ-«լի» բառը:

Մուսական: Գյուղ Ախուրյանի շրջանում (այժմ՝ Ոսկեհասկ):

Մուսան: Բնակավայր Արդանամադենի գավառում:

Մուսաշաղ: Գյուղ Կապանի շրջանում:

Մուսատա: Բնակավայր Վանի գավառում, որի անվան վերջում հայ. -ատ ածանցն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Մուսե: Գյուղ Խարբերդի գավառում:

Մուսխան: Բնակավայր Արդանամադենի շրջանում:

Մուսի: Գյուղ Նոր Բայազետի շրջանում:

Մուսիկ: Բնակավայր Բայազետի գավառում:

Մուսյան: Գյուղ Բալուի գավառակում:

Մուսուլ: Բնակավայր Ալաշկերտի շրջանում, որի անվան վերջում հայ. -ուլ ածանցն է:

Մուսուղլի: Գյուղ Անիի շրջանում (այժմ՝ Լանջիկ): Տեղանվան վերջում հայ. -ուլ ածանցն է (հմմտ. ցանց և ցնցուղ) և լի «լի» բառը:

Մուսուն: Բնակավայր Բայազետի գավառում:

Մուսուրի: Գյուղեր Բիթլիսի գավառում և Ալաշկերտի շրջանում, որոնց անվան մեջ հայ. -ուր ածանցն է և սեռական հոլովի -ի ցուցիչը:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք կազմված են նախալեզվի մուս-«մամուտ» արմատից, հուշում են այդ բնակավայրերին առնթրեք մամուտ տեղանքի առկայության մասին:

Ջ

ՋԱՄ: Գյուղ Կաղզվանի շրջանում (ՀՏԲ):

Հայկական գրավոր աղբյուրներում ջամ բառ չի հանդիպում: Եթե նկատի ունենանք, որ հնդեվրոպական նախալեզվի չ հնչյունը հին հայերենում դարձել է ջ (ՀԼՊ, էջ 25), կարելի է մտածել, որ տվյալ Ջամ տեղանվան մեջ մայր լեզվի յամ- «փորել» արմատն է (Pok.):

Թերևս այդ տեղանունը ունի «փորվածք» իմաստը, որը մատնանշում է տների գետնափոր լինելը:

Ակամայից դա հիշեցնում է Վայքի շրջանի Փոր, Բասենի Փորակ, Սյունիք նահանգի Սողք գավառի Փորակ, Էրզրումի Փորիկ, Թալինի շրջանի Փորս և շատ այլ հայկական այդ իմաստով տեղանուններ (ՀՏԲ): Ստորև բերենք ջամ- արմատով տեղանուններ:

Ջամալ: Լեռնագագաթ Ջանգեզուրում, որի անունը վերջանում է հայ. -աղ ածանցի հին -ալ տարբերակով: Այս դեփքում ջամ-«փորվածք» արմատը թերևս հուշում է լեռան անդունդ ունենալը:

Ջամադին: Գյուղ Ջուլֆայի շրջանում: հայ. -ատ ածանցն է (հմմտ. հեղեղ և հեղեղատ) բարբառային հորջորջմամբ և -ին մասնիկը:

Ջամալավա: Գյուղ Ուրմիայի գավառում, որի անվան վերջում հայ. -աղ ածանցի հին -ալ ըստբերակն է, գործիական հոլովի -ավ և սեռական հոլովի -ա ցուցիչներն են

Ջամալու: Բնակավայր այդ նույն շրջանում: Տեղանվան վերջում նշված -ալ ածանցից հետո սեռական հոլովի -ու ցուցիչն է:

Ջաման: Գյուղ Վանի գավառում:

Ջամար: Բնակավայր Դիարբեքրի նահանգի Լճեի գավառակում, որի անվան մեջ հայ. -ար ածանցն է:

Ջամբեկ: Գյուղ Ալաշկերտի շրջանում: Տեղանվան մեջ նաև հայ. բեկ արմատն է «կտրվածք» իմաստով (ՀԱԲ):

Ջամեն: Լեռնագագաթ Գորիսի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -են ածանցն է: Այն նշանակում է «խորիւորատներով լեռ»:

Ջամի: Լեռ Խաղտիքում:

Ջամիլ: Գյուղ Արցախի Ծար գավառում, որի անունը վերջանում է հայ. -իլ ածանցով:

Ջամի թաղ: Բնակավայր Տրապիզոնից արևելք:

Ջամին: Գյուղ Վանի գավառում:

Ջամկան: Բնակավայր Հեքյարի գավառում, որի անվան մեջ հայ. -կան ածանցն է (հմմտ. լուծ և լծկան):

Ջամկերտ: Գյուղ Էրզրումի գավառում:

Ջամկուլու: Լեռ Նախիջևանի գավառում, որի անվան մեջ հին հայ. կուլ.տալ բառն է (ՀԱԲ) և սեռական հոլովի -ու ցուցիչը: Այն նշանակում է «կուլ տվող անդունդներով լեռ»:

Ջամսի: Գյուղ Արագածի շրջանում, որի անվան մեջ հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչն է և սեռականի -ա վերջավորությունը:

Ջամուշ: Բնակավայր Տրապիզոնի գավառում: Տեղանունը վերջանում է հայ. -ուշ ածանցով:

Ջամուշի: Գյուղեր Արագածի և Կաղզվանի շրջաններում:

Նախալեզվի չամ-«փորել» արմատը հին հայկական տեղանուններում հանդիպում է նաև նույնությամբ: Դա թերևս նշանակում է, որ այդ բնակավայրերը հիմնվել են նստակեցության անցնելու ժամանակ:

Յամ: Գյուղ Բիթլիսի նահանգում:

Յամար: Բնակավայր Ալաշկերտի շրջանում, որի անվան վերջում հայ. -ար ածանցն է (հմմտ. պայտ և պայտար, տիպ և տիպար):

Յամալավա: Գյուղ Ուրմիայի շրջանում, որը վերը նշված Ջամալավանն է:

Յամխանա: Գյուղ Նախիջևանի գավառում, որի անվան մեջ նաև հին հայ. խան «իջևան, օթևան» արմատն է (ՀԱԲ):

Հին հայ. յամ «ուշ, կամաց, դանդաղ» բառը այդպիսի իմաստներով չէր կարող գործածվել որպես տեղանուն (ՀԱԲ):

Այս տեղանունները (ՀՏԲ), որոնց հիմքում մայր լեզվի յամ- արմատի հայերեն ջամ- տարբերակն է «փորվածք» իմաստով, ցույց են տալիս, որ բնակավայրերի շինությունները գետնափոր են:

ՋԵՄ: Գյուղ Վանի գավառում (ՀՏԲ): Նման արմատ հայկական գրավոր աղբյուրներին անծանոթ է:

Եթե նկատի ունենանք այն, որ մայր լեզվի չ հնչյունը հին հայերենում դարձել է ջ (ՀԼՊ, էջ 95), այն կարելի է նույնացնել հնդեվրոպական նախալեզվի *jem-«բռնել» արմատի հետ (Pok.):

Հիշենք Սասունի Բոնաշեն, Մոկսի շրջանի Բոնաշեն հին գյուղերի անունները (ՀՏԲ), որոնք հուշում են տեղի բնակչության թակարդներով որս անելու մասին:

Տվյալ ջեմ- արմատը այդ իմաստով առկա է ներքև բերվող տեղանուններում:

Ջեմալա: Գյուղ Վանի նահանգի Հեքյարի գավառում, որի անվան վերջում հայ. -աղ ածանցի հին -ալ տարբերակն է սեռական հոլովի -ա ցուցիչով:

Ջեմալան: Բնակավայր Սասունում: Տեղանվան մեջ նշված -ալ և ապա -ան ածանցներն են:

Ջեմալաս: Գյուղ Դիարբեքիի նահանգի Լճեի գավառակում: Տեղանվան մեջ վերը նշված -ալ և ապա -աք ածանցն է:

Ջեմալովա: Բնակավայր Ուրմիայի գավառում, որի անվան մեջ նաև հայ. ովա՝ հոլիտ բառն է:

Ջեմար(ի): Գյուղ Լճեի գավառակում: Տեղանվան վերջում հայ. -ար ածանցն է:

Ջեմեն: Բնակավայր Էրզրումից Դիարբեքի տանող ճանապարհին:

Ջեմիլ: Գյուղեր Էրզրումի և Սպերի շրջաններում: Տեղանվան վերջում հայ. -իլ ածանցն է:

Ջեմիլե: Բնակավայր Բաբերդի գավառակում, որի անվան մեջ նշված -իլ և ապա -ե մասնիկն է:

Ջեմիլեն: Գյուղ Դիարբեքիի նահանգում: Տեղանվան վերջում հայ. -իլ և -են ածանցներն են:

Ջեմիկյան: Բնակավայր Արդանամադենի գավառում:

Ջեմիտ: Գյուղ Բայազետի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -իտ ածանցն է (հմմտ. մատ և մատիտ):

Բերված տեղանունները (ՀՏԲ), կազմված մայր լեզվի յեմ-«բռնել» արմատի հայ. ջեմ- տարբերակից, ցույց են տալիս այդ տեղերում թակարդով որս անել:

Ռ

ՌԵՎ: Գյուղ Արցախի նահանգի Ասկերանի շրջանում (ՀՏԲ):

Հայկական գրավոր աղբյուրներում ռեվ- բառ չի հանդիպում: Ամենայն հավանականությամբ տվյալ տեղանվան մեջ հնդեվրոպական նախալեզվի *reyə- «բացել» արմատն է (Pok.): Մայր լեզվի բազմավանկ բա-

ների վերջին ձայնավորը հին հայերենում ընկել է շեշտի նախավերջին վանկի վրա հաստատվելու հետևանքով (ՀԼՊ, էջ 228): Իսկ ք հնչյունը շատ ուշ է դարձել գ, այն տեղանուններում պահպանվել է նաև նույնությամբ (Օս., էջ 298): Նման իմաստ ունեն Սասուն գավառի Բաց (տրբ. Բացի, Բացու), Արդվինի շրջանի Բացա գյուղերի և Չմշկածագի Բացերան լեռների և ձորի անունները (ՀՏԲ):

Ռեվ- արմատը «բաց» իմաստով մենք տեսնում ենք նաև ստորև բերվող տեղանուններում:

Ռեվագ: Գյուղեր Արդահանի և Ղազախի գավառներում (այժմ՝ Դիտավան): Տեղանվան մեջ առկա է նաև հին հայ. ազ-«չոր» արմատը:

Ռեվանդ: Գյուղեր Խոյի գավառում, որի անվան վերջում հայ. -անդ ածանցն է:

Ռեվեր: Բնակավայր Բիթլիսի նահանգի Սդերդի գավառում:

Ռեվին: Գյուղ Վանի նահանգի Հեքյարի գավառում: Տեղանվան վերջում հայ. -ին ածականակերտ ածանցն է:

Բերված տեղունները (ՀՏԲ) հուշում են, որ տվյալ գյուղերը բոլոր կողմերից բաց են եղել, տեսանելի:

Ս

ՍՍՂՆԱ: Գյուղեր Բիթլիսի նահանգի Սդերդի և Բարձր Հայք նահանգի Եկեղյաց գավառներում (ՀՏԲ):

Այդ տեղանունը համեմատելով ներքև բերվող Սաղ, Սաղու և Սաղիկ բնակավայրերի անունների հետև պարզվում է, որ դրանում առանձնա-նում է սաղ- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում, և -ախ ածանցը:

Կարծում ենք, սաղ- բաղադրիչը հնդեվրոպական նախալեզվի *sē(i)dh-«մի նպատակի, վերջի գնալ» արմատի sēdh-տարբերակն է (Pok.): Մայր լեզվի ք հնչյունը հին հայերենում դարձել է ա (ՀԼՊ, էջ 226):

Այդպիսի իմաստ ունեն հին հայերենի հանգ «դադար, վերջանալ, հանգստանալ» արմատից (ՀԱԲ) կազմված Կիսկիմի գավառակի

Հանգրվան, Քղիի Հանգստուն (տրբ. Հանգստուն) և Դիարբեքիի նահանգի Լճեի շրջանի Հանգո հին գյուղերի անունները (ՀՏԲ):

Նախալեզվի սաղ- արմատը «հանգրվան» իմաստով կարելի է տեսնել նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Սաղախիան: Գյուղ Սալմաստի գավառում (տրբ. Սաղախյան), որի անվան մեջ հայ. -ախ (հմմտ. շաղել և շաղախ) և -յան ածանցներն են:

Սաղախլի: Ավերակ բնակավայր Թալինի շրջանում: Սաղախլը աղավաղված տարբերակներով են կոչվել նաև Գորիսի և Ղազախի շրջանների մեկական գյուղ: Տեղանվան վերջում թուրք. -լի մասնիկն է:

Սաղակ: Գյուղ Տարոնում:

Սաղարակ: Բնակավայր Նախիջևանի գավառում (տրբ. Սատարակ), որի հորջորջման մեջ հայ. -ար և -ակ մասնիկներն են:

Սաղգար: Գյուղ Գենջի շրջանում, որի անվան մեջ հայ. -գար ածանցն է (հմմտ. խելք և խելագար):

Սաղըկ: Բնակավայր Կաղզվանի շրջանում, որի անվան վերջում հայ. -իկ ածանցն է քիչ աղավաղված ձևով:

Սաղըն: Գյուղ Լաչինի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ին ածանցն է նման ձևով աղավաղված:

Սաղի: Բնակավայր Դիարբեքիի գավառում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ի ցուցիչն:

Սաղիգա: Գյուղ Ուրմիայի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -իկ ածանցն է աղավաղված և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Սաղիլար: Բնակավայրեր Շուշիի գավառում և Լաչինի շրջանում, որոնց անվան վերջում թուրք. -լար հոգնակիակերտ մասնիկն է:

Սաղիկ: Գյուղ Դիարբեքիի գավառում:

Սաղիկաա: Բնակավայր Տրապիզոնի գավառում: Տեղանվան մեջ հայ. -իկ ածանցն է, հին հոգնակի հայցական հոլովի -ա և սեռականի -ա ցուցիչները:

Սաղինան: Գյուղ Հեքյարի գավառում, որի անվան մեջ հայ. -ին և -ան մասնիկներն են:

Սաղիբ: Բնակավայր Դիարբեքիի նահանգի Մարդինի գավառում: Տեղանվան վերջում հայ. -իր ածանցն է:

Սաղիքոյ: Գյուղ Դիարբեքիի գավառում, որի անվան վերջում թուրք. քյոյ բառն է:

Սադորան: Բնակավայր Կադզվանի շրջանում (տրբ. Սաթորան): Տեղանվան մեջ հայ. -որ և -ան ածանցներն են:

Սադու: Գյուղ Դիարբեքիի գավառում (տրբ. Սաթու):

Նախալեզվի dh հնչյունը հին հայերենում դարձել է նաև թ ու տ (Օս., էջ 298): Սադ- արմատն այդ տարբերակներով հանդիպում է ներքև բերվող տեղանուններում:

Սաթաղան: Գյուղ Կադզվանի շրջանում, որի անվան մեջ հայ. -աղ և -ան ածանցներն են:

Սաթարա: Բնակավայր Ախալցխայի գավառում: Տեղանվան վերջում հայ. -ար ածանցն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Սաթարի: Գյուղ Տրապիզոնի գավառում (տրբ. Սաթարիա), որի անվան վերջում նշված -ար ածանցն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Սաթեր: Բնակավայր Թումանյանի շրջանում:

Սաթի: Գյուղեր Հեքյարի և Դիարբեքիի գավառներում (տրբ. Սատի):

Սաթիդան: Բնակավայր Վանի շրջանում, որի անվան վերջում -ի- հոդակապով հին հայ. խան «իջևան, օթևան» արմատն է աղավաղված ձևով:

Սաթիքոյ: Գյուղ Կարսի գավառում: Տեղանվան վերջում թուրք. քյոյ «գյուղ» բառն է:

Սաթիքիկես: Բնակավայր Դերսիմում, որի անվան մեջ հայ. -իր, -իկ և -եք ածանցներն են:

Սաթման(ց): Գյուղ Վանի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -մն ածանցն է, որը անվան սեռական հոլովաձևում դառնում է -ման (հմմտ. ուսումն և ուսման):

Սատաղ: Գյուղ Դերսիմի գավառում (տրբ. Սատո):

Բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք իրենց կազմում ունեն մայր լեզվի սադ- արմատը «հանգրվան» իմաստով և դրա հայերեն սաթ- ու

սատ- տարբերակները, թերևս հուշում են, թե այդ բնակավայրերը լեռնաշխարհի առաջին նստակեցության օրրաններն են եղել:

ՍԵՂԱՆ: Գյուղ Սասունի Խուլփ գավառակում (ՀՏԲ):

Ներքոհիշյալ Սեղել, Սեղիխան և Սեղվի բնակավայրերի հետ համեմատելիս՝ պարզ է դառնում, որ այդ տեղանվան մեջ սեղ- բաղադրիչն է և հայ. -ախ ածանցը: Հայկական գրավոր աղբյուրներում սեղ- բառ չի հանդիպում: Կարծում ենք այն հնդեվրոպական նախալեզվի *sed-«նստել» արմատն է (Pok.):

Հիշենք Բիթլիսի գավառի Նիստ և Էրզրումի նահանգի Հասանկալայի գավառակի Նիստ բնակավայրերի անունները (ՀՏԲ), որոնք նստել բայի նիստ արմատից են կազմված, որը բացի «նստվածք, դիրք, զետեղման ձև» իմաստից նշանակում է նաև «կայան»՝ այսինքն «բնակվելու տեղ» (ՀԱԲ):

Տվյալ սեղ- արմատը «նստելու տեղ» իմաստով առանձնանում է նաև ներքև բերվող տեղանունների մեջ:

Սեղել: Բնակավայր Մակուի գավառում: Տեղանվան վերջում հայ. -եղ ածանցի հին -ել տարբերակն է:

Սեղեխին: Գյուղ Դիարբեքիի նահանգի Սլիվանի գավառում, որի անվան մեջ հայ. -եխ և -ին ածանցներն են:

Սեղերլի: Բնակավայր Արդանամադենի գավառում (տրբ. Սետերլի):

Սեղիգոյան: Գյուղ Վանի նահանգի Բերկրիի գավառում: Տեղանվան մեջ հայ. գոլ «տաք» բառն է -ի- հոդակապով և -յան ածանցը:

Սեղիխան: Բնակավայր Սլիվանի գավառում, որի անվան մեջ -ի- հոդակապով հին հայ. խան «իջևան, օթևան» արմատն է:

Սեղվի: Գյուղ Թումանյանի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -վի մասնիկն է:

Սայր լեզվի d հնչյունը հին հայերենում դարձել է նաև թ ու տ (Օս., էջ 298): Նշված սեղ- արմատը սեթ- և սետ- հայկական տարբերակներով մենք տեսնում ենք ստորև բերվող տեղանուններում:

Սեթ: Գյուղ Բալուի գավառակում:

Մեթանց: Բնակավայր Սյունիք նահանգի Սյուս Բաղք գավառում, որի անվան վերջում հայ. -անք ածանցն է:

Մեթգյուլ: Գյուղ Մուշի շրջանում: Տեղանվան մեջ նաև հայ. գոլ «տաք» բառն է քիչ աղավաղված:

Մեթե: Բնակավայր Սղերդի գավառում (տրբ. Մետե): Տեղանվան վերջում հայ. -է ածանցն է:

Մեթերի: Գյուղ Դերսիմի շրջանում:

Մեթիռնա: Բնակավայր Ուրմիայի շրջանում (տրբ. Մետիռնա), որի անվան վերջում -ի- հոդակապով հայ. -ոն ածանցն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Մեթիրկե: Գյուղ Դերսիմի գավառում: Տեղանվան մեջ հայ. -իր և -կի ածանցներն են:

Վերը բերված տեղանունները (ՀՀԲ), որոնք կազմված են մայր լեզվի սեղ- արմատից և դրա հայկական սեթ- և սետ- տարբերակներից «նստելու տեղ», բնակություն հաստատելու իմաստն ունեն:

ՄԵԼ: Գյուղ Վանի նահանգի Բաշկալայի գավառակում (ՀՏԲ):

Հին հայերենի սել «կազմել կամ դիր» հազվագյուտ գործածված արմատը կամ սել «երկնային մի երևույթ, ասույ» բառը (ՀԱԲ) իրենց իմաստով չէին կարող գործածվել որպես տեղանուն:

Ամենայն հավանականությամբ Մել տեղանունը հնդեվրոպական նախալեզվի *sel-«ապրելու տարածք» արմատն է (Pok.):

Այդ նույն ձևով հայերենի իրանականից փոխառյալ վան «բնակություն, բնակարան, օթևան» բառը գործածվել է որպես Վան քաղաքի, Ալիի շրջանի Վան, Գողթն գավառի Վան գյուղերի համար անուն (ՀՏԲ):

Մայր լեզվի սել- արմատը նշված իմաստով առանձնանում է նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Մել: Գյուղեր Վանի նահանգի Հեքյարի գավառում և Շատախի շրջանում:

Սասունի Մել լեռան և Մնձուրի Մել լեռնագագաթի անունները կոչվել են մոտի համանուն բնակավայրի անունով:

Մելալի: Բնակավայր Կուրաթլուի շրջանում:

Մելախանե: Գյուղ Վանի գավառի Բերկրիի շրջանում, որի անվան մեջ -ա- հոդակապով հին հայ. խան «իջևան, օթևան» արմատն է:

Մելախրամ: Բնակավայր Արտաշատի շրջանում (այժմ՝ Արտաշատի): Տեղանվան մեջ -ա- հոդակապով հին հայ. խրամ «պարսպի շուրջ փորված փոս» (ՀՄԲ) արմատն է:

Մելայ: Գյուղ Արդանամադենի գավառում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ա ցուցիչն է հին ձևով:

Մելանի: Բնակավայր Ուրմիայի գավառում:

Մելավան: Գյուղ Խոյի շրջանում:

Մելեկ: Բնակավայր Դերսիմի գավառում: Տեղանվան վերջում հայ. եկ բառն է:

Մելկան: Գյուղ Գենջի գավառում: Տեղանունը հայ. -կան ածանցով է:

Մելեմի: Բնակավայր Դիարբեքիրի գավառում, որի անվան վերջում հայ. -եմ ածանցն է և սեռական հոլովի -ի ցուցիչը:

Մելիք: Գյուղ Կարսի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ք ածանցն է (հմմտ. շեղ և շեղք):

Մելիխան: Բնակավայր Գենջի գավառում, որի անվան մեջ հին հայ. խան «իջևան» բառն է նաև:

Մելիկ: Գյուղ Գենջի շրջանում:

Մելիմ: Գյուղաքաղաք Վանի նահանգում, բերդ Վայոց ձորի գավառում, Էրզրումի շրջանում, գյուղեր Կարսի գավառում, Կադզվանի շրջանում: Դրանց անունը վերջանում է հայ. -իմ ածանցով: Լեռներն ու գետերը թերևս կոչվել են մոտի այդպես կոչվող բնակավայրի անունով:

Մելիսան: Բնակավայր Շատախի շրջանում: տեղանվան մեջ -ին և -ան ածանցներն են:

Մելիվան: Գավառ Դիարբեքիրի նահանգում:

Մելիվկե: Գյուղ Երզնկայի գավառում, որի անվան մեջ հայ. -իվ և -կի ածանցներն են:

Մելյագի: Բնակավայր Ջուլամերկի գավառակում: Տեղանվան մեջ հայ. -եակ ածանցն է բարբառային աղավաղումով:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), կազմված են մայր լեզվի սել-
«ապրելու տարածք» արմատով:

ՄԵՅԳԵՐ: Գյուղ Գորիսից 25 կմ հյուսիս (ՀՏԲ):

Երբ այդ տեղանունը համեմատում ենք ստորև բերվող Մեյգիրտ, Մեյիճան և Մեյվան հին բնակավայրերի անունների հետ, դրանում առանձնանում է սել բառը, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հիշատակված, և հայ. գեր «վեր, ավելի քան» բառը (ՀՄԲ):

Կարծում ենք այն հնդեվրոպական նախալեզվի *sei-«անձրև մաղել, կաթկթել» արմատն է (Pok.): Ի դեպ, մայր լեզվի երկբարբառները հին հայերենում նաև մնացել են նույնությամբ (ՀԼՊ, էջ 225):

Ուրեմն, Մեյգեր տեղանունը նշանակում է «շատ անձրևոտ բնակավայր»: Հիշենք Տրապիզոնի նահանգի Կաթլա, Հրազդանի շրջանի Կաթկաթ (այժմ՝ Ֆանտան) հին գյուղերի և Կաղզվանի Կաթիլք լեռան անունները (ՀՏԲ):

Մեյ- արմատը «անձրև մաղել, կաթկթել» իմաստով կարելի է տեսնել նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Մեյքալու: Գյուղ Շուշիի գավառում, որի անվան մեջ նաև հին հայ. բալ «մառախուղ, ամպ» բառն է (ՀՄԲ) և սեռական հոլովի -ու ցուցիչը:

Մեյգիրտ: Լեռներ Կոտուրի լեռնաշղթայում: Տեղանվան մեջ նաև հայ. -կերտ բառածանցն է:

Մեյիճան: Գյուղ Կարսի շրջանում, որի անվան վերջում -ի- հոդակապով հայ. -ճան ածանցն է (հմմտ. դավ և դավաճան):

Մեյիս: Բնակավայր Վանի գավառում: տեղանվան վերջում հայ. -նի հոգնակիակերտ ածանցն է և հին հոգնակի հայցականի -ս ցուցիչը:

Մեյսուլան: Գյուղ Արցախի Մարդակերտի շրջանում, որի անվան մեջ նաև հայ. սուլել «սուլել, շվացնել» բայի սուլան «սուլող» ձևն է (ՀՄԲ):

Մեյվան: Բնակավայր Խոյի գավառում:

Մեյտի: Գյուղեր Շուշիի և Կարսի գավառներում: Տեղանվան վերջում հայ. -տի հոգնակիակերտ մասնիկն է (հմմտ. մանուկ և մանկտի):

Բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք կազմված են մայր լեզվի սել-
«անձրև մաղել» արմատից, ցույց են տալիս տեղանքի անձրևոտ լինելը:

ՄԵՆ: Գյուղ Դերսիմի գավառում (ՀՏԲ):

Հայկական գրավոր աղբյուրներին հայտնի հին հայ. սեն «ցինկ, կապար» արմատը (ՀՄԲ) չէր կարող գործածվել որպես տեղանուն: Կարծում ենք Մեն տեղանվան մեջ պետք է տեսնել հնդեվրոպական մայր լեզվի seni- «առանձին, գատ» արմատը (Pok.): Մայր լեզվի բազմաթիվ բառերի վերջին ձայնավորը հին հայերենում թուլացել և ընկել է, քանի որ շեշտը հաստատվել է նախավերջին վանկի վրա (ՀԼՊ, էջ 228):

Այդ իմաստն ունեն Երզնկայի գավառի Ջատ, Ջատգեղ, Դերսիմի Ջատի, Բայազետի Ջատկան և Ալաշկերտի շրջանի Ջատո բնակավայրերի անունները (ՀՏԲ), որոնք ցույց են տալիս, թե բնակավայրը կտրված, մեկուսացված տեղում է գտնվում:

Նախալեզվի սենի- արմատը «գատ» իմաստով և սեն- ձևով հանդիպում է նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Մենակ: Գյուղեր Սուրմալուի և Բաբերդի շրջաններում:

Մենավ: Բնակավայր Շատախի շրջանում:

Մենե: Բնակավայր Բարձր Հայքի նահանգում:

Մենին: Գյուղ Շատախի գավառում:

Դրանցում հայ. -ակ, -ավ, -է և -ին ածանցներն են:

Մենսեն: Գյուղ Դիարբեքիի գավառում, որի անվան մեջ սեն- արմատը կրկնված է:

Այս տեղանունները (ՀՏԲ), որոնց հիմքում մայր լեզվի սեն-«գատ» արմատն է, ցույց են տալիս, թե այդ բնակավայրերը մյուսներից տարածաշրջանում կտրված են եղել:

ՄԵՐՊԻԼ: Գյուղ Վանի նահանգի Հեքյարի գավառում: (ՀՏԲ):

Երբ այս տեղանունը համեմատում ենք ներքև բերվող Մերպենի գյուղի անվան հետ, պարզ է դառնում, որ դրանում սերպ- բաղադրիչն է և հայ. -իլ ածանցը: Սակայն հայկական գրավոր աղբյուրներում նման

բառ չի հանդիպում: Կարծում ենք այն հնդեվրոպական նախալեզվի *serph-«սողալ» արմատն է (Pok.):

Հիշենք հայ. սողալ բայի սող- արմատով կազմված Բիթլիսի Սողած, Բայազետի Սողան, Սողանան, Ալաշկերտի շրջանի Սողան և շատ այլ հին տեղանուններ (ՀՏԲ), որոնք մեր կարծիքով նշում են բնակավայրերի գետնափոր՝ սողացող տների առկայությունը:

Սերպ- արմատը նշված իմաստով հանդիպում է նաև ստորև բերվող տեղանուններում:

Սերպեյ: Գյուղ Վանի նահանգի Հեքյարի գավառում (տրբ. Սերպիլ): Վերջինս հուշում է, թե տեղանվան մեջ հայ. -իլ ածանցն է:

Սերպինե: Գյուղ Բիթլիսի նահանգի Սղերդի գավառում:

Սերպիջա: Բնակավայր Արդանամադենի գավառում (տրբ. Սերփի-ջա): Տեղանվան վերջում հայ. -իճ ածանցն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Սերպիր: Գյուղ Սղերդի գավառում: Տեղանվան վերջում հայ. -իր մասնիկն է:

Բերված տեղանունները (ՀՏԲ) հուշում են, թե այդ բնակավայրերի տները գետնափոր են եղել:

ՄԻՂԱՆ: Գյուղ Սալմաստի գավառում (ՀՏԲ):

Ներքև բերվող Միդիկ, Միդյան և Միդեկան բնակավայրերի անուններն հետևաբար պարզ է դառնում, որ Միդան տեղանվան մեջ առանձնանում է սիդ- բաղադրիչը և հայ. -ան ածանցը: Հայկական գրավոր աղբյուրներում սիդ բառ չի հանդիպում:

Ամենայն հավանականությամբ այն հնդեվրոպական նախալեզվի *se(i)dh-«մի նպատակի, վերջի գնալ» արմատի է sīdh- տարբերակն է (Pok.): Նախալեզվի երկար ձայնավորները հին հայերենում այդ հատկանիշը կորցրել են և դարձել սովորական հնչյուններ (ՀԼՊ, էջ 225):

Տվյալ սիդ- արմատը «հանգրվան» իմաստով (տես Սադախ) հանդիպում է նաև ստորև բերվող տեղանուններում:

Միդան: Գյուղ Սալմաստի գավառում:

Միդիկ: Գյուղ Ուրմիայի գավառում:

Միդեկան: Բնակավայր Պարսկահայքում, Ուրմիայի շրջանում (տրբ. Միդեկան), որի անվան վերջում հայ. -իկ և -ան ածանցներն են:

Միդյան: Բնակավայր Բիթլիսի նահանգում, որի անունով կոչվել է մոտի լեռը՝ Միթիան:

Մայր լեզվի ժի հնչյունը հին հայերենում դարձել է նաև թ ու տ (ՕԿ., էջ 298): Այդ տարբերակներով սիդ- արմատը գործածված է հետևյալ տեղանուններում:

Միթական: Գյուղ Կադզվանի շրջանում:

Միթե: Բնակավայր Դիարբեքիրի գավառում: Տեղանվան վերջում հայ. -է ածանցն է:

Միտեմի: Գյուղ Երզնկայի շրջանում, որի անվան վերջում հայ. -եմի ածանցն է (հմմտ. վաղ և վաղեմի):

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք կազմված են մայր լեզվի սիդ- արմատից և դրա հայերեն սիթ- ու սիտ- տարբերակներից, թերևս վկայում են այն մասին, որ այդ գյուղերը հիմնվել են լեռնաշխարհում նստակեցության անցնելու ժամանակ:

ՄՈՒ: Գյուղ Մուշի գավառում (ՀՏԲ): Հին հայերենը սուլ բառ չի ունեցել: Ամենայն հավանականությամբ տվյալ տեղանվան մեջ հնդեվրոպական նախալեզվի *solo-«լավ վիճակում, ամբողջովին» արմատն է (Pok.), որի վերջին ձայնավորը հայերենում ընկել է, քանի որ շեշտը հաստատվել է նախավերջին վանկի վրա (ՀԼՊ, էջ 228):

Նույնպիսի իմաստ ունեն Կապանի Ողջի, Կոտայքի Ողջաբերդ, Ամասիայի Ողջի հին բնակավայրերի անունները (ՀՏԲ), որոնց հիմքում ընկած է հին հայերենի ողջ «առողջ, ամբողջ, անթերի» արմատը (ՀԱԲ):

Սուլ- արմատը սուլ- տարբերակով և «անթերի» իմաստով տեսնում ենք նաև ստորև բերվող տեղանուններում:

Սուլխա: Գյուղ Սուրմալուի գավառում, որի անվան վերջում հայ. -ախ ածանցն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Սուլակ: Բնակավայր Կոտայքի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ակ ածանցն է:

Սուլակլի: Գյուղ Տրապիզոնի գավառում, որի անվան վերջում նշված -ակ մասնիկից հետո հայ. լի բառն է:

Սուլիան: Բնակավայր Արդվինի շրջանում: Տեղանունը հայ. -յան ածանցն ունի:

Սուլուխ: Գյուղ Սուշի գավառում: Տեղանվան վերջում հին հայ. ուղիս «հեղեղ, հեղեղատ» արմատի ուխ տարբերակն է (ՀԱԲ):

Բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք կազմված են մայր լեզվի սուլ-արմատից «անթերի» իմաստով, վկայում են այդ բնակավայրերի անթերի կառուցվածք ունենալու մասին:

ՍՈՒԱՐԱՆՑ: Գյուղ Գորիսի շրջանում (տրբ. Սվարանց, ՀՏԲ): Երբ այդ տեղանունը համեմատում ենք ներքև բերվող Սուեր, Սուիր և Սուվաթ գյուղերի անունների հետ, պարզ է դառնում, որ դրանում սու- բառն է, որը հայկական գրավոր աղբյուրներում չի հանդիպում և հայ. -արան ածանցն է հոգնակի սեռական հոլովի -ց ցուցիչով:

Ենթադրում ենք, որ դա հնդեվրոպական մայր լեզվի *su-«անձրև» արմատն է (ИЯИ, էջ 679-680):

Այդ իմաստն ունի Քդիի գավառակի Անձրևիկ բնակավայրի անունը: Տվյալ սու-արմատը «անձրև» իմաստով կարելի է առանձնացնել նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Սուազարա: Գյուղ Արդվինի շրջանում, որի անվան մեջ -ա- հոդակապով հայ. -գար ածանցն է (հմմտ. խելք և խելազար) և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Սուանա: Բնակավայր Երզրումի գավառում: Տեղանվան վերջում հայ. -ան հոգնակիակերտ մասնիկն է և հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչը:

Սուարասը: Գյուղ Քաշաթաղի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -ար և -աք ածանցներն են: Վերջինս հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով է և ենթադրվող սեռականի -ի վերջավորությունը, որը դարձրել են ը:

Սուարի բերդ: Ամրոց Կարս քաղաքի մոտ:

Սուբաթան: Գյուղեր Կարսի, Վարդենիսի և Նախիջևանի շրջաններում, որոնց անվան մեջ նաև հին հայ. բաթ «միայն» բառն է (ՀԱԲ):

Սուվաթ: Բնակավայր Զանգեզուրում, որի անվան մեջ նաև հին հայ. վաթել «հոսեցնել» բայի արմատն է (ՀԱԲ):

Սուեր: Գյուղ Ալաշկերտի շրջանում:

Սուիր: Բնակավայր Բիթլիսի գավառում: Տեղանվան մեջ հայ. -իր ածանցն է (հմմտ. երկիր և երկինք):

Բերված տեղանունները (ՀՏԲ), կազմված են մայր լեզվի սու-«անձրև» արմատով և մատնանշում են գյուղերի անձրևոտ լինելը:

ՍՈՒՄ: Գյուղ Արցախ նահանգի Շուշիի գավառում (ՀՏԲ):

Հայկական գրավոր աղբյուրներում սուս- բառ չի հանդիպում: Կարծում ենք այն հնդեվրոպական նախալեզվի *sus-«չոր» արմատն է (ИЯИ, էջ 598):

Այդպիսի իմաստ ունեն Խոյի գավառի Չորս (հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով), Երզնկայի Չորս, Խարբերդի Չորս և Ապարանի շրջանի Չորուտ բնակավայրերի անունները (ՀՏԲ): Մայր լեզվի սուս- արմատը «չոր» իմաստով մենք տեսնում ենք նաև ներքև բերվող տեղանուններում:

Սուսա: Գյուղեր Դիարբեքիի նահանգի Սիվանի և Երզնկայի գավառներում, որոնց անվան վերջում հայ. սեռական հոլովի -ա ցուցիչն է:

Սուսալան: Բնակավայր Շուշիի գավառում: Տեղանվան մեջ հայ. -ալ ածանցի հին -ալ տարբերակն է և -ան հոգնակիակերտ մասնիկը:

Սուսան: Գյուղ Բիթլիսի նահանգի Սղերդի գավառում: Տեղանվան վերջում հայ. -ան ածանցն է:

Սուսանի: Ավերակ գյուղ Կապանի շրջանում և լեռնաբազուկ Բարգուշատի լեռնաշղթայում: Տեղանվան վերջում հայ. -անի ածանցն է:

Սուսանց: Բերդ Սասունում և համանուն գյուղ, որի անվան վերջում հայ. -անք ածանցն է հոգնակի սեռականի հին -ց ցուցիչով:

Սուսինց: Բնակավայր Խոտորջուրի գավառում:

Սուսիխան: Գյուղ Շարուրի գավառում, որի անվան մեջ հին հայ. խան «իջևան, օթևան» արմատն է:

Սուսնակ: Բնակավայր Կապանի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -նակ ածանցն է (հմմտ. աղջնակ, խոսնակ, տղանակ):

Սուսուգ: Գյուղեր Կարսի, Սակուի, Մալաթիայի գավառներում և Կաղզվանի, Թալինի, Օլթիի շրջաններում, որոնց անվան մեջ նաև հայ. ուզել բայի ուզ- արմատն է «ցանկալի» իմաստով:

Սուսուա: Բնակավայրեր Էջմիածնի գավառում և Թալինի ու Օլթիի շրջաններում: Տեղանվան վերջում հայ. -ուք ածանցն է հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք հիմքում մայր լեզվի սուս- «չոր» արմատն է, մատնանշում են նշված գյուղերի չոր տարածք ունենալը:

S

SUSQ: Գյուղեր Բիթլիսի և Շուշիի գավառներում (ՀՏԲ):

Հայկական գրավոր աղբյուրներում տազ- բառ չի հանդիպում: Ամենայն հավանականությամբ այդ տեղանվան մեջ հնդեվրոպական նախալեզվի *tag-«վերցնել, բռնել» արմատն է (Pok.), որից Գ. Ջահուկյանը բխեցնում է հայ. թակարդ բառը (ՀՄԲ):

Այդպիսի իմաստ ունեն Սասունի Բոնաշեն և Սոկսի շրջանի Բոնաշեն գյուղերի անունները (ՀՏԲ, տես Ջեմ), որոնք հուշում են մարդկանց թակարդով որս կատարելու մասին:

Մայր լեզվի տազ- արմատը «բռնել» իմաստով գործածված է նաև ստորև բերվող տեղանուններում:

Տազալի: Գյուղ Վանի գավառում, որի անվան վերջում հայ. -ալի ածանցն է:

Տազակենդ: Բնակավայր Կարսի շրջանում: Տեղանվան մեջ -ա- հոդակապով հին հայ. կենդանի բառի կենդ- արմատը (ՀՄԲ), որը, թերևս,

հաստատում է մեր կարծիքը, որ այս տեղանունները մատնացույց են անում թակարդով վայրի կենդանիներ մարդկանց կողմից որսալը:

Տազամայր: Գյուղ Սյունիքի Բաղք-Աճանան գավառում (որբ. Տազամար): Տեղանվան մեջ հայ. ամ-«լի» (հմմտ. ամալ «լցնել» ՀՄԲ) և այր «մարդ» բառերն են (ՀՄԲ): Տեղանունը, թերևս, նշանակում է «թակարդով շատ մարդիկ»:

Տազանատապախ: Լեռ Խաղտիքում, որի անվան մեջ հայ. -ան հոգնակիակերտ ածանցն -ա- հոդակապով տափ «հարթ» բառը և -աք մասնիկը հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Տազասեր: Գյուղ Արցախ նահանգի Հաղրուբի շրջանում, որի անունը նշանակում է «թակարդ սիրող»:

Տազասիբ: Բնակավայր Շուշիի գավառում: Տեղանունը ունի «թակարդ սիրող» իմաստը:

Տազավանկ: Գյուղ Սասունում (տորբ. Թազավանք): Տեղանվան մեջ հին հայ. վան «բնակություն, օթևան» բառն է -ա- հոդակապով և -ք ածանցը աղավաղված:

Տազավարտ: Բնակավայր Շուշիի գավառում, որի անվան մեջ հայ. ավարտ «վերջ, ծայր» բառն է (ՀՄԲ):

Տազար: Գյուղ Դերսիմի գավառում: Տեղանվան վերջում -ար ածանցն է:

Տազիկ: Բնակավայր Հեքյարի գավառում:

Տազիտ: Գյուղ հին Երևանի մարզում, որի անվան վերջում հայ. -իտ մասնիկն է:

Տազլը: Բնակավայր Զանգեզուրում (տորբ. Տազլու):

Տազլիջան: Գյուղ Բայազետի գավառում: Տեղանվան մեջ հայ. -լի բառն է և -ճան ածանցի -ջան տարբերակը:

Տազնիկ: Բնակավայր Լազիստանի գավառում (տորբ. Թազնիկ), որի անվան մեջ հայ. -նի և -իկ մասնիկներն են:

Տազսպար: Գյուղ Շատախի գավառում (տորբ. Թազսպար): Տեղանվան մեջ նաև հին հայ. սպառ (ՀՄԲ) բառն է: Այն նշանակում է «սպառիչ թակարդներով բնակավայր»:

Տագվերաւն: Բնակավայր Խնուսի գավառում, որի անվան մեջ հայ. վեր «վերն, վերի ծայր» բառն է և -ան հոգնակիակերտ ածանցը: Այն նշանակում է «շատ թակարդներ ունեցող»:

Տագվերս: Գյուղ Շատախի գավառակում:

Տագվու: Բնակավայր Սասունում, որի անվան վերջում հայ. -վի ածանցն է -ու սեռական հոլովի ցուցիչով:

Տագրի: Գյուղ Տրապիզոնի գավառում: Տեղանվան վերջում հայ. -րի ածականակերտ ածանցն է (հմմտ. բերք և բերրի):

Տագու: Բնակավայր Էրզրումի շրջանում:

Սայր լեզվի t հնչյունը հին հայերենում դարձել է նաև թ, իսկ g-ն՝ նաև կ (ՀԼՊ, էջ 253 և ՕԿ., էջ 298):

Տագ- արմատը այդ տարբերակներով մենք տեսնում ենք ներքոհիշյալ տեղանուններում:

Թագառու: Հրազդանի աջակողմյան Մարմարիկ վտակի ձախ օժանդակը, որի անվան մեջ նաև հայ. առու բառն է:

Թագիր: Գյուղ Շուշիի գավառում: Տեղանվան վերջում հայ. -իր ածանցն է:

Թակե: Բնակավայր Դերսիմի շրջանում:

Թակիս: Գետ, որն հոսում է Ախալցխայի տարածքով: Տեղանվան վերջում հայ. -իք ածանցն է և հին հայցական հոլովի -ս ցուցիչը:

Թակու: Լեռ Հայկական Տավրոսում:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք կազմված են մայր լեզվի տազ- արմատից և դրա հայկական տարբերակներից, մատնանշում են նշված բնակավայրերում մարդկանց թակարդով որս անելը:

SUL: Գյուղ Վանի նահանգի Հեքյարի գավառում (ՀՏԲ): Հին հայերենի տալ «ամուսնու քույր» և տալ «տալ, հանձնել» բառերը (ՀՄԲ) չէին կարող գործածվել որպես տեղանուն իրենց ունեցած իմաստների պատճառով:

Ուստի, կարծում ենք, Տալ բնակավայրի անունը հնդեվրոպական նախալեզվի *tāl-«աճել, կանաչել» արմատն է (տես ՀՄԲ, թաղթ): Սայր

լեզվի երկար ձայնավորները հին հայերենում այդ հատկանիշը կորցրել են և դարձել սովորական հնչյուններ (ՀԼՊ, էջ 225):

Վերը նշված «կանաչ» իմաստն ունեն Վայոց ձոր գավառի Կանաչավոր, Շուշիի Կանաչթալա և Աշտարակի շրջանի Կանաչուտ բնակավայրերի անունները (ՀՏԲ):

Նախալեզվի տալ- արմատը այդ իմաստով գործածված է նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Տալա: Գյուղ Տավուշի շրջանում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ա ցուցիչն է:

Տալախետ: Լեռ Ճորոխի ստորին հոսանքի աջ կողմում: Տեղանվան մեջ հայ. -ախ և -ետ ածանցներն են:

Տալակենդ: Գյուղ Իջևանի շրջանում (այժմ՝ Գետահովիտ), որի անվան մեջ -ա- հոդակապով հայ. կենդանի բառի կենդ- արմատն է:

Տալանա: Գյուղ Վանի նահանգի Հեքյարի գավառում, որի հորջորջման մեջ հայ. -ան հոգնակիակերտ մասնիկն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Տալասավան: Ավերակ բնակավայր Սուրմալուի շրջանում (տրբ. Թալասավան): Տեղանվան մեջ հայ. -աք ածանցն է հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով և ավան բառը:

Տալասել: Գյուղ Սուշի շրջանում, որի անունը վերը նշված -աք ածանցը և ապա՝ -ել մասնիկն ունի իր մեջ:

Տալավեր: Բնակավայրեր Կարսի և Վանի գավառներում: Տեղանվան մեջ -ա- հոդակապով վեր բառն է: Այն նշանակում է «գերկանաչ»:

Տալարդաջ: Գյուղ Ալեքսանդրապոլի գավառում, որի անվան մեջ հին հայ. -արդ «ձև» (ՀՄԲ) բառն է և -աշ ածանցը:

Տալարս: Բնակավայր Բիթլիսի գավառում: Տեղանվան մեջ հայ. -ար ածանցն է և հին հոգնակի հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչը:

Տալետուր: Գյուղ Սուշի շրջանում, որի անվան մեջ -ե- հոդակապով հին հայ. սոր «ծակ, խոռոչ, փոս» բառն է (ՀՄԲ):

Տալին: Գյուղ Ուրմիայի գավառում, որի անվան վերջում հայ. -ին ածանցն է:

Տալիշ: Բնակավայրեր Արցախի Մարդակերտի (տրբ. Թալիշ) և Էջմիածնի շրջաններում:

Տալիս: Լեռ Խոնավ լեռներում: Տեղանվան վերջում հայ. -իտ ածանցն է:

Տալոնա: Գյուղ Վանի նահանգի Հեքյարի գավառում, որի հորջորջման վերջում հայ. -ոն ածանցն է և ապա՝ սեռականի -ա ցուցիչը:

Տալոթ: Բնակավայր Սասունում: Տեղանունը -որ ածանցով է:

Տալվաթ: Գյուղ Լազիստանի շրջանում: Տեղանվան մեջ հայ. վաթել, «դուրս թափել» բայի վաթ- արմատն է:

Տալվարդա: Գյուղ Բիթլիսի նահանգի Գենջի գավառում, որի անվան մեջ նաև հայ. վարդ բառն է և ապա՝ սեռական հոլովի -ա ցուցիչը:

Տալվեր: Բնակավայրեր Մուշի շրջանում և Շիրակում: Տեղանվան մեջ նաև հայ. վեր բառն է: Այն նշանակում է «գերկանաչ»:

Տալվորիկ: Գյուղ Սասունի Խուլփ գավառակում: Այն ունի «կանաչավոր բնակավայր» իմաստը:

Տալուտ: Լեռնագագաթ Խոնավ լեռներում:

Մայր լեզվի t հնչյունը հին հայերենում դարձել է նաև թ (ՀԼՊ, էջ 253): Տալ- արմատի թալ- տարբերակը հանդիպում է նաև ներքև բերվող տեղանուններում:

Թալ: Գյուղ և գետ Հեքյարի գավառում:

Թալա: Գյուղ Իջևանի շրջանում:

Թալասավան: Բնակավայր Շարուրի գավառում (տես Տալասավան):

Թալարիս: Գյուղ Ապահունիք գավառում, որի անվան մեջ հայ. -ար և -իք ածանցներն են:

Թալենձոր: Բնակավայր Մուշի շրջանում:

Թալի: Գյուղ Բիթլիսի նահանգի Սղերդի շրջանում: Տեղանվան վերջում հայ. սեռական հոլովի -ի ցուցիչն է:

Թալին: Գյուղ, բերդ Թալինի շրջանում, որի անվան վերջում հայ. -ին ածանցն է:

Թալյան: Լեռ Վայքի լեռներում, որի անվան մեջ հայ. -յան ածանցն է:

Թալո: Բնակավայր Էրզրումի գավառում:

Թալոնա: Գյուղ Վանի նահանգում, որի անվան մեջ հայ. -ոն ածանցն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Թալոթ: Բնակավայր Վանի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -որ ածանցն է:

Թալոթի: Գյուղակ Մուշի գավառում: Տեղանվան մեջ վերը նշված -որ մասնիկն է և սեռական հոլովի -ի ցուցիչը:

Թալու: Բնակավայր Մուշի գավառում: Տեղանունը սեռական հոլովի -ու ցուցիչով է:

Թալուստա: Լեռ Հայկական պար լեռնաշղթայում, որի անվան վերջում հայ. -ուստ ածանցն է (հմտ. գալուստ, հագուստ) և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Թալուտ: Գյուղ Կիսկիմի գավառակում:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ) մատնանշում են այդ գյուղերի ու լեռների կանաչ լինելը:

SUՅ: Գյուղ Արճեշ քաղաքի մոտ (ՀՏԲ): Հայկական գրավոր աղբյուրներում տայ- բառ չի հանդիպում: Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *tə-«հալել» արմատի tǝi- տարբերակն է (Pok.):

Տեղանքի այդպիսի բնութագիր են տալիս Մոկսի շրջանի Հալալի, Գուգարք նահանգի Հալավար, Գորիսի Հալիձոր և այլ բնակավայրերի անուններ (ՀՏԲ), որոնք թերևս հուշում են նշված տեղերում զարնանը ձնհալքի ավելի շուտ սկսվելու մասին:

Տայ- արմատը «հալք» իմաստով մենք տեսնում ենք նաև ներքև բերվող տեղանուններում:

Տայակալա: Լեռ Չղրդի լեռնաշղթայում (տրբ. Թայակալա): Տեղանվան մեջ նաև հին հայ. կալ «բռնելու գործողություն» բառն է (ՀԱԲ) և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Տայակայա: Լեռ Փամբակի լեռնաշղթայում (տրբ. Թայակայա): Տեղանվան մեջ նաև հին հայ. կայ «կայան, տեղ» արմատն է (ՀԱԲ):

Տայար: Գյուղեր Էրզրումի և Բիթլիսի գավառներում (տրբ. Թայար): Տեղանվան վերջում հայ. -ար ածանցն է:

Տայշող: Բնակավայր Ռշտունիք գավառում, որի անվան վերջում հայ. շող բառն է:

Տայոց քար: Բերդ Ճորոխի ավազանի արևելյան հատվածում:

Բերված տեղանունները (ՀՏԲ) մատնանշում են, որ հիշյալ տեղերում զարնանը ձյան հալքը շուտ է սկսվում:

ՏԵՆ: Գյուղ Նախիջևանի գավառում (ՀՏԲ):

Հին հայերենի տեր «տեր, մեծ, իշխան» բառը, որը տի «մեծ» և այր «մարդ» բառերի միացությունն է (ՀՏԲ), չէր կարող տեղանքը բնորոշող տեղանուն դառնալ:

Ավելի հավանական է, որ տվյալ Տեր տեղանվան մեջ հնդեվրոպական նախալեզվի *ter-«սրբել, մաքրել» արմատն է (Pok.) «սուրբ, մաքուր» իմաստով:

Այդպիսի իմաստ ունեն Վանի նահանգի Կարճկանի գավառակի Սուրբ, Էրզրումի գավառի Սուրբ, Կաղզվանի շրջանի Սրբազան, Բայազետի Սուրբազան (հայ. -ական ածանցն է բարբառային հնչմամբ) և Հրազդանի Մաքրավան գյուղերի անունները (ՀՏԲ):

Տվյալ տեր- արմատը «սուրբ, մաքուր» իմաստով հանդիպում է նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Տերալի: Գյուղ Բիթլիսի գավառում, որի անվան վերջում հայ. -ալի և -իկ ածանցներն են:

Տերակ: Բնակավայր Գենջի գավառում:

Տերան: Գյուղ Դերսիմի շրջանում:

Տերաշ: Բնակավայր Սուշի գավառում:

Տերելի: Գյուղ Տրապիզոնի շրջանում:

Տերի: Բնակավայր Քաշաթաղի շրջանում և շրջան Հեքյարի գավառում, որոնց անվան վերջում հայ. սեռական հոլովի -ի ցուցիչն է:

Տերիկ: Գյուղեր Սուշի շրջանում և Բայազետի ու Սալմաստի գավառներում:

Տերիկշեն: Բնակավայր Կապանի շրջանում (տրբ. Թերիքշեն):

Տերիմ: Գյուղ Սղերդի գավառում, որի անվան վերջում հայ. -իմ ածանցն է:

Տերիք: Բնակավայրեր Սուշի, Բայազետի և Դիարբեքիրի գավառներում:

Տրի: Գյուղ Սյունիք նահանգի Կովսական գավառում, որի անունը տեր- արմատի տրի տարբերակից է:

Տրիդից: Մեհյան Արագածոտն գավառում, որի անվան մեջ հին հայ. «դից հեթանոսական աստվածներ» բառն է հոգնակի սեռական հոլովի -ց ցուցիչով:

Տրիկ: Բնակավայր Սղերդի գավառում:

Մայր լեզվի t հնչյունը հին հայերենում դարձել է նաև թ (ՀԼՊ, էջ 253):

Տեր- արմատը հայկական թեր- տարբերակով հանդիպում է ստորև բերվող տեղանուններում:

Թերակ: Գյուղ Խարբերդի նահանգի Ճապաղ ջրի շրջանում:

Թերաքոյ: Բնակավայր Խնուսի գավառակում:

Թերթեր: Գետ Կուրի ավազանում: Տեղանունը թեր- արմատի կրկնությամբ է: Դա Թարթառի անունն է:

Թերի: Գյուղ Զանգեզանի շրջանում և շրջան Հեքյարի գավառում, որոնց անվան վերջում հայ. սեռական հոլովի -ի ցուցիչն է:

Թերորան: Գյուղակ Հեքյարի շրջանում, որի անվան մեջ նաև հայ. որան, «որանների դեզ կալսելու համար հավաքված» բառն է (ՀՏԲ):

Թերուկ: Բնակավայր Բիթլիսի գավառում:

Բերված տեղանունները (ՀՏԲ), կազմված մայր լեզվի տեր-«մաքուր, սուրբ» արմատից և դրա հայերեն թեր- տարբերակից, մատնանշում են այդ բնակավայրերի մաքրությունը:

ՏՈՒՆԵՔ: Գյուղ Էրզրումի գավառում (ՀՏԲ):

Ստորև բերվող Տոլարա, Տոլգոմ և Տոլոշ հին բնակավայրերի անունների հետ համեմատելիս պարզվում է, որ այդ տեղանվան մեջ առանձնանում է տոլ- բառը, որը հայկական զրավոր աղբյուրներին անծանոթ է և -ենի ածանցը:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *tol-«հարթ» արմատն է (ՀՄԲ, տես թալ և Pok., տրբ. tel):

Տեղանքի նման հատկանիշ են ներկայացնում Բաբերդի գավառակի Հարթ, Դերսիմի Հարթիվ, Սասունի Հարթք բնակավայրերի անունները (ՀՏԲ):

Մայր լեզվի տոլ- «հարթ» արմատը կարելի է տեսնել նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Տոլաղբաշ: Գյուղ Մուշի գավառում, որի անվան վերջում հայ. -աղբ բառն է «պարարտ» իմաստով և -աշ ածանցը:

Տոլանտապ: Լեռ Կարսի բարձրավանդակում (տրբ. Թոլանտապ), որի անվան մեջ -ան ածանցից հետո հայ. տափ «հարթ» բառն է (ՀՄԲ):

Տոլարա: Գյուղ Միսիանի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ար ածանցն է նաև սեռական հոլովի -ա ցուցիչը:

Տոլգոմ: Բնակավայր Արդվինի շրջանում (տրբ. Թոլգոմ): Տեղանունը նշանակում է «հարթ տեղում գտնվող գոմ»:

Տոլենք: Գյուղ Էրզրումի գավառում:

Տոլոնաև: Լեռ Վայքի լեռնաշղթայում, որի անվան վերջում հայ. -ոն և -ան ածանցներն են:

Տոլոշ: Բնակավայր Ախալցխայի գավառում: Տեղանվան վերջում -ոշ ածանցն է:

Տոլոշենց: Գյուղ Խոտորչրի շրջանում (տրբ. Թոլոշենց):

Տոլով: Գյուղ Մուշի գավառում (տրբ. Թոլով):

Տոլորս: Բնակավայր Միսիանի շրջանում, որի անվան մեջ հայ. -որ ածանցն է հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Տոլք: Գյուղ Արտաշատի շրջանում (այժմ՝ Ջրաշեն վերին):

Բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք իրենց հիմքում ունեն մայր լեզվի տոլ-«հարթ» արմատը, ցույց են տալիս, որ այդ գյուղերի տարածքները և լեռների լանջերը հարթ են:

ՏՈՐԵՆՑ: Գյուղ Շատախի գավառակում (ՀՏԲ):

Ներքև բերվող Տորախան, Տորի և Տորոս տեղանունների հետ համեմատելիս տեսնում ենք, որ այդ տեղանվան մեջ առանձնանում է տոր-բաղադրիչը և հայ. -ենք ածանցը: Հայկական գրավոր աղբյուրներում տոր- բառ չի հանդիպում:

Ամենայն հավանականությամբ դա հնդեվրոպական նախալեզվի *tor-«նախընտրելի» արմատն է (Pok.):

Այդպիսի բնութագիր են տալիս տեղանքին Վանի գավառի Լավար (-ար ածանցով), Ջուլֆայից մոտ 16կմ հարավ-արևելք գտնված Լավերջան և Թորթումի գավառակի Լավձոր հին բնակավայրերի անունները (ՀՏԲ):

Մայր լեզվի տոր- արմատը «լավ» իմաստով կարելի է տեսնել նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Տորախան: Գյուղ Մուշի գավառում (տրբ. Տորոխան), որի անվան մեջ -ա- հոդակապով հին հայ. խան «իջևան» արմատն է (ՀՄԲ):

Տորի: Բնակավայր Վանի նահանգի Հեքյարի գավառում: Տեղանվան վերջում հայ. սեռական հոլովի -ի ցուցիչն է:

Տորնիք: Գյուղ Սյունիքի Ծղուկ գավառում, որի անվան վերջում հայ. -նի և -ք մասնիկներն են:

Տորոս: Դերսիմի գավառը երբեմն այդպես է կոչվել: Տեղանվան վերջում հայ. -ոք ածանցն է:

Տորուզ: Լեռ Շատախի շրջանում, որի անվան մեջ նաև հայ. ուզել բայի ուզ- արմատն է «ցանկալի» իմաստով:

Տորունք: Գյուղ Միսիանի շրջանում:

Մայր լեզվի t հնչյունը հին հայերենում դարձել է նաև թ (ՀԼՊ, էջ 253): Տոր- արմատի թոր- տարբերակը առկա է նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Թորաեղք: Բնակավայր Տրապիզոն քաղաքից մոտ 45կմ հարավ-արևելք: Տեղանվան մեջ -ա- հոդակապով հայ. ելք «ընթացք» բառն է: Այն նշանակում է «լավ ընթացք ունեցող բնակավայր»:

Թորլու: Շրջան Մուշի գավառում, որի հորջորջման մեջ հայ. լի «լի» բառն է սեռական հոլովաձևով:

Թորխանի: Գյուղ Բայազետի գավառում: Տեղանվան վերջում հին հայ. խան «իջևան» արմատն է:

Թորոնքսուզ: Բնակավայր Բաբերդի շրջանում: Տեղանվան մեջ հայ. -ոնք ածանցն է և սուզվել բայի սուզ- արմատը:

Թորուլ: Գյուղ Շարուր գավառում: Տեղանվան մեջ հայ. -ուլ ածանցն է (հմմտ. կուճի «փոքր» և կուճուլ):

Թորուն: Բնակավայր հին Երևանի գավառում:

Թորուս: Գյուղատեղի Արցախի Մարդակերտի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ուք ածանցն է:

Թորուտ: Բնակավայր Դերսիմի գավառում:

Այս տեղանունները (ՀՏԲ), կազմված մայր լեզվի տոր-«նախընտրելի» արմատից և դրա հայերեն թոր- տարբերակից, մատնանշում են տեղանքի լավ դիրք կամ բնություն ունենալը:

ՏՈՒՄ: Գյուղ Տարոն գավառում (ՀՏԲ):

Հին հայկական գրավոր աղբյուրներում տում- բառ չի հանդիպում:

Հավանաբար այն հնդեվրոպական նախալեզվի *tum-«թումբ» արմատն է (ՀԱԲ, թումբ):

Հիշենք Մուշի գավառի Բլուր, Սղերդի Բլուր, Երզնկայի Բլուր, Բաբերդի շրջանի Բլուր և Սպերի Բլուր տեղանունները (ՀՏԲ), որոնք հուշում են, թե բնակավայրը կառուցված է բլրի վրա:

Նախալեզվի տում- արմատը «թումբ» իմաստով կարելի է առանձնացնել նաև ստորև բերվող տեղանուններում:

Տումա: Գյուղ Շուշիի գավառում (այժմ՝ Տումի Հաղորթի շրջանում):

Տուման: Բնակավայրեր Ջավախքում, Գուգարքի նահանգի Բողնոփոր և Սալմաստի գավառներում ու Խնուսի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ան հոգնակիակերտ մասնիկն է:

Տումարդո: Բնակավայր Ջավախքում, որի անվան մեջ հին հայ. արդ «ձև» բառն է և սեռական հոլովի -ո ցուցիչը:

Մայր լեզվի t հնչյունը հին հայերենում դարձել է նաև թ (ՀԼՊ, էջ 253): Տում- արմատը թում- տարբերակով մենք տեսնում ենք ստորև բերվող տեղանուններում:

Թում: Գյուղեր Բիթլիսի նահանգի Խիզանի, Մուշի, Վանի գավառներում և Արցախի Հաղորթի շրջանում:

Թումա: Բնակավայր Դերսիմի գավառում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ա ցուցիչն է:

Թուման: Գյուղ Սալմաստի շրջանում: Տեղանվան վերջում -ան ածանցն է:

Թումաս: Լեռ Արցախում, որի անվան վերջում հայ. -աք ածանցն է և հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչը:

Թումեյ: Բնակավայր Բաբերդի գավառակում: Տեղանվան վերջում հայ. -եյ ածանցի հին -ել տարբերակն է:

Թումուր: Գյուղ Դերսիմի շրջանում: Տեղանունը հայ. -ուր ածանցով է:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ) մատնացույց են անում, որ այդ բնակավայրերը բլուրների վրա են կառուցված:

ՏՈՒՐ: Հանքային աղբյուր Արցախում, Շուշիից 27կմ հեռու (ՀՏԲ):

Հին հայերենի ունեցած տուր «հիվանդության ժամանակ քաղցած մնալը» և տուրկան «պատգամավոր» արմատները (ՀԱԲ) չէին կարող գործածվել որպես տեղանուն իրենց ունեցած իմաստների պատճառով:

Ուստի, կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի tuer-«բռնել, որսալ» արմատի tur-տարբերակն է (Pok.):

Այդպիսի իմաստ ունեն Սասուն գավառի Բոնաշեն, Մոկս գավառակի Բոնաշեն, Աղբակի Որսիքանք (-իր և -անք ածանցներով), Կորճեք նահանգի Որսիքանք հին բնակավայրերի անունները (ՀՏԲ): Դրանք հուշում են, թե տվյալ բնակավայրերի մարդկանց զբաղմունքը հիմնականում որսն է եղել:

Տվյալ տուր- արմատը «որս» իմաստով առկա է նաև ներքև բերվող տեղանուններում:

Տուրա: Գետ փոքր Ջարի ավազանում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ա ցուցիչն է: Այն նշանակում է «գետ, որի ջրերում ձուկ են որսում»:

Տուրաբաղ: Գյուղ Արցախ նահանգի Քաշաթաղի շրջանում (տրբ. Թուրապատ): Վերջինս հուշում է, որ այդ տեղանվան մեջ հայ. պատ բառն է «շրջան» իմաստով (ՀԱԲ): Այն հետո են փոխարինել օտար բաղարմատով:

Տուրաբերմարգի: Լեռնագագաթ Ջուլամերկ քաղաքից 30կմ հարավ-արևելք: Տեղանվան մեջ հայ. բեր և մարգ «խոտավետ տեղ» բառերն են (ՀԱԲ): Այն նշանակում է «որսաբեր և խոտավետ սար»:

Տուրան: Բնակավայր Մուշի գավառում: Տեղանունը հայ. հոգնակիակերտ -ան ածանցով է:

Տուրի: Գյուղեր էրզրումի գավառում և Օլթիի շրջանում (նաև տեղի գետն է այդպես կոչվել):

Տուրյան: Բնակավայր և համանուն գետ Մակուի շրջանում (տրբ. Թուրյան):

Տուրնի: Գյուղ Սդերդի շրջանում:

Տուրոտան: Գետակ: Թարթառի աջ օժանդակը, որի անվան վերջում հայ. -ոտ և -ան ածանցներն են:

Տուրա: Բնակավայր Ջավախքում, որի անվան վերջում հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչն է:

Տուրտուր: Գետ Կուրի ավազանում (տրբ. Թուրթուր): Տեղանունը տուր- արմատի կրկնությամբ է:

Տուրունկալե: Գյուղ Բիթլիսի գավառում, որի անվան վերջում հայ. -ուն ածանցն է և կալ «բռնելու գործողություն» բառը (ՀԱԲ):

Մայր լեզվի տ հնչյունը հին հայերենում դարձել է նաև թ (ՀԼՊ, էջ 253): Ներքոհիշյալ տեղանուններում առկա է տուր- արմատի հայերեն թուր- տարբերակը:

Թուր: Գյուղ Խարբերդի նահանգում և լեռ Եղեգնաձորի շրջանում:

Թուրաբի: Գյուղեր Սուրմալուի, Լաչինի և Շուշիի շրջաններում, որոնց անվան վերջում -ա- հոդակապով հայ. -բի ածանցն է (հմմտ. արամբի, կանամբի):

Թուրմա: Բնակավայր Կարսի շրջանում: Տեղանվան վերջում հին հայ. մայեակ «շտեմարան, մի բանի շատ գտնված տեղ» բառի մա- արմատն է (ՀԱԲ):

Թուրուխ: Գյուղ Ջավախքում, որի անվան վերջում հայ. -ուղխ «առատ հոսող ջուր» արմատի ուխ- տարբերակն է (ՀԱԲ):

Թուրուն: Բնակավայր Սադարակի դաշտում: Տեղանվան վերջում հայ. ածականակերտ -ուն ածանցն է:

Թուրուսլու: Լեռ Ղազախի գավառում, որի անվան վերջում հայ. -ուք ածանցն է հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով և թուրքերի ավելացրած -լու մասնիկը:

Թրաբի: Գավառ և տեղի համանուն գետ Պարսկահայքում, որի անունը Թուրաբիի կրճատված ձևն է (տես վերևում):

Բերված տեղանունները (ՀՏԲ) մատնանշում են այդ բնակավայրերի, լեռների որսով, իսկ գետերի ձկներով հարուստ լինելը:

ՈՒ

ՈՒՂԱՍՏԵՍՊԵՍ: Լեռներ Հայկական Տավրոսի արևելյան հատվածում, Վանա լճից հարավ-արևելք (ՀՏԲ):

Երբ այդ տեղանունը համեմատում ենք ներքև բերվող Ուղե և Ուղելի գյուղերի անունների հետ, պարզվում է, որ դրանում առկա է ուղ- բառը, որը հայկական գրավոր աղբյուրներին անծանոթ է, և հայ. -աք ածանցը հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով և թերևս էսպես (այսպես) ուշ ժամանակներում ավելացված դերանունը:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի նժ-«վեր, վերև» արմատն է (Pok.):

Այդպիսի իմաստ ունեն Տարոն գավառի Վերս (հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով), Մոկսի գավառակի Վերս, Ալաշկերտի

շրջանի Վերեթեք (-եթ և -եք ածանցներով), Տրապիզոնի գավառի Վերան (-ան ածանցով), Օլթիի շրջանի Վերան և Արդահանի Վերանա հին բնակավայրերի անունները (ՀՏԲ):

Ուղ- արմատը «վեր» իմաստով հանդիպում է նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Ուղե: Գյուղ Ախալցխայի գավառում: Տեղանվան վերջում հայ. -է ածանցն է:

Ուղեղի: Բնակավայր վերը նշված շրջանում, որի անվան վերջում հայ. -ելի ածանցն է:

Մայր լեզվի d հնչյունը հին հայերենում դարձել է նաև տ ու թ (ՕԿ., էջ 298):

Տվյալ ուղ- արմատը ուտ- և ութ- տարբերակներով մենք տեսնում ենք ներքոհիշյալ տեղանուններում:

Ութա: Շրջան Դիարբեքիի նահանգում, որը համընկնում է Սլիվանի գավառակին: Տեղանվան վերջում հայ. սեռական հոլովի -ա ցուցիչն է:

Ութավի: Գյուղ Ճորոխի միջին ավազանում (տրբ. Ուտավ, Ուտավի): Տեղի գետը դրա անունով է կոչվել: Տեղանվան վերջում հայ. -ավ մասնիկն է և ապա՝ սեռական հոլովի -ի ցուցիչը:

Ուտա: Բնակավայր Վանի նահանգի Բերկրի գավառակում (տրբ. Ուտո):

Ուտիյուն: Գյուղ Զանգեզուրի գավառում, որի անվան վերջում հայ. -յուն ածանցն է:

Բերված տեղանունները (ՀՏԲ) հուշում են լեռների բարձր լինելու, իսկ գյուղերի բարձր տեղում գտնվելու մասին:

Փ

ՓԵՐ: Գյուղ Դերսիմի գավառում (ՀՏԲ): Երբ այդ տեղանունը համեմատում ենք ներքև բերվող Փերա, Փերնակ և Փերլի բնակավայրերի անունների հետ, դրանում առանձնանում է փեր- բաղադրիչը և հայ. սեռական հոլովի -ի ցուցիչը:

Հայկական գրավոր աղբյուրներում փեր- բառ չի հանդիպում: Ամենայն հավանականությամբ այն հնդեվրոպական նախալեզվի *(s)per- «փայտամած, ձող» արմատն է: Մայր լեզվի p հնչյունը հին հայերենում դարձել է նաև փ (ՀԼՊ, էջ 253): Ի դեպ, մայր լեզվի sper -«ոլորել, ծուռ» արմատը «ոլորան» իմաստով առկա է հին հայկական Սպեր քաղաքի անվան մեջ:

Հիշենք Մասյացոտն գավառի Ձողկերտ, Սասունի Ձողուտ, ձող բառի շիվ հոմանիշից կազմված Սալմաստի Շիվա և Մեղրու շրջանի Շիվանի-ձոր հին բնակավայրերի անունները (ՀՏԲ):

Մայր լեզվի per - արմատի փեր- հայերեն տարբերակը նման իմաստով կարելի է առանձնացնել նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Փերա: Գյուղ Խոյի շրջանում:

Փերիլու: Բնակավայր Զանգեզուրում, որի անվան մեջ -ի- հոդակապով հայ. լի «լի» բառն է սեռական հոլովի -ու ցուցիչով:

Փերիձոր: Գյուղ Օլթիի շրջանում և տեղի գետակ:

Փերիմ: Բնակավայր Շուշիի գավառում: Տեղանվան վերջում հայ. -իմ ածանցն է:

Փերինե: Գյուղ Էրզրումի գավառում, որի անվան վերջում հայ. -ին և -է ածանցներն են:

Փերիցիք: Բնակավայր և համանուն գետակ Օլթիի շրջանում:

Փերլի: Լեռ Հայկական պար լեռնաշղթայում, որի անվան մեջ նաև հայ. լի «լի» բառն է:

Փերնաք: Գյուղ և գետակ Օլթիի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -նակ ածանցն է:

Փերոտակ: Բնակավայր Պարսկահայքի Հեր գավառում, որի անվան վերջում հայ. -ոտ և -ակ մասնիկներն են:

Փերսի: Գյուղ Աշտարակի շրջանում: Տեղանվան վերջում հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչից հետո սեռականի -ի ցուցիչն է:

Փերվանա: Բնակավայր Տրապիզոնի գավառում: Տեղանվան մեջ նաև հայ. վան «բնակություն» բառն է:

Փերրի: Ավան Դերսիմի շրջանում: Տեղանվան վերնում հայ. -րի ածանցն է:

Փերուշան: Գյուղ Դիարբեքիի նահանգի Սիլվանի գավառում, որի անվան վերջում հայ. -ուշ և -ան ածանցներն են:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), որոնց կազմում մայր լեզվի պեր-«ձող» արմատի հայերեն փեր- տարբերակն է, մատնանշում են տեղանքում ձողերի հարուստ լինելու կամ փայտով կառուցված տների առկայությունը:

Օ

Օգուհի: Գյուղ Մուշի գավառում (ՀՏԲ):

Այդ տեղանունը ստորև բերվող Օգդար, Օգենե, Օգոր և Օգուզ բնակավայրերի անունների հետ համեմատելիս՝ պարզ է դառնում, որ դրա մեջ առանձնանում է օգ- բաղադրիչը և հայ. -ունք ածանցը քիչ աղավաղված ձևով:

Հայկական գրավոր աղբյուրներում այդ բառը չի հանդիպում:

Կարծում ենք, դա հնդեվրոպական նախալեզվի *og-«աճել, միրգ» արմատն է (Pok.):

Հիշենք Սպերի գավառակի Միրգանս, Մրգանց, Էջմիածնի, Արտաշատի շրջանների Մրգավետ (այժմ՝ Ծաղկավետ), Նոյեմբերյանի Պտղավան, Կոտայքի Պտղնի և Էջմիածնի Պտղուն բնակավայրերի անունները (ՀՏԲ): Մայր լեզվի օգ- արմատը «միրգ» իմաստով մենք տեսնում ենք նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Օգդար: Գյուղ Կիսկիմի գավառակում, որի անվան մեջ հին հայ. -դար «շեղ բարձրության» բառն է (ՀԱԲ):

Օգենե: Բնակավայր Տրապիզոնի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -են և -ե ածանցներն են:

Օգնաբադ: Գյուղ Օլթիի շրջանում (տրբ. Ոգնաբադ), որի անվան մեջ -ան մասնիկից հետո -ա- հոդակապով հին հայ. պատ «շրջան» բառն է:

Օգոգան: Բնակավայր Ղարադաղում: Տեղանվան մեջ օգ- արմատը կրկնված է: Դրանում առկա է նաև -ան ածանցը:

Օգոր: Գյուղ Տաշիր գավառում, որի անվան վերջում հայ. -որ ածանցն է:

Օգուզ: Բնակավայր Մուշի շրջանում: Տեղանվան մեջ նաև հայ. ուզել բայի ուզ- արմատն է «ցանկալի» իմաստով:

Օգուզլի: Գյուղ Կարսի գավառում, որի անվան մեջ նշված ուզ- բառից հետո հայ. լի «լի» արմատն է:

Օգումի: Բնակավայր Էրզրումի շրջանում: Տեղանվան մեջ հայ. ներգոյական հոլովի -ում վերջավորությունն է, ապա՝ սեռականի -ի ցուցիչը:

Օգուս: Գյուղ Մուշի գավառում, որի անվան վերջում հայ. -ուք ածանցն է հին հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Նախալեզվի g հնչյունը հին հայերենում դարձել է նաև k ու p (Օս., էջ 298): Մայր լեզվի օգ-արմատի ոկ- և ոք- հայկական տարբերակները ակնառու են ներքոհիշյալ տեղանուններում:

Օկամ: Ավան Էրզրումի գավառում, որի անվան մեջ նաև հին հայ. ամ-«լի» արմատն է:

Օկամի: Գյուղեր Բասենի և Զավախքի շրջաններում: Տեղանվան մեջ նշված ամ- արմատից հետո հայ. սեռական հոլովի -ի ցուցիչն է:

Օկանց: Արճեշ քաղաքի մյուս անունն է, որի մեջ -անք ածանցն է անվան հոգնակի սեռական հոլովաձևով:

Օկեվոր: Բնակավայր Սպերի գավառակում: Տեղանվան մեջ հայ. -վոր ածանցն է (հմմտ. հոգի և հոգեվոր):

Օկերի: Գյուղ Արդվինի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -եր ածանցն է և ապա՝ սեռական հոլովի -ի ցուցիչը:

Օկոմ: Բնակավայր Բասեն գավառում, որի անվան մեջ նաև մայր լեզվի *om-«թաց, խոնավ» արմատն է (Pok.):

Օկոն: Գյուղատեղի Իջևանի Սևքար բնակավայրի մոտակայքում: Տեղանվան վերջում հայ. -ոն ածանցն է (հմմտ. գործ և գործոն):

Օկու: Բնակավայր Խարբերդի գավառում: Տեղանվան վերջում հայ. սեռական հոլովի -ու ցուցիչն է:

Օկում: Գյուղ Էրզրումի գավառում (տրբ. Ոկումի):

Ոկունիս: Բնակավայր Նոր Բայազետի շրջանում:

Ոկուր: Գյուղ Բասենի շրջանում, որի անվան վերջում հայ. -ուր ածանցն է:

Ոքաղե: Գավառ Տայք նահանգում համանուն կենտրոնով (տրբ. Ոքող): Տեղանվան վերջում հայ. -ալի ածանցն է, որը հանդիպում է նաև -աղի ձևով (հմմտ. Մարդաղի, Դարանաղի):

Ոքդար: Բնակավայր Արդվինի շրջանում: Տեղանվան մեջ նաև հայ. դար «շեղ բարձրություն» բառն է:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք կազմված են մայր լեզվի ոգ-«միրգ» արմատից և դրա հայկական ոկ- ու ոք- տարբերակներից, ցույց են տալիս այդ տեղերում մրգատու ծառերի զերակայությունը:

ՕՂԵԿ: Գյուղ Թորթումի գավառակում (տրբ. Ողեկ, նաև տեղի գետը և լեռները այդ անունն են կրել, ՀՏԲ):

Այդ տեղանունը բաղդատելով ներքև բերվող Օդարկու բլուրի և Օդ-լիկ ու Օդունդա բնակավայրերի անունների հետ՝ ակնառու է, որ դրանում առկա է օդ- և հայ. եկ բառը՝ գալ բայի տարբերակը (հմմտ. դուրեկան «դուր եկող»):

Հին հայերենի ունեցած օդ «կռշիկ» և օդ «օդ, եղանակ» (ՀԱԲ) բառերը իմաստի առումով չէին կարող գործածվել որպես տեղանուն:

Ամենայն հավանականությամբ դա հնդեվրոպական նախալեզվի *od-«բուրել» արմատն է (Pok.): Այդպիսի իմաստ ունեն հայերենի բոլոր արմատի բուր- տարբերակից կազմված Էրզրումի գավառի Բուրան, Օլթիի շրջանի Բուրինկիրձ, Մոկսի Բուրանդ և Կաղզվանի Բուրուտ գյուղերի անունները (ՀՏԲ):

Մայր լեզվի օդ-«բուրել» արմատը մենք տեսնում ենք նաև ստորև բերվող տեղանուններում:

Օդարկու: Բլուր Տավուշի մարզում, որի անվան մեջ հին հայ. արկ «ձգել» բառն է (հմմտ. ահարկու):

Օդել: Գյուղ Վանի նահանգի Կարճկանի գավառակում: Տեղանվան մեջ -եղ ածանցի հին -ել տարբերակն է:

Օդլիկ: Բնակավայր Բայազետի գավառում, որի անվան վերջում հայ. -լիկ մասնիկն է (հմմտ. հաստլիկ, կարճլիկ):

Օդմսո: Գյուղ Վանանդ գավառում (տրբ. Ոդմսու, Օթմուս): Կարծում ենք, այս տեղանունը կազմված է մայր լեզվի օդ «բույր» և օմ «թաց, խոնավ» (տես հաջորդ բաժինը) արմատներից հին հայ. հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով: Այն նշանակում է «խոնավ բուրմունքով»: Մեռական հոլովում օ հնչյունը սղվել է՝ ստանալով այդ հոլովի -ո կամ -ու ցուցիչները:

Օդունդա: Բնակավայր Ախալցխայի շրջանում, որի անվան վերջում հայ. -ունդ ածանցն է և ապա՝ սեռական հոլովի -ա ցուցիչը:

Մայր լեզվի d հնչյունը հին հայերենում դարձել է նաև թ ու տ (Օս., էջ 298):

Տվյալ օդ- արմատի հայերեն օթ- և օտ- տարբերակները մենք տեսնում ենք ներքև բերվող տեղանուններում:

Օթենց: Գյուղ Վանի գավառի Հայոց ձոր գավառակում:

Օթման: Բնակավայր Վանանդ գավառում: Տեղանվան մեջ -մն ածանցն է, որը սեռական հոլովում դարձել է -ման (հմմտ. կողմն և կողման):

Օտակ: Գյուղ Կիսկիմի շրջանում:

Օտանա: Բնակավայր Սուրմալուի շրջանում, որի անվան վերջում հայ. ան հոգնակիակերտ ածանցն է և ապա՝ սեռական հոլովի -ա ցուցիչը:

Օտաշա: Լեռ Արածանիի վերին հոսանքի աջ կողմում: Տեղանվան վերջում հայ. -աշ ածանցն է և հետո՝ սեռական հոլովի -ա ցուցիչը:

Օտավգան: Լեռ Արդահանի շրջանում, որի անվան վերջում հայ. -ավ և -կան մասնիկներն են:

Օտեր: Գյուղ Կիսկիմի գավառակում:

Ուտոք: Ավան Թորթումի գավառակում (տրբ. Ուտոգ), որի անվան վերջում հայ. -ոք ածանցն է:

Օտոնա: Բնակավայր Սուրմալուի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ոն ածանցն է և սեռական հոլովի -ա ցուցիչը:

Բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք իրենց հիմքում ունեն մայր լեզվի օդ - «բուրել» արմատը և դրա հայերեն օթ- ու օտ- տարբերակները, մատնանշում են այդ բնակավայրերի ու լեռների բուրումնավետ օդի առկայությունը:

ՕՍԵՆ: Գյուղեր Դիարբեքիի նահանգի Սիվանի և Մալաթիայի գավառներում (ՀՏԲ):

Ստորև բերվող Օմա, Օմանա, Օմար և Օմարան բնակավայրերի անունների հետ համեմատելուց պարզ է դառնում, որ այդ տեղանվան մեջ առանձնանում է օմ- բաղադրիչը և հայ. -եր հոգնակիակերտ մասնիկը: Հայկական գրավոր աղբյուրներում օմ- բառ չի հանդիպում:

Կարծում ենք, այն հնդեվրոպական նախալեզվի *om-«թաց, խոնավ» արմատն է (Pok.):

Այդպիսի իմաստ ունեն Վանի նահանգի Կարկառի գավառակի Թացոն (տրբ. Թացու), Ուրմիայի շրջանի Թացու, Դերսիմի Թաներ (այն թանալ «թացացնել» բայի արմատն ունի իր մեջ) և այլ հին բնակավայրերի անուններ (ՀՏԲ):

Տվյալ օմ- արմատը «թաց, խոնավ» իմաստով հանդիպում է նաև ներքոհիշյալ տեղանուններում:

Օմա: Գյուղ Տրապիզոնի գավառում, որի անվան վերջում հայ. սեռական հոլովի -ա ցուցիչն է:

Օմանա: Բնակավայր Արդվինի շրջանում: Տեղանվան վերջում հայ. -ան ածանցն է և հայ. սեռական հոլովի -ա ցուցիչը:

Օմար: Գյուղ Մալաթիայի գավառում, լեռ Վասպուրականում և լեռնանցք Մոսվի լեռնաշղթայում: Տեղանվան վերջում հայ. -ար ածանցն է:

Օմարան: Բնակավայր Դիարբեքիի գավառում: Տեղանվան վերջում -արան ածանցն է:

Օմելու: Գյուղ Բասենի շրջանում, որի անվան մեջ հայ. -ելի ածանցն է սեռական հոլովի -ու վերջավորությամբ:

Օմեր: Բնակավայրեր Դիարբեքիի և Մալաթիայի գավառներում:

Օմերամ: Գյուղ Բիթլիսի նահանգի Գենջի և Արդանամադենի գավառներում: Տեղանվան մեջ հայ. -եր ածանցն է և հին ամ -«լի» արմատը:

Օմերին: Բնակավայր Բաբերդի շրջանում:

Վերը բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք կազմված են մայր լեզվի օմ-«խոնավ, թաց» արմատից, մատնացույց են անում տեղի խոնավ լինելը:

ՕՐԿՈՎ: Գյուղ Սուրմալուի գավառում, որի անվամբ կոչվել է մոտի Հայկական պարի լեռնանցքը (ՀՏԲ):

Այդ տեղանունը բաղդատելիս ներքև բերվող Օրկու և Օրկնոց բնակավայրերի անունների հետ պարզվում է, որ դրանում առանձնանում է օրկ- բաղադրիչը և հայերենի գործիական հոլովի -ով վերջավորությունը:

Հայկական գրավոր աղբյուրներում նման բառ չի հանդիպում: Ամենայն հավանականությամբ այն հնդեվրոպական նախալեզվի *ork-«պաշտպանել, կողպվել, փակել» արմատն է (ՀՄԲ, տես որմ):

Օրկով տեղանունը նշված «փակ» իմաստով հիշեցնում է Վանի գավառի Փակ, Մուշի Փակ, Դերսիմի Փականի, Խարբերդի Փակեր և այլ բնակավայրերի անուններ (ՀՏԲ), որոնք վկայում են բնակավայրի տեղանքի փակոդ դիրք ունենալու մասին: Օրկով գյուղը գտնվել է համանուն լեռնանցքին առընթեր, որի պաշտպանելու և պետք եղած դեպքում փակելու գործը կատարել են օրկովցիները:

Մայր լեզվի օրկ- արմատը նշված իմաստով կարելի է առանձնացնել նաև ստորև բերվող տեղանուններում:

Օրկլու: Գյուղ Նոր Բայազետի շրջանում, որի անվան վերջում հայ. լի «լի» բառն է սեռական հոլովի -ու ցուցիչով:

Օրկլոնգ: Բնակավայր Մուշի գավառում: Տեղանվան մեջ հայ. -ն և -ոց մասնիկներն են:

Օրկլկետ: Լեռ Արդահանի շրջանում, որի անվան մեջ -ո- հոդակապով հին հայ. կետ արմատն է, որն ունի նաև «եզր» իմաստը (ՀԱԲ):

Բերված տեղանունները (ՀՏԲ), որոնք կազմված են մայր լեզվի օրկ-«փակել» արմատից, մատնանշում են տեղանքի փակող դիրք ունենալը:

Սույն աշխատության մեջ լեզվական քննության են արժանացել մոտ երեք հազար հին հայկական տեղանուններ, որոնց արմատները հայկական գրավոր աղբյուրներում չեն հանդիպում: Դրանք մենք տեսնում ենք հնդեվրոպաբանների կողմից վերականգնված նախալեզվի արմատների շարքում:

Առաջին հերթին խիստ ակնառու է այն, որ այդ վերականգնումների մի ստվար մաս նույնությամբ առկա է հայկական տեղանուններում: Դա ապացույց է նրանց վերականգնումների ճշմարտացի լինելու համար:

Հայ լեզվաբանների կցկտուր փաստերի հիման վրա բացահայտումները, թե մայր լեզվի որ հնչյունը հին հայերենում նույնությամբ մնալուց բացի ուրիշ ինչ տարբերակներ է ձեռք բերել, հաստատվում են բերված բազմաթիվ հին տեղանուններում դրանց առկայությամբ:

Հնդեվրոպական նախալեզվի արմատներով կազմված հայկական տեղանունները, որոնք վերաբերում են մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջերին և 3-րդին, ինքնին վկայում են, որ մայր լեզվի կրողների մեծ մասի լեռնաշխարհից արտագաղթելուց հետո, մնացածները սկսել են նստակեցության անցնել և աստիճանաբար ձևավորել նոր լեզու: Դա հնագույն հայերենն է:

Վ. Իվանովի և Թ. Գամկրելիձեի առաջ քաշած այն վարկածը, թե նախալեզուն կրողները զբաղեցրել են Հայկական լեռնաշխարհը և հարակից որոշ տարածքներ, կարծում ենք, բերված փաստերով ավելի հաստատուն է դառնում:

Հնդեվրոպաբանների մոտ տարածում գտած այն տեսակետը, թե Հայկական լեռնաշխարհի տեղանունները ոչ հնդեվրոպական բնույթ ունեն, կարծում ենք, չի հաստատվում: Դրանք բոլորը հնդեվրոպական մայր լեզվի արմատներով են կազմված:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Pok. - *Pokorny I.* Indogermanisches etymologisches Wörterbuch, 1-2, Berlin-München, 1959-1969.
- ИЯИ - *Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов,* Индоевропейский язык и индоевропейцы, т. 1,2, Тбилиси, 1984.
- Оч. - *Г. Б. Джаукян,* Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967.
- ՀԱԲ - *Հ. Աճառյան,* Հայերեն արմատական բառարան, 1-4, Երևան, 1942-1962:
- ՀԼՊ - *Գ. Բ. Ջահուկյան,* Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:
- ՀԼԾ - *Գ. Բ. Ջահուկյան,* Հին հայերենի վերջածանցների ծագումը, Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պրակ 2, Երևան, 1998:
- ՀՍԲ - *Գ. Բ. Ջահուկյան,* Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010:
- ՀՏԲ - *Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան,* Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, հ. 2, Երևան, 1988, հ. 3, Երևան, 1991, հ. 4, Երևան, 1998, հ. 5, Երևան, 2001:
- ՀՏՊ - *Վ. Ն. Խաչատրյան,* Հայաստանի տեղանունները հայ պատմիչների երկերում, Երևան, 2015:
- ՀՏՍ - *Վ. Ն. Խաչատրյան,* Հայաստանի տեղանունները սեպագիր աղբյուրներում, Երևան, 2012:

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ

Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝
Մ. Է. Ճանճապանյանի

Պատվեր՝ 2:
Տպաքանակ՝ 100:
Գինը՝ պայմանագրային:

«Նաիրի» հրատարակչություն ՓԲԸ
Երևան-9, Տերյան-91